



« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Եւ այդ կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւտե- նական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞նչ հոգին չճարգմանէր , չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած յձին բնու- թիւնը չելածի պէս պիտի ըլլար :

Ճ. ՄԻՇԼԵ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Վենետիկի Մխիթարեանները	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ
Նրկու քիւթուած	ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ
Գերմանիոյ քաղաքականութիւնը Տաճկանայաստանում եւ նորա նշանակութիւնը Հայերի համար	} Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԴԵՕԶԵԱՆ
Հայդերք.—Նարեկացին	
Մեր գրացիները.—Եգիպտոս	ՎԱՀՐԱՄ ՍՎԱՅԵԱՆ
Ջանգը	ԱՐՍԵՆ
Պ. Գրիգոր Չանչեանի յարեւանը	ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ
Թրանսփալ եւ Անգլիա	Ա. Չ.
Հայ գրականութիւնը Եւրոպայի մէջ	
Քիթապճի խան եւ 1900ի ցուցահանդէսին պարսկական բաժինը	
Լուրեր	
Պատրիարքին հրատարականը	
«Անահիտ»ի դերը	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

«Անահիտ»ի երկրորդ տարեշրջանին մէջ պետի հրատարակինք ՎԱՐԴ ԵՒ ՍՈՍԱԿԻՆ ՎԵՐՉԻՆ մասը, զոր ստիպուեցանք յետաձգել տեղի անձկութեան պատճառով, նմանապէս՝ Միգրի-եմիլի կենսագրութեան շարունակութիւնը, եւ կէօթէի նուիրուած յօդուածը, զոր ծանուցած էինք:

Յառաջիկայ թուոյն հետ պիտի տանք նաեւ ԱՆԱՀԻՏԻ Առաջին տարեշրջանին նիւթերու ծանկը:

Գրասէր մը նուիրեց մէկ տարեկան ԱՆԱՀԻՏ՝ Գահրէի ազգային վարժարանին համար:
 Պ. Յրանտուա Սափրիչ նուիրեց մէկ տարեկան ԱՆԱՀԻՏ՝ Պուքրէշի ազգային վարժարանին համար:

ՎՐԻՊԱԿ

«Պուստոստիքը եւ Թրքահայերը» արտոյտով յօդուածին մէջ («Անահիտ», թիւ 11), կ'ուզէինք մանրամասնութեան սխալ մը: Ոչ-համալսարանականներու մէջ դասուած էր Մ. Նալբանդեանցը, որ Ա. Բեթերսպուրկի Արեւելեան Լեզուաց Համալսարանին ընթացքը կանոնաւորապէս կատարած է:

Գեղարուեստի էութիւնը եւ նպատակը («Անահիտ», թիւ 11) էջ 337, Ա. սիւնակ, վերջընթեր տող, «մեր» պէտք է ուղղել «մեկի» էջ 340, Բ. սիւնակ, 39րդ տող, «երեւակայութիւնը», պէտք է ուղղել «իրականութեանը» էջ 341, Ա. սիւնակ, տող 16, «րեւակիւմը», պէտք է ուղղել «րեւակ-իտեւակիւմը»:

Ուսումնասիրութիւն Միգրիեմիլի վրայ («Անահիտ» թիւ 9-10), էջ 293, Ա. սիւնակ, տող 39, «Քրաքովիոյ», պէտք է ուղղել «Վարսովիոյ»:

«Գարավերջի Յրանտան» («Անահիտ», թիւ 5-6) էջ 157, ա. սիւնակ, 41րդ տող, «խորհրդականներու», պէտք է ուղղել «խորհրդարանականներու» էջ 158, Բ. սիւնակ, 2րդ տող, «ամբողն», պէտք է ուղղել «ամբողջ» նոյն, 3րդ տող, «ներքիջ», պէտք է ուղղել «ներքին» նոյն, 5րդ տող «ուղղութիւն», պէտք է ուղղել «ուղղութիւն» նոյն, 8րդ տող, «կը բանձանք» պէտք է ուղղել «կը բաղձանք»: — «Անահիտ», թիւ 5-6, էջ 180, Բ. սիւնակ, 7րդ տող, «դոնողները» պէտք է ուղղել «դոողներ» նոյն, էջ 180, Բ. սիւնակ, 43րդ տող, «ցեղակից», պէտք է ուղղել «կիլիկիոյ» նոյն, էջ 186, Ա. սիւնակ, 6րդ տող, «արձանագրութեան», պէտք է ուղղել «արձանագրութեան»:

ԱՆԱՏԻՏ

ՀԱՆՏԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1899

ԹԻԻ 12

Վ Ե Ն Ե Տ Կ Ի Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ն Ե Ր Ը

Ռըլիւ Անսիֆորեսիին մէջ Հայոց արդի գրականութեան մասին վերջերս հրատարակած յօդուածիս առիթով, Բագնալիսյը հետեւեալ գիտողութիւնը կը ներկայացնէր.

«Յօդուածագիրը մինչև Ալիշան կը հասցընէ Վենետիկի մատենագրաց թիւը, եւ անկէ յտուջ չերթար, եւ Բաշալեանի, Շահնազարի եւ Սվաճեանի շամանդաղին(?) մէջ ընկղմելով, անկարող կ'ըլլայ յիշելու Ալիշանէն վերջը Ս. Ղազարի միաբաններու մէջ եղած ուրիշ հեղինակներն, որոց ամբողջ կեանքը նուիրուած է ի վարդացունս հայկական դպրութեան եւ մատենագրութեան»:

Եւ մեծարգոյ Հ. Երեմեանին համար որ այս տողերը կը գրէր, «հայ գրականութեան սերահար արբանեակը(!)», — ես եմ, աւա՛ղ, այս խեղկատակ անուանակոչութեան ենթական, — մեղապարտ մոռացման այդ յանցանքը գործած է, պարզապէս որովհետեւ «անկողմնակալ եւ ուղղադատ գրչէ զուրկ է»:

Նեղութիւնը պիտի յանձն չառնեմ բացատրելու Հ. Երեմեանին թէ Բաշալեանի, Շահնազարի եւ Սվաճեանի պէս գրագէտներու արժէքն անտեսելը, — բան մը զոր այսօր յետին ժամկոչը պիտի չհամարձակէր ընելու, — Ս. Ղազարի վանքին համար անօրմըն է, եւ թէ այդ իրողութիւնը ինքնին, (եթէ զայն թանձր անհասկացողութեան մը չվերագրենք), Բագնալիսի քննադատին քով կ'ապացուցանէ գերազրական աստիճանով մը գոյութիւնը ճիշդ այդ «անկողմնակալ եւ ուղղադատ» գրչի պա-

կասին զոր Հ. Երեմեան կը ճգտի վերագրել ուրիշներուն: Պիտի ըսեմ միայն թէ ուսումնասիրութեան մէջ Վենետիկի Մխիթարեանց գրականութեան բաժինը Ալիշանէն ասդին չչարունակելու պատճառը պէտք է փնտոել ոչ թէ ո եւ է կողմնակալութեան մէջ — որովհետեւ յիմարաբար կը սիրեմ Վենետիկի վանքը եւ զայդ ապացուցած եմ մէկէ աւելի առիթով, ուրիշներէ մինչև իսկ վենետկամոլութեան մեղադրանքն ընդունելու աստիճան — այլ միայն այն պարտականութեան մէջ զոր ունիմ ճշմարտութեան հանդէպ եւ որ զիս կը ստիպէ Ալիշանին վրայ կանգ առնել՝ երբ Ս. Ղազարի գրականութեան պատմութիւնը կ'ուրուագծեմ: Եւ այդ ալ Մխիթարի հաստատութեան համար ունեցած յարգանքիս մէկ ապացոյցն է նորէն, որովհետեւ եթէ Ալիշանէն ասդին Մխիթարեանց գրականութեան վրայ խօսէի, պիտի պարտաւորուէի անախորժ բաներ ըսել, եւ հայրենակիցներուս վրայ չեմ սիրեր անախորժ բաներ շսել երբ օտար հասարակութեան մը կ'ուղղեմ խօսքս:

Այո՛, յիմարաբար կը սիրեմ Վենետիկի վանքը, եւ ինձի համար շատ հաճելի է որ առիթը կը ներկայանայ իմ ամենէն մեծ հիացումներէս մէկը բացատրելու: Այս բացատրութենէն թերեւս օգտուին այժմեան միաբանութեան մէկ քանի անդամները որոնք այն աստիճան տարբեր են իրենց փառաւոր նախորդներէն որ վախնամ եւ ոչ իսկ կարող ըլլան իսկապէս ըմբռնել անոնց գործը, եւ յայտնապէս պէտք ունին որ իրենց յստակօրէն ցուցուի թէ ի՛նչ եր Վենետիկի վանքը եւ ի՛նչ է այսօր:

Այդ Սերասաացի արքան որ թրքացած փոքր Ասիային խաւարչտին խորերէն , հսկայ գաղափարի մը հետ միայնակ , հազար դժուարութիւններ կարելով եկաւ Ներոպայի մէջ ուսումնական միաբանութիւն մը հիմնել՝ հայ միտքը եւ հայ կեանքը վերանորոգելու համար , մեծ հայրենասէր մը եւ մեծ դիւանագէտ մըն էր , այնքան հզօր ուղեղով որքան սրտով : Իրեն չափ մեծ մէկ քանի տիպարներ տուած է մեր ցեղը , իրմէ աւելի մեծը չեմ գիտեր : Ինչ որ ըրած էին Սահակ , Մեսրոպ ու Վասնշապուհ թագաւորը՝ Գ . դարուն , Մխիթար նոյնը կրկնեց միմիայն իր անձնական ճիգովը . եւ չափազանցութիւն չէ ըսել թէ Մխիթարի ծրարագիրը աւելի ընդարձակ էր . տեսնելով հայրենի երկրին մէջ տիրող քաղաքական , մտաւորական , բարոյական մեռելութիւնը , Մխիթար կ'ուզէր , օտար երկրի մը ազատ պայմաններէն օգտուելով , գոնէ մտաւոր կեանքի մը վերարժարձուած սկսիլ հայ ցեղին համար , ապահով որ այդ մտաւոր յարութիւնը ազգին ամբողջական վերանորոգմանը նախակարողեալը սիրտի ըլլար : Իր նպատակն էր հայ արդի միտքը հաղորդակցութեան գնել նախ իր անցեալին հետ , յետոյ՝ եւրոպական ընդհանուր քաղաքակրթութեան հետ : Կրօնաւոր մըն էր , կրօնական գաղափարները դեռ մեծ տաւրածուս ունէին իր ատենը , եւ իր գործունէութեան մէջ կրօնական ձգտումը բնականաբար ամենամեծ բաժինն ունի (ինչպէս Սահակի ու Մեսրոպի գործին մէջ) . բայց պէտք չէ այդ հանգամանքէն խաբուել . իր առաջին քայլէն իսկ կարելի է զգալ որ Մխիթարի գործը «գուտ կրօնական» չէր . Մխիթար կ'ուզէր ազգին քաւրոյական ուժը նորոգել եւ բազմապատկել , ու կը հաւատար թէ կրօնական զգացման զարգացումը (եւ իր ատենը , Արեւելքի մէջ մանուշակ , ճիշդ էր այս գաղափարը) ամենակարեւոր ստարն էր այդ նպատակին հասնելու համար : Սկսաւ տպագրել փոշիի մէջ կորուած հին ձեռագրերը , որոնք մինչեւ այն ատեն վանականներու միայն ծանօթ մնացած էին , եւ որոնցմէ , երբ ժողովուրդը զանոնք ճանչնար , պիտի յառնէին հայ ցեղին պատմութիւնը , շեղուէն , գրականութիւնը , ամբողջ արդի հայ կեանքը : Հիւսեց կրօնական քերթուածներ , շարադրեց հայկազեան բառարան մը , յօրինեց հայերէնի քերականութիւն մը , եւ պատուիրեց իր աշակերտներուն որ հայ ժողովրդին մէջ ուսուծը ,

ընթերցանութիւնը տարածեն , կարգալու գիրք տան անոր , զարգացեալներուն՝ գրաբար մատենագրութիւն մը , եւ հասարակ ժողովրդին՝ աշխարհաբար (իր ատենը ուրիշ կերպ չէր կրնար մտածել) : Զգալով սակայն , — եւ ասի իր հանձարին ամենէն կարեւոր գծերէն մէկն է , — որ աշխարհաբարը պիտի ըլլար վերջ ի վերջոյ տիրական լեզուն , յանձնարարեց որ անոր քերականութիւնը որոշագծեն , անոր բառարանը կազմակերպեն ու յղկեն : Այսպէս , անձամբ ու բուրազեց ամէն ինչ որ ըրինիլ յաջորդները : Ու , ճարպիկ , իր Հաստատութեանը գիրքը տեւական դարձընելու համար , կաթողիկոսութիւնն ընդունեցաւ , (ուրիշ կերպով չէր կրնար յաջողիլ Խտալիոյ մէջ ,) Խտալական կառավարութեան պաշտպանութիւնը վաստակեցաւ , եւ թրքահպատակութիւնը պահելով իր վանքին՝ զայն տեսակ մը անկախութեամբ օժտեց , եւ Խտալացման վտանգին դէմ ապահովեց :

Ու այն սահն , Վարպեալին պատրաստած այդ բեղուն միջավայրին մէջ , երեւան եկան այն վիթխարի անհատականութիւնները , որոնք Վենետիկի վանքին տուին իր վերջնական , իր լիակատար , իր փառապանծ նշանակութիւնը , — Չամչեան , Ինճիճեան , Աւգեր , Բագրատունի , Հիւրմիւզ , Ալիշան : Հայկազեան բառարանը , զոր խումբ մը Մխիթարեաններ կերտեցին , Չամչեանի Հայոց պատմութիւնը , Ինճիճեանի հընարխօսական , աշխարհագրական ուսումնասիրութիւնները , Աւգերի լեզուագիտական աշխատութիւնները , Բագրատունիի եւ Հիւրմիւզի թարգմանութիւնները , Ալիշանի բանաստեղծութիւնները , ամենէն հզօր արտայայտութիւններէն են հայ ուղեղին : Մէկ հարուածով , մեր ցեղը , այդ հսկաներուն շնորհիւ , կը բարձրանար ամենէն քաղաքակիրթ ազգերուն մակարդակին : Մտաւորական ուժը զոր ցոյց տուած են Չամչեան մը , Բագրատունի մը կամ Ալիշան մը , զիրենք հաւասար կը կացուցանէ եւրոպական մտաւորականութեան ազնուազոյն դէմքերուն : Մխիթար եւ իր անմիջական յաջորդները իրենց ձեռքովը , ոչինչի ու պարապի մէջ , — որովհետեւ Հայաստանի վանքերուն , Պոլսոյ կամ Թիֆլիսի մէջ այդ սկզբնական շրջանին միեւնոյն նպատակով հասարուած աշխատութիւնները , երբեմն շահեկան , բայց ընդհանրապէս աղօտ , անմեթոտ նախախորձեր են լոկ , եւ ինքնին շատ ուշ պիտի կարենային ընդլայնուել եւ կատարելագործուել եթէ Վենետիկի Մխիթարեանց

գործունէութիւնը իր շլացուցիչ փայլովը , գիտակից ու սոււական զօրութեամբը , օրինակ եւ քաջարիւր չհանդիսանար — իրենց ձեռքովը յօրինեցին հայ ժողովրդին համար պատմութիւն մը , աշխարհագրութիւն մը , բառարան մը , եւ գրական վերածունդի մը հիմերը գրին :

Այսպէս , արգի Հայութեան մտքին զարգացման ու մանաւանդ եւրոպացման գործին մէջ , Միխիթարեանց դերը առաջին տեղը կը բռնէ , թէ՛ ժամանակագրական կարգով եւ թէ՛ կարեւորութեամբ : Ամենէն նշանակելի քայլը զոր առին այդ հայրենասէր արուեստագէտները , լայնցնելը եղաւ մտաւորական արտադրութեանց շրջանակը , զոր մեր նախնիք բաց ի (մասամբ) Սորենացիէն , կրօնական , միստիքական ազդեցութեան մէջ տարածելու ժօրէն սեղմած էին . արուեստասէր ու գիւցազնական Իսալիան իր ոգին փոխանցեց մեր վանականներուն , եւ — արաստովոր երեւոյթնոր նոյն իսկ Եւրոպայի մէջ հաղուադէպ է , եթէ ոչ անգոյ — այդ վանքի մարդիկը իրենց սքեմին տակ ունեցան ոչ թէ Փրանսուսաւ Ասիգի մը կամ Ս . Թոմաս Ագոստինացիի մը հոգին , այլ Բեթարքայինը , Տանթէինը , նոյն իսկ Թասսոյինը (եւ այդ երեւոյթին մէջ մեր ցիղին ազատ ու ըմբոստ ձգտումին , գեղեցկութեան ու կեանքի անկաշկանդ պաշտումին մէկ ապացոյցը կարելի է տեսնել) : Պահելով հանդերձ կրօնական խորքը , որ իրենց էութեան հիմունքը կը կազմէր , այդ խորքին վրայ ասղնազործեցին հայրենասիրութեան ու գեղեցկասիրութեան ամենէն շքեղ ծաղիկները , (եւ Բագրատունիին ու Հիւրմիւղին համար , թերեւս անճիշտ չըլլայ ըսել թէ Գեղեցկութեան ու Հայրենիքին սէրը , անկօրէն հզօր , իրենց գործունէութեան , իրենց արտադրութեանը մէջ ջնջելու չափ սովորունեցուցած է այդ կրօնական խորքը) : «Աշխարհական» տարրը «մարդկային» տարրը մտցուցին հայ գրականութեան մէջ , ամէն բանէ վեր դասեցին Գեղեցկին սէրը , ըմբոսեցին եւ նոյն իսկ ընդգրկեցին հեթանոսականը՝ իր գեղեցկութեանը համար : Չամչեանի պատմութիւնը , ա՛յնքան տարբեր մեր հին պատմագիրներուն միստիքական , կրօնամոլական կամ եղերերգական ու միշտ Աստուածաշունչով տոգորուած ըմբռնումէն ու ոճէն , կը ներկայացընէ հայ Տիտոս-Լիվիոսի մը վեհաշուք աննականութիւնը : հեղինակը — մեր երկրորդ Սորենացին , Սորենացի մը աւելի հասուն ու կա-

տարեալ — իրեն զլիսաւոր նախասակ ունեցած է սպացուցանել հայ ժողովրդին թէ ան մեծ է եղած իր անցեալին մէջ , եւ յօրինած է իր Հայոց պատմութիւնը , որ ծայրէ-ծայր գիւցազներգութիւն է քան պատմութիւն , եւ ուր հեղինակը կը ցուցընէ հայ ժողովուրդը յաճախ ոչ այնպէս ինչպէս եղած է իրօք , այլ այնպէս ինչպէս իր խորիս ու վեհ հոգին — հաճակ Հոռոմայեցի — կը բաղձար , կ'երազէր որ եղած ըլլար ան . հին պատմիչներուն ու ժամանակագիրներուն յաճախ չոր ու տարտամ վիպումը իր էջերուն մէջ կ'ընդլայնի դասական պերճախօսութեան մը շունչովը , մերթնոյն իսկ կը ճօխանայ մասցածին հերոսութիւններով , ստեղծուած յաղթանակներով , երեւակայական մեծութիւններով . իր Հայերէ հսկայական համեմատութիւններ կ'առնին , Աքիլլէսեան ձեւեր ունին , Կիկիբոնի ոճով կը ճառեն : Այդ վիթխարի գործին մէջէն , արգի Հայութիւնը տեսաւ իր անցեալը՝ մեծերուն մէջ մեծագոյն , անցեալ մը վեհափառ ուր Հայկը , Արամը , Տիգրան Ա . ը , Վահէն , Արտաշէսը , Տիգրան Բ . ը , Արգաթը , Տրդատը , Վարդանը եւ դեռ այնչափ զէմքեր որ հիմա մեր ժողովրդին արիւնին ու ծուծին մէջ անցած են , կը ցցուէին աւելի հզօր ու գեղեցիկ քան ամենէն հոշակաւոր հերոսները տիեզերական պատմութեան եւ հայ ազգին կուսային անցեալին մէջ ազգերուն մեծագոյնը եղած ըլլալու պատրանքը : Հայ ժողովրդին իբրև ազգ վերածնութեան երեւոյթին մէջ Չամչեանի այդ գործին կատարած դերը անազին , հիմնական , տիրական է : Անշուշտ անոր կը պարտինք մեր ազգային քաղաքականութեան կարգ մը սխալներն ալ (եւ մանաւանդ այն մեծամտութիւնը , իրականին ճշգրիտ զգացումն ունենալու անկարողութիւնը զոր ցոյց տուինք) արգիւնք այն վտանգաւոր յաւակնոտութեանը զոր անիրական մեծութիւններու հաւատքը կը բերէր . բայց միանգամայն անոր կը պարտինք ամէն ինչ որ ենք այսօր , մեր բարձրացումը դարաւոր լուծի տակ ստրկացումէն , մեր ամբողջ այս դարուն մէջ ունեցած ձրգտումը դէպ ի ազնուացում , դէպ ի ազատագրում , դէպ ի մեծութիւն . եւ Թուրքին ու Պարսկին գարշապարին տակ տափակցած , սմբած , սքլած Հայը որպէսզի ցնցուէր իր անկումէն ու ոտքի կարենար ելլել ու դէպ ի լոյսը ցցուիլ , այդ մեծ հպարտութեան , այդ խոշոր հաւատքի շեշտը անհրաժեշտ էր : Չամ-

չեան եղաւ Բանաստեղծը որ հարկաւոր է որ պէսզի մեռած ցեղ մը վերկենցազի . արգի Հալութեան ստեղծողն է ան . — Աբովեանին հետ, որ ուրիշ ճամբով, նուազ ընդարձակ բայց աւելի կենդանի գործով մը, միեւնոյն զերը կատարեց :

Ինձիճեան ըրաւ Հայաստանի աշխարհագրութեան համար ինչ որ Չամչեան պատմութեան համար ըրած էր : Իր ժամանակին մէջ դատուելով, Ինձիճեանի ուսումնասիրութիւնը Հայաստանի հին ու նոր աշխարհագրութեան վրայ, կատարեալ գիտական գործ մըն է : Ու կարելի է ըսել որ Ինձիճեան հիմնադիրն է մեր մէջ գիտական ոգւով ուսումնասիրութեանց, զոր յետոյ Վիեննայի Մխիթարեանք եւ ուսանայ բանասէրները ստանձնեցին եւ ընդարձակ կատարելագործման մը հասուցին :

Չեմ ծանրանար այն բաղմամբիւ բառարաններուն վրայ զոր այդ առաջին Մխիթարեանք յորինեցին, սկսեալ Հայկազեան մեծ բառարանէն մինչեւ Մ. Աւգերի Առձեռն բառարանը, Յ. Աւգերի անգլո-հայ, ֆրանգո-հայ եւ ուրիշ բառարաններէն մինչեւ Նորայր Բիւզանդայիի հրաշակերտը, բոլոր այդ մեքենական աշխատութիւնը որ մեզի զիւրացուց մեր լեզուին կազմակերպումը եւ օտար լեզուներու եւ զըրականութեանց հետ մեր հաղորդակցութիւնը : Չեմ ծանրանար դարձեալ հայերէն հին ձեռագիրներու հրատարակութեանց վրայ . կէս դարու ընթացքին մէջ, Վիեննայի վանքը ամբողջ անցեալ մտաւորականութիւն մը վերակենդանացուց, ազգին տալով (հրատարակութեամբ մը որ անշուշտ իր շատ մը թերութիւնները ունի՝ ինչպէս ամէն առաջին հրատարակութիւն) մեր հին հեղինակներուն պատմագրութիւնները, բանաստեղծութիւնները, մեկնութիւնները, թարգմանութիւնները : Կ'ուզեմ հասնիլ ամենէն փափուկ, ամենէն ազնուական, ամենէն թանկագին սարրին զոր Վիեննայի վանքը արտադրեց, — «արուեստագէտ» տարրը : Բագրատունի, Հիւրմիւզ եւ Ալիշան կերպարանափոխեցին (կարելի է ըսել) մեր ցեղը, ու այն գեղջուկ ու սարուկ խուժանէն որ եղած էինք մենք՝ Թուրքին տակ, իրենց գործովը եւ այդ գործէն ծնած գեղեցկագիտական բովանդակ շարժումովը, բարձրագոյն գեղեցկութիւններն ըմբռնելու եւ արտադրելու ատակ ժողովուրդ մը հանեցին : Աւելի լայնաճաշակ եւ ազատամիտ քան իրենց Յ. դարուն նախորդները, որունք իրենց ժամանակին ոգւովը տոգորուած, յոյն ու ասորի

մտածման միայն կրօնական արտայայտութիւնը ճանչցուցին իրենց ժողովրդին, Բագրատունի եւ Հիւրմիւզ հայացուցին Արեւմուտքի հին ու նոր գրականութեանց ամենէն կարեւոր հրաշակերտները, առանց խտիր դնելու քրիստոնէականին ու հեթանոսականին, աշխարհականին ու կրօնականին միջեւ . ընդհակառակն, ակներեւ ձգտում մը կը գտնենք իրենց քով զէպ ի զուտ, ազատ, մարդկային Գեղեցիկը, եւ կարծեմ թէ ու եւ է անպատկառութիւն չենք գործեր այդ երկու ազնիւ ու մաքուր զէմբռուն յիշատակին հանդէպ եթէ յայտարարենք թէ անոնք ամէն բանէ առաջ Հեքսապոսներ եղան, Հեղիններ, ու «ատտիկեան» ոգին թըրքական ազդեցութենէն թանձրացած, ապուշցած, լըրճուած մեր ժողովրդին մէջ ներարկեցին . այդ է իրենց մեծ ինքնաստպութիւնը եւ արժանիքը : Գեղեցիկին սէրը տարին մինչեւ այն աստիճան որ քրիստոնէական վանքի մը ամօթխածութիւնը արհամարհելով, առանց ու եւ յապուման հրատարակեցին Իլիախանը, նոյն իսկ իր այն հատուածներով ուր Սրամազը, «անոյշ փափաքէն» բռնուած, կը ձայնէ Հիւրային՝

Անդըր քունել երթիցուք, զի քաղցրացան
 [քեզ անկողինք . . .

ու Վերգիլի Հոլոերգակաւեմը, ուր Կորիզոն հովիւր կը հառաչէ Ալեքսիս «չքնադագեղ» պատանիին համար. (կուստփայլ Հ. Երեմեանին օրովը այդ հրաշակերտները թերեւս մալուած հրատարակուէին) : Իսկ այն կատարելութիւնը որուն հասուցին հայերէն լեզուն, ոճը եւ տաղաչափութիւնը, մերցեղին աշնուականութեանը ամենէն շքեղ ապացոյցներէն մէկը կը կացուցանէ : Պէտք պիտի ըլլար ուրոյն ու մանրամասն ուսումնասիրութիւն մը նուիրել վերլուծելու համար այն գեղեցկութիւնը զոր Բագրատունին ու Հիւրմիւզը բերին մեզ լեզուին, մեր զըրականութեանը, մեր ցեղին : Իրենց գրաբարը, նուազ ազնիւ, նուազ մաքուր քան Յզնիկինը կամ Սաղմոսներու թարգմանութեանը, աւելի ճոխ է, աւելի բազմատարր, աւելի նուրբ, զմայլելի կերպով ճկուն ու կենդանի, դասական վեհութիւններուն միացնելով ողմանթիկ կիճոտութիւններ ու մինչեւ իսկ (մասնաւանդ Բագրատունիին մէջ) «սէքատան» տարօրինութիւններ ու նրբամոլութիւններ . եւ զարմանալի չէ որ այդ արտայայտութեան հրաշագան գործիքը ձեռքերնին ունենալով, հին հայերէնին այդ վերջին ու գերագոյն արուեստ

տագէտները դժկամակած ըլլան աշխարհաբարն ընդունելու իրբու գրական լեզու այսպիսի աստեն մը ուր աշխարհաբարը անկերպարան, կուպիտ ու գոհիկ կործայ մըն էր դեռ. եւ ասով կը բացատրուի նորէն որ նոյն իսկ Միսաքեանի պէս գրող մը, որ աշխարհաբարին ձեւակերպիչներէն ու վարպետներէն մէկը եղաւ, իր բանաստեղծութեանցը համար անհրաժեշտ նշկատած ըլլայ, Հիւրմիւզին ու Բագրատունիին լեզուէն հմայուած, գրաբարին դիմել: Ու ի՞նչ կարելի է երեւակայել աւելի վեհանձնօրէն գեղեցիկ քան այն «նայկական տաղաչափութիւնը», զոր Բագրատունի ընդհամարեցնաւ. նեաց կշտաւոր արձակին մէջ, զոր ինքը կազմակերպեց ու կատարելագործեց, եւ որ իր արտագրութեանցը մէջ եղաւ տեսակ մը վակներեան բերածեւ ու հզօր համանուագ, Հոլովեալ աչքս հրացայս, պարոյրս ոլորս

Նոսասյրճօճեալլեզու շըչէրսուէր զայր սողոսկէր Առ թաթս ոտից գեղեցիկ ուսին ի կերպ աղաչաւ

Իսկ Հիւրմիւզի դաշնակաւոր հոգիին մէջէն լամարթիւնեան, վիշգիւնեան քաղցրահոտութիւն մը դարձաւ, յաւիտեանական արեւեցութիւն երաժշտամու մտքերուն,

Աղբերք լօռաւտքեւ դալարիք դիւրիչք ի նինջ, եւ որքզանսօր ամեն ըզձօք կանաչագեղ թուփք

Յերեսաց հեղեղակաց լերուք խաշին պատու

Ամառն անա գայ բոցակէզ, ուռնուն ի գուարթ

Ալիշանը, նուազ դասական, նուազ արուեստագէտ, նուազ կատարեալ քան իր երկու անթերի նախորդները, աւելի ինքնատիպ եղաւ, աւելի անեղծող, աւելի «բանաստեղծ»: Արտակարգ, անդուսպ, անսանձ հայերէնով մը, զոր նարեկացիէն կ'առնէր եւ ա'լ աւելի քմասլաց ու խօլական կը դարձընէր, ամենի ու վսեմ շունչով մը զոր մարդաբէներուն մէջ միայն կրնանք գտնել, մօլիդին, սարոսպին թռիչով մը որ Պայրընն ու Շիլլէրը կը յիշեցընէ, Ալիշան երգեց, մէկ քանի քերթուածներու մէջ որոնք ա' յնքան ատեն պիտի տեւեն որքան մեր ցեղը տեւէ, Հայրենիքը, Բնութիւնը, Շրկինքը, Աստուած, եւ Հողին որ Բանաստեղծութեան իսկութիւնը կը կազմէ եւ կեանքին վերեւ կը հոլաթեւէ, եւ գիւցազնական հրապոյրը մթին ինքնագոհութիւններուն, ու խորհրդաւոր գեղեցկութիւնը Ասաջին Ամսլին կուսական տարփանքներուն,

... Եւ լոյս լուսնի զհասարակաւ փարէր գիշերով. Եւ խարտեալ մահիկն յառագաստին կայր ի

Եւ նուազէր ձայնն հաւուն ի ծառոյն կենաց. Եւ հաղ ընդ հաղ հառաչէր հեղեղն հեռաւոր. Եւ հաղիւ հըծծիւն օդոյ մեղմոյ դըրկէր զայերս. Եւ հանգչէր բնութիւն համատարած յանդորր

Եւ գիշերապան ձեմէր զուարթնեակն յանձայնն

Կենսատուին բարսմամբ հովածելով շուրջ անակի եւ քուն քաղցրիկ որորայր յանձնինչ լար ըս

Եւ էր հանգիստ եւ սէր կատարեալ անմահ

Ընդ մորճ աստեղամբք հովանոց ամեն առա

Ընդ որով նընջէր կուսանսիրոյն քունն կու

Յանոյզ գրքարանն ի բնագաւառն Հայաստանեայց:

Չչատանալով բարձր քերթութեամբ ուր ամենէն վեհ կատարներուն հասաւ, Ալիշան ուզեց քնքուշ, սիրուն, ժողովրդական լարն ալ հնչեցնել, եւ գրեց իր պարզուկ, միամիտ բայց այնքան գունալից ու կրակոտ Յուշիկները, եւ նախապէսի երգերն աշուղեց ուր Մանդուխտը, Վարդանը, Աշոտ Երկաթը, Մասիսներն ու ինքն իսկ փշապսակ Հայրենիքը իրենց ամբողջ կեանքովը խտացած՝ կ'ապրին ու անթառամ բարբառով մը կը լսօսին: Յետոյ, «երգելէ» յոգնած, նուազ թանկագին, նուազ բարձր ու նուրբ, աւելի զրական գործ մը ստանձնեց, «նկարագրել» Հայրենիքը. եւ յօրինեց իր տեղագրական մեծ հատորները, որոնք դիտական աշխատութիւններ ըլլալ կը ձգտին եւ ա' յնքան իսկապէս, ա' յնքան միամտօրէն ու քնքշօրէն բանաստեղծական են: Ալիշան համադրութիւնը եղաւ ամբողջ Վենետիկ վանքին իր գործին մէջ ներդաշնակեց ամէն ինչ որ ըրած էին իր նախորդներն ու ժամանակակիցները՝ Չամչեանէն մինչեւ Բագրատունի, Ինճիւճեանէն մինչեւ Հիւրմիւզի, եւ իր դէմքը, ամենէն պաշտելիներէն մէկը զոր մեր ցեղը արտադրած է, Վենետիկ վանքին ամբողջ գեղեցկութիւնը կը խորհրդապատկերէ:

Այս բոլոր գրաւոր արտագրութիւններէն զատ, Վենետիկ վանքը տուաւ ազգին նաեւ կենդանի արտագրութիւններ, — Մուրատ-Ռափայէլեան վարժարանին աշակերտները: Այդ աշխարհական Մխիթարեանները տարածեցին, հանրացուցին, ընդարձակեցին, լրացուցին իրենց վարպետներուն գործը: Հէքիմեան,

Պէշիքթաշլեան, Մերենց, Մամուրեան, Թէրզեան, եւ անուղղակի կերպով՝ Տէրոյնց, Միսաքեան եւ Օտեան, այդ զիւցազնական, եւ դասական ոգիին, այդ հայրենասիրական եւ գեղեցկասիրական ձգտումին ծաւալիչները եղան ժողովրդին մէջ, ու գործելով, ապրելով ժողովրդին հետ խոսնուած, դասականը հետըզհետէ իրականին մտակցուցին, զիւցազներգութենէն յետոյ թատրերգութիւն, քերթուածէն յետոյ վէպ, ճառէն յետոյ քրոնիկ հիմնեցին, միշտ պահելով՝ առաւել կամ նուազ՝ «մասեւ նսածեւ» ընթացքը, հոստորական պշտանքը, դասական տարփանքը զոր ստացած էին Մխիթարեան դաստիարակութիւնէն, եւ, գրարարէն յետոյ, յօրէնեցին, յգլեցին, գեղեցկացուցին աշխարհաբարը, գրական աշխարհաբարը զոր ունինք այսօր, պշխարհաբար մը որ եթէ ոչ նոյնքան, գէթ նոյնպէս նուրբ ու շքեղ եղաւ որքան Բազրատունիներուն ու Ալիշաններուն գրաբարը:

Այդ ամբողջ բաւական երկար ժամանակամիջոցին ուր Մխիթարեանները ա՛յնքան գեղեցիկ գրքեր եւ ա՛յնքան հոյակապ աշակերտներ կուտային ազգին, Վենետիկ վանքը ըզվանդակ Հայութեան համար Մտաւորական կեդրոնը, Գեղեցկութեան Վառարանը զարծաւ: Ազգին բոլոր կուսակցութիւնները, բոլոր հատուածներն ու դասակարգները պատկառանքով կ'արտասանէին Վենետիկ վանքին անունը. նոյն խի մեր կաթողիկոսեանցները, լուսաւորչականի եւ կաթողիկի պայքարին ամենէն թիւ օրերուն, միշտ կը խոստովանէին թէ Վենետիկ Մխիթարեանները կաթողիկոսներուն ամենէն Հայերն էին եւ Հայերուն ամենէն նրբացեալները: Իր Վարագայ վանքէն, ուր Արծուի Վասպուրաւանիին կը հրատարակէր, Խրիմեան, զեռ այն տտեն Վանցի բանաստեղծ մը լոկ, խորին մեծարանքի տողերով ուզերձ մը կը գրէր Հ. Արսէն Բագրատունիին, Վարպետին: Գետնք որ Մըրովեան իրեն մտասիրպար ունէր Մխիթարբ, եւ պահ մը փորձուեցաւ Վենետիկ երթալ ու միաբանութեան մէջ մտնել: Միսաքեան, Պոլսոյ Հայութեան արտագրած ամենէն մեծ գրապէտը, խանդավառ հիացող մըն էր Հիւրմիւզին: Գուրեան կը բաղձար Պէշիքթաշլեան մը ըլլալ: Եւ պէտք կա՞յ բաղաւորել թէ մեր արեւմտեան Հայոցս արդի գրականութիւնը գրեթէ ամբողջութեամբ կը կազմուի այն տարրերով զոր բերին այդ Մխիթարեաններն եւ իրենց աշակերտներն ու հիացողները, — Ալիշանը, Պէշիք-

թաշլեանը, Թէրզեանը, Մերենցը, Մամուրեանը, Միսաքեանը, Օտեանը, Արփիարեանը, Զօհրապուր Սվաճեանը:

Հայ ազգին հանդէպ կատարած այս դերին՝ Վենետիկ վանքը կը միացնէր դեր մը աւելի ընդարձակ ան կը ներկայացնէր Հայութիւնը, եւ շատ փայլուն կերպով, Եւրոպային: Մասնաւորապէս Իտալիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ, Ս. Ղազարի ակադեմիան եւրոպական ամենէն ծանօթ ու յարգուած հաստատութիւններէն մէկը զարձած էր: Եւրոպացի արեւելագէտները հայ ազգին վրայ ո եւ է տեղեկութիւն ունենալու համար, վանքին կը դիմէին. հայասէրները վանքը կ'երթային հայերէն սորվելու. Աէն-Մառթէն, Լը Վայեան ար Ֆլուորիալ, Տիւրոնիէ, Լանկլուա, Վենետիկ Մխիթարեաններուն աշակցութեամբ ու աշխատակցութեամբը կատարեցին իրենց բազմաթիւ ուսումնասիրութիւնները Հայոց հին ու նոր պատմութեան վրայ, եւ հայ հին հեղինակներու իրենց փըրանսերէն թարգմանութիւնները: Պայրեն, իր խոոված հոգին հանդարտեցընելու համար, Վենետիկ վանքը կ'երթար միաբաններուն հետ Հայոց վրայ խօսելու, հայերէն լեզուն անոնցմէ սորվելու. իր բարեկամներէն մէկուն ուղղուած նամակի մը մէջ, մեծ բանաստեղծը սուպէպ կ'արտայայտէր իր զպացումը վանքին ու հայ ազգին նկատմամբ:

«Այս միաբանութեան անդամներուն քաղաքավարութիւնը, հանդարտամտութիւնը, անսեթեւեթ բարեպաշտութիւնը, սիրալիր բնաստրութիւնը, յատկութիւններն եւ առաքինութիւնները կարող են աշխարհի մարդ մը սա համոզման բերել թէ ուրիշ բան մը կայ, լաւագոյն բան մը կայ, նոյն խի այս կեանքին մէջ: Այս մարդիկը կղերն են այդ հարստահարեալ եւ ազնիւ ազգին որ Հրէաներուն եւ Յոյներուն պատիխտացմանն ու գերութեանը բազմակից եղած է, առանց աւաջիններուն յամառութիւնն ու վերջիններու սարկացումն ունենալու...»

Եւրոպայի բոլոր մեծ անճաւարութիւնները, Վենետիկէն անցած ատենին, պարտք կը հաւարէին Ս. Ղազարու վանքը այցելել, եւ այցելել ոչ թէ, ինչպէս այժմ, իրրեւ հետաքրքրաշարժ մանրամասնութիւն մը, այլ իրրեւ եւրոպական համբաւ վալելող մեծ հաստատութիւն մը: Վանքին «ստորագրութեանց տետրակ»ին մէջ նարոլէոն Գ. կայսեր, Թիէոֆ, Լամարթիինի, Կալլէսի իշխանին եւ զեռ շատերու անունները կան:

Մամուէլ-Մուրատեան վարժարոնը Բարիզ փոխադրելով, Մխիթարեանք աւելի մեծ ու

չքեղ շրջանի մը մէջ մտցուցին Հայու թիւերը Եւրոպացուց ճանչցնելու գործը : Մուրատեան վարժարանը ծանօթ ու սիրուած անկիւն մը եղաւ Բարիզի մէջ . Հ. Ս. Թէոփորեան, յետոյ Հ. Ալիշան, որ դպրոցին տնօրէնութիւնը կատարեցին անբազրկատելի ու շիմութեամբ եւ հեղինակութեամբ : Բարիզի մտաւորական դասակարգին համակրութիւնը սերտիւ կապեցին իրենց հաստատութեանը, պարզեւբարաշխութեան հանգէսներուն Լամարթինի պէս Ֆրանսացիներ կը նախապահէին : Հոս չեմ ծանրանար այն պառակտումին վրայ — տուր մանրամասնութիւն այս գեղեցիկ համապատկերին մէջ — որով Մխիթարեանց մէկ մասը, Ալվազովսքին ու յետոյ Նարպէյը իրենց գլուխ ունենալով, բաժնուեցան միւսներէն, Լուսաւորչականութեան դարձան եւ Հայկազեան վարժարան մը հիմնեցին, որ չկրցաւ տեւել եւ Մուրատեան դպրոցին վնաս հասցընելէ եւ ներքին կռիւներ յարուցանելէ զոտ ուրիշ օգուտ չունեցաւ . բայց Ալվազովսք եւ Նարպէյ, անձնապէս, իրենց մտաւոր աջակարգ յատկութիւններովը, իրենց բարձր զարգացմամբն ու հմտութեամբը, բարիզեան գրական ու գիտական շրջանակներուն մէջ մեծ յարգանք վայելեցին . Նարպէյ Լամարթինի, Հիւկոյի հետ մտերմական յարաբերութիւններ ունեցաւ . եւ երբ Ալվազովսքի զէպ ի Ռուսաստան պիտի մեկնէր, Բարիզի Ասիական ընկերութիւնը տուաւ անոր Ռուսիայ կայսեր ուղղուած յանձնարարական տեղեկագիր մը (որ հրատարակուած է Ժուռնալ Ազի քիմիկն մէջ) այնքան ներքողալից ու յարգական սրբանքիչ Հայ ընդունած է եւրոպական մեծ ակումբէ մը : Եւ կի՞ն Նարոյէտն Գ. ըսաւ օր մը Հայոց համար թէ՛ «Փոքր-Ասիոյ այդ փոքրիկ ժողովուրդը մեծ ապագայ կը խոստանայ», այդ խօսքը Մխիթարեաններուն այս ամբողջ գործունէութեանը արգելնքն էր ամենամեծ մասամբ :

Չեմ ուզեր սակայն որ կարծուի թէ արգի Հայութեան կազմաւորմանն ու գաստիւրակմանը գործին մէջ անհեռ քան Վենետիկ վանքին կը վերագրեմ : Արդէն գրած եմ^(*) թէ ի՞նչպէս Աբովեան, եւ իրմէ յետոյ Նազարեանց, Նալբանդեանց ու Բաքիի, լրացուցած են, ուրիշ աշխատութեամբ մը, Մխիթարեանց գործը (եւ այս առիթով չեմ կրնար բացատրել ո՛րքան անխմաստ կը գտնեմ այն փրոցուողոյց ու շնոր-

հազուրկ աններողութիւնը որով հիմակուան Մխիթարեանները — ժառանգորդները միշտ աւելի գոռոզ կ'ըլլան քան իրենց հայրերը որ իրենց աշխատութեամբ գիրք ու անուն շինեցին — կ'ուրանան իրենց վանքէն դուրս սեւ է մեծ արժանիք : «Ո՛ւր Մխիթար, ո՛ւր Աբովեան, ո՛ւր Մխիթարայ գործն, ո՛ւր Աբովեանին», կը գրէր Հ. Երեմեան Աբովեանի նուիրած յօդուածիս առիթով, չըմբռնելով որ Աբովեան մը, իր մէկհատիկ վիպասանութեամբը եւ իր մանկավարժի պարզ գործունէութեամբը կրնայ, թէպէտ սահմանափակ, բայց նոյնիքն կարեւոր գեր խաղացած ըլլալ, քանի որ սարքեր եւ եւ պարսաւ մը կը ղեցընէ, որքան Մխիթար մը իր ընդարձակ ու խոշոր հիմնարկութեամբ : Իրենց ամբողջ գործունէութեանը մէջ, Մխիթարեանք, հակառակ իրենց ողբի, ճաշակի, ճգտումներու ընդարձակութեան եւ ազատութեան, «վանքի», «դպրոցի», «գրքի» ազդեցութիւնը կը պահէին : Վերջապէս «վանականներ» էին, մեծ մասամբ Պոլսէն, հայրենի երկրին անձամբ անձանօթ, Հայաստանն ու հայ ժողովուրդը գրքերու մէջէն տեսնող, եւ ժողովրդական կեանքէն անջատ : Իրենց աշխատութիւնը գրասենեակի աշխատութիւն մըն է, ուղեղի արտադրութիւն մը : Պէտք չէ մոռնալ որ Ալիշան, Հայաստանի ամենէն մանրակրկիտ նկարագրողը, Հայրենիքին ամենէն խանդավառ երգիչը, երբեք չի գացած այժմիկ տեսնել այդ երկիրը : Մխիթարեանց աշակերտներն ալ, Պէշիքթաշլեանէն մինչեւ Մերենց, Հէքիմեանէն մինչեւ Նոյն ինքն Մամուրեան (բայ ի Արփիարեանէն որ թէպէտ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի աշակերտ, Մխիթարեաններէն շատ քիչ ազդեցութիւն կրած է եւ Ֆրանսական լրագրութեան եւ ուսանայ գրականութեան ազդեցութեամբ կազմուած է) «գրքական» մտքեր են, ուղեղային գաստիարակութեամբ, եւ աւելի եւրոպացի եղած են քան Հայ, աւելի Հայը եւրոպացիներու նպաստած են քան հայ ցեղին ինքնուրոյն կեանքը, պոյնը, շեշտը գրականութեան վերածելու : Այդ բանը Ռուսահայոց կը պարտինք, — եւ Թրքահայ մէկ քանի գաւառական գրողներու, ինչպէս Աբուանձտեանց, Տեւկանց, եւն : Մխիթարեանք մեղի բերին մարդկային բարձրագոյն արուեստը, եւրոպական ոճը, գաստական հայրենասիրութիւն մը, մարդկային թատերաբեմին վրայ մեծ գեր մը խաղալու հրաւէրը, եւ հին Հայութեան տեսլականացեալ վերակոչում մը . Ռուսահայերը

(*) Պատմութիւն ի. Աբովեանի վրայ, «Մեհակ», Թ. 2 :

ժողովրդի մարդիկ, ժողովրդին մէջ կազմուած եւ ուղղակի ժողովրդին համար աշխատելու ձգտող, ընդունելով միանգամայն ազդեցութիւնը գերմանո-ուս սօցտապաշտ, իրապաշտ դաստիարակութեան, մեղի տուին մեր հայրենիքին՝ եւ մեր ժողովրդին արգի կացութեան «իբական» պատկերացումը, այդ կացութեան վերանորոգման դրական միջոցները փնտռեցին եւ ջանացին ցուցնել, կազմակերպեցին լրագրութիւնը, իրապաշտ վէպը, ժողովրդական ու ձգտումնաւոր բանաստեղծութիւնը, ընդգրկեցին մանկավարժական նոր մեթոտները, «հայ» եկեղեցիին, «հայ» աւանդութիւններուն, վերջապէս զուտ «հայ» տարրին ներկայացուցիչները եղան՝ մինչդեռ Մխիթարեանք «կաթուղի ու եւրոպական հայութիւն մը» կը ներկայացընէին, ու ճարտասանական, պատմական եւ գիւտնագիտական հայրենասիրութեանը հանդէպ՝ որ էր Մխիթարեանցը, յիշափոխական, գործօն, կենդանի հայրենասիրութիւն մը քաւրդեցին: Երկու հոսանքները՝ այսօր միացած ու խառնուած՝ կը կազմեն Հայոց (մանաւանդ Թրքահայոց) արդի գրականութիւնը, եւ ընդհանուր ազգային գործունէութիւնը: Այդ երկու հոսանքներէն, ինծի համար, առաջինն է կարեւորագոյնը. եւ հոտ՝ Ռուսահայք ալ (Նաւրսեան, Ա. Երիցեան, եւն) գործած են Մխիթարեանց նկատմամբ միեւնոյն անիրաւութիւնը զոր հիմնական Մխիթարեանները կը գործեն Արտվեանի մը եւ իր յաջորդներուն կատարած մասնաւոր բայց հսկայ գործին նըկատմամբ. Ռուսահայք, ընդհանրապէս, լոկ գեղեցիկ ժամանակավրէպ մը նկատած են Մխիթարեանց գրականութիւնը, անոր անմիջական սօցտակարութեան պակասէն զայն անիմաստ եւ անկենդան կարծելով: Ռուսահայոց բերած տարրը անհրաժեշտ էր որպէսզի Հայոց մտաւորական, բարոյական ու քաղաքական վերանորոգման աշխատութիւնը կարենար իր ամբողջական ձեւն զգենուլ. բայց Մխիթարեանց գործը աւելի կարեւոր է, նախ որովհետեւ ընդհանուր թմրութեան մէջ ան եղաւ զարթման առաջին նշանը տուողը եւ ան ներշնչեց ու յարոյց նոյն իսկ ուսահայ շարժումը, երկրորդ՝ որովհետեւ Մխիթարեանց գործունէութիւնը աւելի ընդարձակ, աւելի նուրբ է, եւ՝ ճիշդ «ուղեգային» ըլլալուն եւ համամարդկային գեղեցկութեան մը կնիքը կրելուն համար՝ աւելի բարձր է:

Ահաւասիկ ինչ որ եղած է անցեալին մէջ Վենետիկի վանքը. անցեալ մը իրօք շատ ծանր՝ ժառանգորդներու ուսին համար, երբ ատոնք ժառանգորդներ ըլլան եւ ոչ թէ յաջորդներ: Հիմա խնդիր է գիտնալ թէ այսօրուան Մխիթարեանները յաջորդներ են: Ես կը կարծեմ որ ժառանգորդներ են միայն. եւ ատոր համար է որ Ռըվիւ Անսիֆոթեսիֆ ուսումնասիրութեանս մէջ Ալիշանէն յետոյ անուն չգտայ նշանակելու:

Եւ երբ Ալիշանէն յետոյ «անուն» մը կ'ըսեմ, չեմ հասկնար Ալիշանին հաւասար անուն մը, այլ «գրական անուն» մը որ արժանի ըլլայ յիշուելու: Մխիթարեանք մը, նոյն իսկ ժողովուրդ մը, չի կրնար ամէն օր Ալիշանին, Բագրատունիին կամ Չամչեանին պէս մտքեր արտադրել. բայց միարանութեան մը կամ ժողովրդի մը կենսականութիւնը ապացուցանելու համար անհրաժեշտ պայմանը մեծ ազանդներու երեւումը չէ, այլ նոյն «ճիգին», նոյն «աւանդութեան», նոյն «գործին» շարունակումը գիտակցութեամբ ու խանդով, Արդ, այս դարուս առաջին կէսին մէջ, Վենետիկի վանքը առաջնակարգ դեր մը ունէր, եթէ ոչ առաջինը, ազգին մէջ. այսօր. ազգին «կենդանի կեդրոնները» Թիֆլիսը, Պոլիսը եւ Վիեննան են, մինչդեռ Վենետիկը՝ լոկ ստուեր մը իր անցեալին: Թիֆլիսի մէջ, Արտվեանէն, Բաֆֆիէն ու Քամա-Քամաթիպայէն յետոյ Շիրվանզադէ, Լէօ, Փափագեան եւ Յովհաննիսեանց շարունակորթն մըն են. Պոլսոյ մէջ, Պէշիքթաշլեանէն, Միսաքեանէն, Մամուրեանէն, Օտեանէն եւ Դուրեանէն յետոյ, Մասիւ-Հայրենիֆի խումբը շարունակորթն մըն է. Վիեննայի վանքին մէջ, Գաթրճեանէն, Քարաքաշեանէն եւ Այսոնեանէն յետոյ, Տաշեանը, Մենելիշեանը, Քալէմփեարեանը շարունակորթն մըն են: Վենետիկի վանքին մէջ այսօր ոչ ոք կը տեսնեմ որ Չամչեանին, Բագրատունիին, Ալիշանին աւանդութիւնը շարունակէ: Վենետիկի վանքը այսօր դադարած է հայ ժողովրդին վրայ ազգային, ուսումնական կամ գրական ու եւ ազդեցութիւն գործելէ:

Գիտեմ որ Վենետիկի վանքին մէջ կան հիմա անձեր «որոնց ամբողջ կեանքը նուիրուած է ի զարգացումն հայկական դարութեան եւ մասնագորութեան», ինչպէս կը գրէ Հ. Երեմեան. բայց «ամբողջ կեանքը հայկական զբաղութեան զարգացման նուիրելը», եւ ձեռնարկուած գործին մէջ յաջողիլը, իբարմէ տարբեր բաներ են: Գիտեմ որ վերջին շրջանին մէջ

Ալիշանէն զատ վանքը ունեցաւ Հ. Զարբհա-
 նէլեան մը , որուն «Հայ մատենագրութեան
 պատմութիւն»ը իր տեսակին մէջ առաջին աշ-
 խատութիւնն եղած ըլլալէն ուրիշ ո եւ է ար-
 ժանիք չունի , Հ. Բարսեղ Սարգսեանը , որ
 հմուտ եւ աշխատասէր միտք մըն է՝ առանց
 գիտական մեթոտի եւ առանց ինքնատու-
 թեան , Հ. Մանուէլ Քաջունին , որուն «Իրտու-
 թեանց բառարան»ը շահեկան եւ գովելի ձեւ-
 նարկ մըն է , բայց հետո՝ անթերի ու վերջ-
 նական գործ մը ըլլալէ , Հ. Դաւիթ Նազարէթ-
 եանը որ Տանթէի մէկ քանի երգեր թարգմանած
 է ողորմելի գրաբարով մը , եւ մէկ քանի երի-
 տասարդ գրողներ որոնք թարգմանութիւններ ,
 կենսագրութիւններ կամ բանասիրականներ
 հրատարակեցին , շատ բարի կամեցողութեամբ
 եւ բնաւ տաղանդով : Իրտեմ որ Բագրևայիւր
 ջանքեր կ'ընէ գրական ու բանասիրական
 բարձր թերթ մը ըլլալու եւ ուրիշ բանի չի
 յաջողիր հասնիլ բայց եթէ՝ գրականին մէջ՝
 ծիծաղելի ըլլալու , իսկ բանասիրականին մէջ՝
 վիեհնայի Հանդեսին մէկ յոռի ընդօրինակու-
 թիւնը : Մուրա-Ռափայէլեան վարժարանը
 իր առջի փայլն ու նշանակութիւնը կորսըն-
 ցուցած է , տփոյն սերունդներ կ'արտադրէ ,
 եւ այն յիշատակը զոր կը տանին հիմակուան
 աշակերտները այդ դպրոցէն , շատ տարբեր է
 խանդավառ տպաւորութիւնէն զոր Պէշիք-
 թաշկեանները , Թէրզեանները եւ Արփիարեան-
 ները բերին անկից : Հայութիւնը Եւրոպային
 ճանչցնելու գործը ուրիշներ կը կատարեն
 այսօր , եւ Մխիթարեանք այլեւս ոչինչ—կա՞
 գրեթէ ոչինչ—կ'ընեն այդ ճամբով : Ուրիշ բան
 չի մնար վանքին մէջ բայց եթէ Ալիշանը ,
 որուն գոյութիւնը դեռ «փառք» մը եւ «փայլ»
 մըն է այդ հաստատութեան համար . բայց
 Ալիշանը , որ երբեմն «ներշնչող» մըն էր ,
 այսօր «հաւաքող» մըն է լոկ , եւ իր սքանչելի
 ձերութիւնը կս յոգնեցընէ , ապշեցուցիչ աշ-
 խատասիրութեամբ մը եւ խանդով մը , այնպիսի
 աշխատութեանց մէջ զոր իր աշակերտները
 կրնային կատարել եւ պէտք էր կատարէին ,
 եթէ իրեն արժանի աշակերտներ ունենար :

Անկումը անուրանալի է : Ինչ որ կը շարժի
 այսօր ու կ'ապրի վանքին մէջ , «ստացուած
 արագութեան» մէկ տիտեր մնացորդն է : Հայ-
 կական ուրիշ խումբեր , ուրիշ բնկերակցու-
 թիւններ , ուրիշ հաստատութիւններ քալեցին
 կէս դարէ ի վեր , ու կը քալեն միշտ . վեհնակի
 վանքը իր հոյակապ ընթացքին մէջ օր մը

յանկարծ կանգ առաւ , եւ այդ կատուը կը
 տեւէ դեռ : Դժուար է այս կատուին պատճառը
 բացատրել : Ես կը կարծեմ թէ Հ. Այվազովս-
 քիին ու իր ընկերներուն բաժանումը վեհնակի
 միաբանութենէն , առաջին հարուածը սուաւ .
 կարեւոր տարր մը ատով կ'անջատուէր Մխի-
 թարեան մարմնէն , եւ այդ անջատումն իսկ
 ինքնին՝ մարմնոյն ակարանալ սկսելուն մէկ
 նշանն էր թերեւս : Դէպք մը սակայն որ աւելի
 խորին ազդեցութիւն ունեցած ըլլալ կը թուի
 վեհնակի Մխիթարեանց դիրքին խախտմանը
 տեսակէտով , այն ձախտող որոշումն է որով
 միաբանութիւնը Մուրաբեան վարժարանը
 Բարիզէն վեհնակի փոխադրեց : Բարիզի պէս
 կեդրոնի մը մէջ ունենալով տեսակ մը մասնա-
 ճիւղ , Մխիթարեանք անհունապէս օգտակար
 կ'ըլլային Հայութիւնը Եւրոպացուց ճանչը-
 նելու տեսակէտով , եւ միանգամայն իրենք ալ
 կ'օգտուէին այդ բարձր միջավայրին ազդեցու-
 թենէն : (Դպրոցը վեհնակի փոխադրուելէն ի վեր
 Բարիզի հայադիտական շարժումը զգալի կերպով
 նուազած եւ տփոււնած է) : Վերջապէս , կար-
 ծողներ կան , եւ ես անոնցմէ եմ թէ այդ բա-
 ցատրոց պատճառներուն մէջ կարեւոր տեղ մը
 ունի այժմեան Մեծաւորը անձնուպէս . իր նա-
 խորը , Գեր . Գէորգ Հիւրմիւզեան , Հ. Եղուարդ
 Հիւրմիւզեանին եղբայրը , «գրապէս» մըն էր , եւ
 ամէն բանէ առաջ՝ սիրող գրականութեան եւ
 արուեստի . անոր նախորդները նոյնպէս գրական
 անձեր եղած են . Գեր . Կիւրեղեան շատ ուշիմ
 ու գործնական միտք մըն է , փայլուն ելեւմը-
 տագէտ մը . ինծի հաւատած են թէ իր ընա-
 րութենէն ի վեր վանքը շատ հարստացած է .
 չիտեմ որ բազմաթիւ ու բերրի կալուածներ
 ունին հիմա Մխիթարեանք Արտոյի մէջ , եւ
 իտալիոյ ուրիշ կողմերը . պիտեմ որ վեհնակի
 լաւագոյն կաթը կը ծախեն , եւ բրինձի վաճա-
 ռականութեան մէջ առաջնակարգ տեղ մը կը
 բռնեն . բայց Գեր . Կիւրեղեան «գրական» միտք
 մը չէ , ոչինչ արտադրած է , եւ նոյն իսկ ոչ մէկ
 ապացոյց տուած է գոնէ «գրասէր» մը , «հաս-
 կըցող» մը ըլլալու . եւ շատ հաւանական է որ
 իր ազդեցութիւնը բաժին մը ունենայ վանքին
 արդի «գրական» անկումին մէջ , ինչպէս՝ ճիշդ
 հակառակը՝ Այսնեանի պէս գիւնականի մը
 վիեհնայի վանքին զլուխը գտնուելը էական
 պատճառներէն մէկը եղած է այդ վանքին դիրքին
 բարձրացմանը : Հարստացնել վանքը , շատ հաս-
 կանալի եւ շատ գովելի ջանք մըն է , եւ Գեր . Կիւ-
 րեղեան կրնայ գնահատուիլ իրբեւ մասակա-

րար , սակայն Վենետիկի վանքին պէս հաստատութեան մը գեղեցկագիտական նշանակութիւնը պահպանելու համար մատակարար մը չի բաւեր , գրագէտ մը պէտք է :

Անկման մեծ նշաններէն մէկը հետեւողութեան ձգտումին զարգացումն է : Վենետիկի վանքը որ առաջ կ'ազդէր ազգին ամէն հատուածներուն , մինչեւ իսկ իր հակառակորդներուն վրայ , հիմա կը հետեւի : Կը հետեւի Վենետիկի վանքին , ձգնելով բանասիրական ու պատմական ուսումնասիրութեանց մէջ անոր հետ մրցելու շատ վար մնալով անկից : Հիմա սկսած է հետեւիլ նոյն իսկ Պոլսոյ կամ Թիֆլիսի մամուլին , հրատարակողական փորձեր ընելով Բագրատիպին մէջ՝ Հ. Երեմեանին նախաձեռնութեամբը , փորձեր որոնք , աւա՛ղ , չափազանց անճարակ են : Այնպիսի ատեն մը ուր դեռ ոչինչ կար ազգին մէջ , կ'ըմբռնեմ որ Վենետիկի վանքը ուզած ըլլայ ընել ամէն բան , կրօնական , գիտական , գրական , պատմական , դեղարուեստական ճիւղերը միանգամայն մը շակել . բայց այսօր հայկական նորանոր կեդրոններ կազմուած են , եւ աշխատութեան բաժանում յառաջ եկած է . ամէն խումբ պէտք է իր գործը տեսնէ . փոխանակ միջակօրէն կըրկնելու ինչ որ Վենետիկի միաբանութիւնը մագիստրոսաբար կը կատարէ , փոխանակ Պոլսոյ կամ Թիֆլիսի մամուլէն փոխ առնելու դեր մը որ բնաւ պատշաճ չէ Ս. Ղազարի վանքին , Վենետիկի միաբանութիւնը պէտք էր իր ուժերը գործածէր այնպիսի աշխատութեանց որ նըպաստէին պահպանելու իր քուն նշանակութիւնը , իր ամէն բանէ առաջ հայրենասիրութեան եւ գեղեցկասիրութեան վատարանի դիրքը : Վենետիկի վանքը պէտք է մեզի գրագէտներ , արուեստագէտներ տայ . պէտք է իրենց ցեղը խորապէս ճանչցող ու եռանդագին սիրող սերունդներ հասցնէ իր Մուրատեան զպրոցէն . եւ պէտք է շարունակէ իր պաշտօնը՝ Հայութիւնը Եւրոպային ճանցնելու : Այդ է իր կոչումը , այդ է իր գոյութեան պատճառը , եւ առանց ատոր՝ Վենետիկի վանքը ուրիշ բան չ'ըլլար այլ եւս բայց եթէ անուն մը լոկ :

Ոչ մէկ ատեն այնքան զգացինք Վենետիկի վանքին անկումը որքան 95-97ի հայկական աղէտըուն շրջանին : Այդ արիւնի , տենդի , վտանգի , ցաւի օրերուն , երբ ամէն հայ անհատ կամ խումբ գէշ աղէկ իր կրցածը փորձեց ազգին օգտակար ըլլալու համար , երբ ա՛յնքան օտարներ մեր խնդրովը զբաղեցան միթիւնի-

ներով , գրքերով , յօդուածներով , ի՞նչ բրաւ Վենետիկի միաբանութիւնը , այն միաբանութիւնը որ մեր լեզուն ու պատմութիւնը վերստեղծած , Հայկը դեցազներգած , Նահապետիկ երգերը հրաբխաբար , Յուշիկները թրթռացուցած էր : — Վենետիկի միաբանութիւնը յոնց : Օ՛հ , չպիտի պահանջէի որ ծայրայեղ ցոյցեր , իրենց կացութիւնը վտանգող արարքներ փորձած ըլլային Ս. Ղազարի Միսթարեանները , բայց ձա՛յն մը , ճի՛կ մը . . . գոնէ սուգի ե՛րբ մը . . . ի զո՛ւր սպասեցինք որ գէթ Նահապետը ողբ մը լսելի ընէր Բագրատիպին մէջ , կսկիծի շեշտ մը որ ապացուցանէր թէ վանքին սիրտը միշտ կենդանի է ազգին վրայ բարախուն : — Ոչի՛նչ : Եւ ինչ որ միակ անձ մը , սքանչելի Զանչեանը , ըրաւ իր «Ներքայրական օգնութիւն» հաւաքածոյովը , ամբողջ Վենետիկի միաբանութիւնը չմտածեց ու չկրցաւ կատարել — մինչդեռ ատի վանքին գործն էր գերազանցապէս , եւ վանքը կրնար առանց վտանգի այդ գրական ու մարզասիրական արտայայտութիւնը ձեռնարկել : Ու նոյն իսկ երբ Նուպար փաշա , Սասունի դէպքէն անմիջապէս յետոյ իր նուիրատուութիւնը զրկից վանքին՝ առաջարկելով որ միաբանութիւնը հըրատարակէ Հայուն անցեալն ու ներկան Եւրոպային ճանչցնող գործ մը , Վենետիկի վանքը չորսսարի սպասեց , եւ հայկական ինդրոյն Եւրոպայի մէջ յարուցած մեծ յուզումը անցնելէն շատ յետոյ , օր մը մասնագիտական , աշխարհագրական գրքի մը , Սիւռաւնին , Ֆրանսերէն թարգմանութիւնը հրատարակեց , հրատարակութիւն որ աննշմարելի անցաւ եւ բացարձակապէս սպարդիւն , որովհետեւ ոչ մէկ եւրոպացի հայասէր կամ հայագէտ անկից օրինակ մը չընդունեցաւ , ու ոչ մէկ լրագիր կամ հանդէս անով չզբաղեցաւ : — Եւ մինչդեռ Միսթարեանք այսպիսի կենսական դերի մը մէջ այսքան թուրութիւն ու անընդունակութիւն ցուցուցին , անգին՝ իրենց Հ. Ճնտոյեանովը ապացուցին թէ ուրիշ ճամբով հիմա սկսած են փայլել . Հ. Ճնտոյեան Վանի մէջ միջնորդի դերը կատարեց Ֆրանսացի կրօնաւորներուն եւ հայ ժողովրդին միջեւ , զնեյր նախար սովալլուկ Հայերու դաւանութեանը՝ պատառ մը հացիփոխարէն , մուրհակներ առնելով անոնցմէ , որպէսզի վերջէն հայ եկեղեցւոյն դիրքը դառնալ ուղղորդող դասի կանչուին . . . Միսթարեանները , իրենց ամենէն հայրենասէր օրերուն իսկ , կարողի եղած էին միշտ , անկեղծօրէն կաթոլիկ՝ դաստիարակութեամբ :

ողով, զգայնութեամբ եւ ճաշակով եւ ասիկա շատ բնական էր միայն թէ՛ երբ ազգին հոգւոյն սպառնացող տագնապներ ծագէին, անոնք միշտ կը զգացնէին թէ աւելի Հայ էին քան կաթոլիկ Պապն իսկ զիրենք այդպէս կը ճանչնար եւ ատի իրենց փառքն էր: Հ. Ճնտոյեան կ'ապացուցանէ թէ այսօրուան Մխիթարեանները աւելի կաթոլիկ են քան Հայ: Չեմ կարծեր որ Չամչեան կամ Բագրատունի Հ. Ճընտոյեանին կատարած դերը յանձն առնէին:

Գալով Վենետիկի վանքին գրական կացութեանը, քսան տարիէ ի վեր այդ վանքը ուրիշ բան չէ արտադրած բաց եթէ Ալեիանի տեղագրական հատորները, որոնք աւելի իբր տոմարեան կարեւորութիւն ունին քան իբրեւ գրականութիւն: Եւ այդ նոյն ժամանակամիջոցին՝ Բագրատունի մէջ ուրիշ բան չեմ գտեր ուշադրութեան արժանի բաց եթէ Թէրզեանի մէկ քանի զմայլելի քերթումները: Եւ Ալեիան ու Թէրզեան «հին օրերուն» մարդիկն են: Ատոնցմէ դուրս՝ ոչինչ:

Աշխարհաբարը զոր Բագրատունի կը գործածէ, ամենէն յոռին է այսօրուան, նոյն իսկ միակ յունին Վիեննայի Մխիթարեաններ, որոնք Այտնեանով արդէն կենսական դեր մը խաղացած են արդիւյն յերէնին կանոնադրման մէջ, կը գործածեն աշխարհաբար մը այնքան կանոնաւոր որքան շնորհալի: Պոլսոյ բոլոր թերթերը այսօր ունին միեւնոյն մաքուր, կանոնաւոր, աշխարհաբարը, Վենետիկի մէջ է միայն որ կը տեսնուի խառնակ, անճաշակ, մաքարոնիկ աշխարհաբարը, զոր ինչզանդ Քէչեանն անգամ (ո՛վ գարթ) մէկչի գրած է:

Տարիէ մը ի վեր Բագրատունի կը գալի Չամչեան մը կը ցուցնէ վերանորոգուելու. կրիստոսարդ Մխիթարեան մը, Հ. Արսէն Դազիկեան, վերջերս ձեռնարկեց Տանթէն աշխարհաբարի թարգմանել, ինչպէս եւ Սիւլլի-Բոնիտոմէն, Փըրանտուաֆոնէն քերթումներ, այս ձեռնարկը, Վենետիկի վանքին պաշտօնին եւ աւանդութեանը ամենապատշաճ, միակ ինքնատիպ եւ իրապէս ուշադրաւ երեւոյթն է Վենետիկի վանքին այս վերջին բովանդակ շրջանին մէջ: Բայց այդ ձեռնարկն ալ գնահատելի է միայն իբրեւ ձեռնարկ, մինչդեռ անոր գործադրութիւնը սխալ ըմբռնումի մը վրայ կը հիմնուի եւ միջակ արդիւնք մը տուած է: Հ. Դազիկեան «չուզելով», «գանկելով», «ակամայ» կը թարգմանէ. «Տանթէն աշխարհաբար» կը գրէ Տանթէի արաջին երգին թարգմանութեանը նախարանին մէջ, ո՛վ գիտէ քանինքն պիտի

գայթակղին, ես ինքս արդեօք յանձն կ'առնուի՞ (կ'առնէի, ըսել կ'ուզէ) երկու տարի առաջ ընել այդ փորձը զոր կ'ընեմ արդ: Ոչ ապաքէն ես ալ սրբապղծութիւն պիտի համարէի այս պիտի ձեռնէրէց յանդգնութիւն մը»: Այնպիսի տուն մը ուր ամբողջ հայ ազգը, Վիեննայի ու Էջմիածնայ վանքերն ալ հետ առնելով, այլեւս աշխարհաբարը վերջնապէս ընդունած է իբրեւ գրական լեզու, զեռ դժկամակութիւն եւ արհամարհանք ցուցնել աշխարհաբարին համար կ'ապացուցանէ ցաւալի յետսամնացութիւն մը. եւ զրոգ մը որ տակաւին չէ ըմբռնած թէ որչափ ալ գրաբարը գերազանց եւ հոյակապ լեզու մը ըլլայ, աշխարհաբարը ունի իր ուրոյն գեղեցկութիւնները, բաց ի կենդանութեան գերագոյն գեղեցկութենէն, այդպիսի անձ մը բնականաբար չի կրնար աշխարհաբարը գործածել հարկ եղած ճարտարութեամբն ու շնորհով: Հ. Դազիկեանը Բագրատունիին տալիս զաշխարհաբար կանոնները ուշի ուշով սորված ըլլալից թուի իր տողերը լաւ չեշտուած են բաց լեզուն (ուր) բաւական յաջողած աղերս հետ, սապէս ձեւեր կան «Եւ շատեր նստուց ի վերայ մոխրի», «Ապրեցաւ ի Հոովմ առ լաւ Օգոստեան», «Բայց դու է՞ր դառնաս յայդ անտառ դժնեայ», «Իւր ազգն ընդ Փելլքո ու 'նդ Փելլքո պի' ըլլայ») «պիտակ» աշխարհաբար մըն է. եւ ապա շտեմամբ տեսայ որ Սրբիարեան Հ. Դազիկեանի թարգմանութիւնը «կորովալիը ներդաշնակութեան միաձոյլ գանգուած մը (!)» որակեր էր եւ Հ. Արսէն Դազիկեանէն «աշխարհաբարի Հ. Արսէն Բագրատունի» մը յուսալու եղեռնականօրէն զաւելտական գաղափարը ունեցեր էր (*): Բագրատունիին ու Հ. Դազիկեանին միջեւ տարբերութիւնը իր ամբողջ սարսուռով զգալու համար, թարգմանութիւններէն յետոյ կը յանձնարարեմ ըստ իր արհիւղիներուն որ կարգան Մխիթար տիտղոսով կենսագրական քերթումածը, զոր Հ. Դազիկեան կը հրատարակէ առենէ մը ի վեր Բագրատունիին մէջ. չեմ կարծեր որ Բարսեղ Էքսէրճեանի անմտանալի Դուրեանի կենսագրութենէն ի վեր, այսպիսի հրակայական ծիծաղաշարժութեան յիշատակարան մը երեւցած ըլլայ հայ ազգին մէջ. տեսակ մը տեսքան է, որ տեղ տեղ տարտամօրէն կը յիշեցնէ այն երգերը զոր բամազանի գիշերները թափառիկ թաթարներ կը պոռան Պոլսոյ փողոցներուն մէջ՝ սխալմիջիկին ընկերակցութեամբը: Կ'ընդօրին-

(*) Մենաւորի մը նամակները, «հոր կեանք», 15 օգոստոս:

նակեմ մէկ քանի տուն , եւ անոնք իմ բոլոր բացատրութիւններէս աւելի աղէկ պիտի ցուցնեն արտասովոր թոհաֆութիւնը այս քերթուածին .

... Հոն ցուցուց Մխիթար եղբայրական սէրն Որ իւր սրբոյն մէջ արմատ էր ձրգեր . Աէրն այն սրբբենի զոր բերաւ Յիսուս Յերկնից ի յերկիր՝ կենաց յոյս ու լոյս : Փոխանակից իր ուժեղ ձին Մխիթար Անոր գրաստին հետ անգոր , ապիկար , Հեծաւ ու անցաւ գետէն անվրտանգ Յոջիւսն վարդապետն ու ելաւ ցամաք : Մըխիթար անոր գրաստովն անգոր երբոր մըխեցաւ ջրերըուն ի խոր , Չըկըրնալով դէմ դընել հոսանքին , Ըսկըսաւ իյնալ ողորմելի ձին : Մըխիթար թափեց ջանք ու ճիգ ամբաւ վեր առնուլ զանի , եւ ահա վըրթաւ Հա մետին չըւանն , ու ձին քըչուեցաւ , Ինքը մնաց ի ջուր հանգերձ համետաւ : Ըսկըսաւ լողալ Մխիթար անձարակ , Նորէն յետ դարձաւ ելաւ ի ցամաք : Չի դեռ կէսն անգամ հասած չէր դետոյն Որ մըռընչելով թաւալէր փըրփըուն : ...

Այս գրաստին պատմութեանը վրայ կանգ կ'առնեմ : Մարդ այլեւս սիրտ չի կրնար ունեւնալ շարունակելու , երբ կը խորհի որ ինչպիսի «Ս. Ղազարու վանքին» վրայ է : Եւ արդէն կը կարծեմ թէ Հ. Ղազրիկեանի այս քերթուածը ինքնին կը բարե՝ Վենետիկի վանքին արդի գեղեցկաւ գիտական կացութեան իբրեւ աստիճանաչափ :

* *

Վերջնական անկում մը ուրեմն : Չեմ կարծեր : Եւ չեմ ուզեր , չեմ կրնար այդպէս կարծել : Վենետիկի վանքին պէս հաստատութիւն մը պիտի մըն է մեր ժողովրդին համար , մեր ազգային գործարանաւորութեան ամենէն կենսական անդամներէն մէկը կը կազմէ : Անոր տկարացումը ազգին բարոյական կեանքին համար նուազում մըն է : Ոչ միայն Մխիթարեանները , ոչ միայն հայ կաթողիկ հասարակութիւնը , այլ ամբողջ Հայութիւնը փափաքելու է , եւ ջանալու է , որ Վենետիկի վանքը իր նախկին գէրքը վերստին գտնէ : Ատոր համար սակայն անհրաժեշտ է որ նախ Մխիթարեանք իրենց արդի կացութեան ճշգրիտ զգացումն ունենան : Հիւանդ մարդ մը որ ինքզինքը քաջաւորով կը կարծէ եւ ատով կը պարծի , չի կրնար բուժուիլ , որչափ ալ ուրիշներ յորդոր ու դարման չապլեն : Եւ ինծի կը թուի թէ Մխիթարեանք իրենց անկումին որոշ գիտակցութիւնը չունին : Հ. Երեմեանը ինքզինքը «արծիւ»

մը կը կարծէ . . . ապագայ հակառակորդներ(1) երեւակայելով , զանոնք առաջուց կը շանթաւ հարէ լատին առածովը՝ «Արծիւը ճանճերով չի զբաղիր »!!! Այսպիսի ինքնախարութիւններով , բուժութիւնը կը վախնամ որ դժուարանայ :

Մեծ առողջ ճիգ մը պէտք է , մեծ ազատ կամք մը , արժատական վերանորոգում մը : Վենետիկի Մխիթարեանները պէտք է որոշապէս համոզուին թէ անօթի Հայաստանցիները կաթողիկացնելու եւ բրինձի կամ կաթի վաճառականութեամբ փայլելու մէջ չի կայանար իրենց գերը : Մխիթար այդ վանքը հիմնեց որպէսզի հայ ազգը անկից լոյս , կեանք , գեղեցկութիւն բնորունի . Եւրոպա «Ակադեմիա» անուանեց այդ հաստատութիւնը . պէտք է որ Ս . Ղազարի վանքը վերստին դատնայ Ակադեմիա մը , աւրուեստի եւ գրականութեան տաճար մը : Արեւելիքը ուղղութիւնը փոխելուն մէջ է , ուժերը չեն որ կը պակսին . ես ո եւ է կանխակալ կարծիք , ո եւ է նախապաշարում չունիմ . թերեւս նոյն իսկ Հ. Երեմեանը եւ Հ. Ղազրիկեանը «ներկայանալի» գրագէտներ ըլլային այսօր , եթէ ուրիշ դաստիարակութիւն մը , ուրիշ ազդեցութիւն մը կրած ըլլային : Եւ հոն ամբողջ երիտասարդութիւն մը կայ հիմայ , ապագայ միաբանութիւնը . . . կը բաւէ որ գիտակից ձայն մը բարձրանայ վանքին մէջ , կը բաւէ որ վանքը յիշէ եւ ըմբռնէ իր անցիալը , եւ այդ սերունդը որ պատրաստուելու վրայ է , ապահովապէս պիտի տայ Ալիշաններու եւ Թագրատունիներու ճշմարիտ յայտններ :

Ո՛րքան գործ կայ մեր մէջ դեռ չկատարուած , եւ զոր Վենետիկի վանքին պէս հաստատութիւն մը միայն կարող է կատարել , եթէ ուզէ եւ զիտնայ : Հին ու նոր դասական հրաշակերտներուն նոր հայերէնի թարգմանութիւնը ամենակարեւոր , ստիպողական պէտք մըն է . ինչ որ Բագրատունի եւ Հիւրմիւզ ըրին գրաբարով , այսօրուան Մխիթարեանները պէտք է որ կրկնէին աշխարհաբարով : Վանքի կեանքը հին ու նոր լեզուներուն համոթութիւնը կուտայ իրենց եւ դասական գրականութեանց բնականօրէն կ'ընտելացնէ իրենց միաքը . կը բաւէ որ «կայծը» ունենան որ անհրաժեշտ է որպէսզի մարդ կարենայ , առանց մատնելու , թարգմանել Հոմերոսը կամ Սոփոկլէսը , եւ իրենցմէ է որ պիտի սպասենք յոյն-լատին գրականութեանց մեծ էջերը՝ արուեստագէտ ճշգրտութեամբ կանո-

նաւոր աշխարհաբարի մը թարգմանուած անյանգ ազատ տողերով կամ նոյն իսկ արձակ (ոտանաւորներու լաւագոյն թարգմանութիւնները արձակ թարգմանութիւններն են) . այդպիսի հրատարակութեանց շարք մը Վենետիկ վանքին ամենէն անկորուստ մեծագործութիւններէն մէկը պիտի ըլլար : Հին մատենագրութիւններէն յետոյ , պիտի ձեռնարկէին եւրոպական նոր գրականութիւններուն կարեւոր գործերը հայագնելու . Եսքիլէսէն ու Ովրատիոսէն յետոյ , պիտի ունենայինք իրենց շնորհիւ հայերէն Տանթէ մը , Սերվանթէս մը , Շէքսպիր մը , Ռասին մը , Ալֆիերի մը . այդ բոլորը կենսագրական ու գրական ուսումնասիրութիւններով ընկերացուած :

Ատկից զատ , Վենետիկ վանքը կրնար ձեռնարկել ուրիշ աշխատութիւն մը , նոյնքան կարեւոր — աշխատութիւն մը զոր ձեռներէց եւ անձնուէր անհատներ , ինչպէս Հ. Խորէն Ստեփանէ , սկսան կատարել , — այն է աշխարհաբարի վերածել մեր նախնեաց հեղինակութիւնները : Խորենացին , Եղիշէն , Ազաթանգեղաբ , Բիւզանդը , Լաստիվերտացին , Լամբրոնացին , Շնորհալին , Նարեկացին՝ թարգմանուած այժմեան աշխարհաբարին , ի՛նչ ծառայութիւն մը պիտի ըլլար հայ ժողովրդին մատուցուած : Եւ այդ աշխատութիւնը , ամբողջական ու վերջնական ձեւով մը , Վենետիկ վանքին միաբանութիւնը կրնար կատարել լաւագոյն կերպով քան ուրիշ ուրիշ խումբ մը :

Յետոյ , Վենետիկ վանքը պէտք էր հրատարակէր նախնեաց ձեռագիրներէն մնացած բազմաթիւ անտպիսիները , մասնաւորապէս բանաստեղծականները , որոնք պատմականներէն եւ վարդապետականներէն նուազ բազումներ եղած են : Ինչպէս հիմա՝ հրատարակման տեսակէտով : Երկու տարի առաջ , երբ պատիւ ունեցայ Մըխիթարի հաստատութիւնն այցելելու , տեսայ հոն անագին թիւով ձեռագիր Տաղարաններ , Գանձարաններ , Ոսկեփորիկներ , որոնց մէջ ԺԳ . ԺԴ . ԺԵ . ԺԶ . ԺԷ . դարերու կրօնական , զրուցաբանական , նկարագրական գրաբար բանաստեղծութիւններ եւ ուսման լեզուով հին սիրային երգեր , ժողովրդական տաղեր կան , ամենամեծ մասամբ անտպի : Հայկական յընարին այդ ամենէն սիրուն ու ինքնատիպ արտագրութիւններէն մաս մը Ռուսահայերը միայն փորձած են հրատարակել . Վենետիկ վանքը կրնար Հայոց հին բանաստեղծութեան այդ նշխարներուն ամբողջական

հրատարակութիւն մը ձեռնարկել , հարկաւոր ծանօթագրութիւններով հանդերձ :

Չեմ մոռնար որ Վենետիկ միաբանութիւնը «կրօնական» ընկերակցութիւն մըն է . ընդհակառակն , կ'ուզէի որ Միխիթարեանք աւելի ուշիմ , աւելի խորունկ կերպով յիշին այդ կէտը , եւ զայն զգալի ընէին իրենց արտագրութեանցը մէջ , Ալիշան , ատենով , իր Եղեալներն տակ լսելի ըրաւ միատեղական սքանչելի խոկումներ , եւ իր Տերուալին մէջ՝ մէկ քանի վսեմ օրհներգներ : Երեկուան վանքը թարգմանեց գրաբարով , Յիսուսի նմանութիւնը , Պոսիէի Գալիլեականութեան , Միլտոնի Իրախս կորուստը , եւն : Ս . Ղազարի վանքը կրնար շարունակել նուիրական յուզումներ , այդ հոգեկան ստեղծագործութեան աւանդութիւնն ալ . իրենց զ'այլելի կղզեակէն մեզի համար ո՛րչափ քաղցր պիտի ըլլար լսել երբեմն , մեր աշխարհիկ կեանքին տենդոս եւ մանր մէջ , Հոգիի նուագները որ կը խաղաղեցնեն , Անհունի ձայները որ կ'աշունակեն , Սիրոյ խօսքերը որ կը միխիթարեն : — Բայց պէտք է որ իրենք ալ չմոռնան թէ Հայ են , եւ թէ իրենց դերը եղաւ , երէկ , Հայկին ու Վարդանին Աստուծոյն թեւերուն տակ , Հայ Աստուծոյն օրհնութեանը տակ ապրող , մարտնչող , սառապող Հայ ժողովրդին Քերթուածը երգել : Թող երգեն : Իրենց պաշտօնը , իրենց խկութիւնը , իրենց նշանակութիւնը հոն է : Եւ մեր խեղճ ժողովուրդը , իր սուգին ու անձկութեանը մէջ , անհունապէս պէտք ունի մաքուր , կազդուրիչ , նորոգիչ նուագներու : Թող ձգեն լրագրական կուրսերը՝ աշխարհական մասովին որուն պաշտօնն են ատենք , թող ձգեն քննական աշխատութիւնները Վիեննայի միաբանութեան ու աշխարհական մասնագէտներուն որոնց գործն է այդ : — Իրենք , Ս . Ղազարի վանականները , թող իրենց գերագոյն գործն ու հրայրքը համարին Գեղեցկութեան բաշխիչ , Երգի մատուակ ըլլալ իրենց ժողովրդին , — պայմանով որ Միխիթարի գրաբարին պատմութիւնէն տարբեր բաներ երգեն եւ տարբեր ձեւով : Այն ատեն ամբողջ Հայութիւնը խանդաղատագին երախտագիտութեամբ պիտի նորէն խոնարհի Վենետիկ Տաճարին առջեւ :

Ս.յն երիտասարդ արեղաները որ վաղուան Միխիթարեանները պիտի ըլլան , այս տողերը կարգալէ յետոյ , թող վայրկեան մը կանգ առնեն Վանքին մեծ նրբանցքին պատը ծածկող հին Միխիթարեաններու պատկերներուն առջեւ .

Թող նային անոնց վեհապանձ , ազնիւ ու խուրին զէմքերուն , յետոյ թող ելլեն պատերէն զուրս ու զիսեն իրենց պաշտելի բոյնը պաշարող զիւթական , սրովբէական , մագնիսական բնապատկերը , — Վենետիկեան անբաղդատելի երազանկարը , — եւ ապահով եմ որ զիս պիտի հասկնան :

Ահաւասիկ ինչ որ ես կը մտածեմ , կը զգամ ու կը մաղթեմ Վենետիկի վանքին համար , —

ես՝ ամենէն խոնարհ եւ ամենէն խանդավառ հիացողը այդ վանքին : Եւ այսօրուան միաբանութեան մէջ եթէ գտնուին անձեր որոնց յողուածս անախորժ կարենայ գալ , ես զիտեմ մէկը որ ինձի համակարծիք է սրտանց , եւ այն մէկը որ ամպերուն մէջ կը բնակի հիմա , Մխիթար կը կոչուի :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ԶԵՐԹՈՒԿԾ

ՀԱՆԳԻՍՏԻ ԻՐԻԿՈՒՆ

Բոլոր խարտեաչ իշխանուհիները պորփիւրէ պալատներուն ,
 Տօնի երկայն վերարկուներով ,
 Ապրիլի կէսօրի մը մէջէն ,
 Իրենց արծաթէ կողովները ծաղիկով լիցուցած ,
 Այցելութեան գացին զիւզի անձկոտ աղքատներուն :

Դիշեր մը ամբողջ անհունօրէն ,
 Հիւանդներու քով հսկեցի .
 Ու անտառին մէջ թափառող բոլոր կոյրերը ,
 Երկիւղածարար , այս իրիկուն ,
 Մարմարէ եկեղեցին առաջնորդեցի :

Թխապարտները ամայի պարտէզին մէջ կը պառտին ,
 Իրենց չղթաները լուսնին տակ հընչեցնելով ,
 Ու քաղցրօրէն , սահող գետերու կը խորհին ,
 Չհնձուած կանանչ դաշտերու ,
 Ու մայրերու որ իրենց ծաղիկներ ու լամբար մը կը պատրաստեն

Հեռաւոր ջուրի մը եզերքը քանի մը դազազ գամեցին ,
 Յաւիտենական ոսկի մուրձերովը Խենդութեան :
 Ու կարծեմ թէ բոլոր գթութեան քոյրերը
 Ճերմակ կտաւներ կը կարեն ,
 Անձրեւի իրիկուն մը ,
 Վրանի մը տակ , ուր վերաւորուածներ նայուածք նայուածքի կը քնանան . . .

Մառախուղին մէջէն գառնուկներու խուճը մը անցաւ ,
 Որ հիմա , տխուր , զէպ ի սպանդանոց կ'աքսորուի ,
 Անգամահատուող անմեղ , պայծառ տղաքներու ճիչերով

Ու բարեկամներս թունաւոր ծաղիկներ քաղեցին ,
 Իմ հեռաւոր գերեզմանս զարդարելու համար :

Ու փոթորկի գիշեր մը թշնամիի մը ձեռքը եղբայրաբար սեղմեցի ,
 Հիւժարաբաւոր աղջիկ մը համբուրելէ առաջ :

Օ՛, բայց ես լամբարս հիմա պիտի մարեմ ,
 Ու բոլոր փեղկերը պատուհաններուն՝
 Ամենը մէկ պիտի փակեմ շտապով,
 Ազոռաներու բոլոր քլրքիջներուն դիմաց՝
 Որ խաւարին մէջէն , ա՛յնչափ մահազուժօրէն ,
 Այս իրիկուն զէպ ի հոպիս կը թեւեն . . .

Ու վաղը քեզի հետ արիւնտա գետը պիտի նաւարկենք ,
 Արշալոյսէն առաջ արիւնտա գետը պիտի նաւարկենք ,
 Հաննելու համար , ո՛ւր , չեմ գիտեր , թերեւս հոն ,
 Ուր դուն ալ , ու ես ալ , ու ամենքս ալ Հանգիստը պիտի գտնենք :

ՀՈՓԵՎԱՐՔԻ ԻՐԻԿՈՒՆ

Անտառին բոլոր ծառերը անհունօրէն ,
 Զիրենք հալածող մեծ ցամաքահովէն ,
 Իրարու մէջէ
 Դէպ ի ջուրերը
 Խեղճեղօրէն քալել կը սկսին . . . :
 Ու բոլոր արտած անասունները հեռաւոր ճամբաներուն ,
 Անշարժ , իրարու հետեւէ ,
 Զրենին մէջէն , զէպ ի լուսինը ունալ սկսան . . .
 Ինձի աջապէս կուգայ որ սովալլուկ բորենիներ ,
 Գերեզմաննոցին անկիւնը ,
 Աճապարանքով ,
 Հողէն հանուած մեռելները բզբեցին . . .
 Ալիքները մինչեւ աշտարակը բարձրացան՝
 Այրի աղանիները մոլեգնաբար ահաբեկելով :
 Ու կամուրջներու տակի բոլոր թափառիկները ,
 Ու բոլոր նիհար շուները մեծ փողօցներուն
 Հովերուն մէջէն , յուսահատօրէն ,
 Թիարանին գոնիքը ապաստանեցան :

Ո՞վ գիտէ , հովերը ե՛րբ , ե՛րբ պիտի դադրին
 Ու մինչեւ ե՛րբ աղաղակները պիտի շարունակուին
 Լքուած անասուններուն ,
 Հեռաւոր ճամբաներէն անդին :

Փլած կամուրջէ մը հարսնեւորներ կ'անցնին . . .
 Ու փայտէ սրունքներով կոյրեր կ'աճապարեն
 Զրանցքին քարափներէն , տաժանօրէն զէպ ի վար ,
 Վերջապէս հասնելու համար
 Սահանքներուն բերանը ,
 Ուրկէ՛ խղճուողներուն ճախերը բոլորը մէկէն
 «Օգնու թի՛ւն , օգնու թի՛ւն , օգնու թի՛ւն» կ'աղաղակեն . . .

Ու կարծեմ թէ բոլոր կրօնաւորները վանքերուն ,
 Այս իրիկուն
 Երկարօրէն աղօթելէ ա՛լ յուսահատ՝
 Բոլորը մէկ՝ մտախնդէ գինով՝ կը վախճանին :
 Ու հիւանդանոցին բոլոր անբուժելիները
 Մութ երկնքին վրայ , անողուտօրէն ու երջանկօրէն ,
 Գիշերներով իրենց աստղերը փնտոցին . . . :

Ո՛վ գիտէ հովերը ե՛րբ , ե՛րբ պիտի դադրին
 Ու մինչեւ ե՛րբ նայուածքները պիտի շարունակուին
 Լքուած հիւանդներուն ,
 Հեռաւորաբար արդէն մեռած աստղերէն անդին :

Ու այս բոլորին , այս ամենուն
 Հոգեվարքները ամբողջովին ,
 Ու ցաւերը տրամած անասուններուն ,
 Դանդաղօրէն , դանդաղօրէն իմ ներսիդիս կը փոխադրուին :

Բարիդ

ԱՏՈՄ ԵՍՐՃԱՆՆԱՆ



**ԳԵՐՄԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱ-
 ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ԵՒ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ
 ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ (*)**

1870—71ի Ֆրանկո-պրուսական պատերազմից յետոյ , երբ Գերմանիան յաղթող հանդիսացաւ , Տաճկաց յայտնի քաղաքապետը , Ալի փաշան , ասաց Պրօկէշ-Օստոնին , Պոլսի աւստրական դեսպանին . — « Պրուսիան կ'աշխատէ Աւստրիան իրան ընկերակից անել : Այս հանդամանքից յառաջ կը գայ Բարձրագոյն Դրան համար այն պաշտպանութիւնը , որից նա այսքան ժամանակ զրկուած էր » :

Շատ կարելի է որ Ալի փաշան արդէն այն ժամանակ հասկանում էր թէ գերմանական կայսրութեան հիմնուելուց յետոյ , սա՛ դառնալով մի նոր եւ անեղ ուժ , ինքն իրան պահելու եւ պահպանելու համար՝ հանդամանքներ ի հոսանքով պիտի հասնէր այն գրութեան ուր անկարելի է լինում բաւականանալ միայն նեղ եւրոպական քաղաքականութիւնով եւ պահանջ է գալիս խառնուել օրիգերական քաղաքականութեան յորձանքին մէջ :

(*) Գերման քաղաքականութեան մասին արդէն աւելի ենք ունեցել գրել եւ « Նովոէ Յրոգրենիէ » ուսումնասիրութիւն մէջ :

Այդպէս էլ եղաւ . այն Գերմանիան որ քառասուն յիսուն տարի սորանից առաջ մասնաւորապէս զբաղած էր իւր ներքին գործերով , բնականաբար մնացած պետութիւններուն անհանգստութիւն չէր պատճառոււ : Ոչ ոք չէր սպասում , որ այդ ներքին քաղաքական խմորումից մի լուրջ եւ վտանգաւոր բան կարող է յառաջ գալ : Կարծես թէ Բիսմարկը , որը , զիս գերմանական քաղաքականութեան վարիչը դառնալուց առաջ՝ եւրոպական զանազան մայրաքաղաքներում զեսպան էր եղած , կարծես թէ նա ցրել էր այդ ազգերի ուշադրութիւնը եւ կաշկանդել էր նոյա : Ամենից շատը կուրացել էին « ճանաչուած անընդունակութիւնը » , (ինչպէս Բիսմարկ գրում էր Բարիդից նաբոլէոն Գ. ի մասին) եւ Ռուսաստանը : Երբ Վերսալում հրուշակուեց գերմանական յեղեթի միութիւնը ընդհանուր կայսերական թափ տակ , այն ժամանակ միայն Բիսմարկի « վարժապետ »-ը , ուստի իշխան Գորչակովը (*) հասկացաւ ո՛րքան մեծ քաղաքական սխալ էր յափշտակուելու իր « աշակերտ » թոյլատրութեամբ պահել Սիւ Մովի վերայ պատերազմական նաւատորմ , ե՛րբ քան թանկ ծախեց Բիսմարկը իր օգնութիւնը Ռուսաստանին 1863 թուի Լեհաց ապստամբութեան ժամանակ — որպէս զի Ռուսաստանը չը-

(*) Բիսմարկը շատ անգամ իր մասնաւոր շահակալութեան մէջ իշխան Գորչակովին անուանում էր « վարժապետ » , « վարպետ » :

խանգարէ Գերմանիային ջախջախել Ֆրանսան : Ռուսաստանի արեւմտեան սահմաններում ստեղծուեց մի նոր հզօր պետութիւն , եւ ամբողջ Եւրոպան լուծեամբ հայուէր թէ ինչպէս «իւր միջավայրում բարձի տեղը (բուֆֆեր) կառուցանուէր մի հսկայական մարտկոց» :

Մինչեւ 1871, Գերմանացիները քաղաքական ամբողջ գիտակցութիւնը եւ հետաքրքրութիւնը պարտոււմ էր սա՛ գաղափարի շուրջը—գերմանական ցեղերի միացումը . այդ ցանկութեամբ որը դեռ այս դարու սկզբից արտայայտոււմ էին գերմանական բանաստեղծները եւ հրապարակաբանները , ծարաւել էր Գերմանացիների սիրտը : 1871 տարին զովացրեց այդ ծարաւը : Հասնելով իւր նպատակին , իւր իղձին , գերմանական «Միքայէլ»ը բնականաբար իւր աչքերը պիտի դարձնէր արդէն ուրիշ հարցերի վերայ , նամանականոց որ նոր «Միքայէլ»ը այլեւս ստաջուայ «Միքայէլ»ը չէր : Գաշնակցութիւններով եւ ռազմագիտական արտակարգ ուժերով ապահովացնելով իրան երկարատեւ խաղաղութեան սարիներ , ունենալով իւր մէջ ամբողջ եւ ներքին բազմակերպ զարգացման համար վերին աստիճանի նպաստաւոր հանգամանքներ (փոքր կեդրոններ , սահմանադրական միապետութիւն) , նոր Գերմանիան , ոչ թէ թուլացաւ 1871 թուականից , ինչպէս ոմանք ըստ պատու էին , այլ ընդհակառակն , շարունակոււմ էր աւելի եւ աւելի զօրանալ : Նոր եւ ահագին ուժեր երեւան եկան , որոնք բարձր ձայնով պահանջոււմ էին գործածութիւն : Գերմանական արժիւր իրօք արժիւր դարձել , նորա հորիզոնը լայնացել էր , նորա ամուր եւ վաշիչակաղմ թեւերը պահանջոււմ էին համապատասխան նոր գործունէութիւն , Գերմանական պետութիւնը շուտ դադրեցաւ բուականանալէ այն բարձր դիրքով , որին նա հասել էր—հաւասարների մէջնաջին դերը խաղալու : Բիւսմարկը ինքը անոււմ է առաջին քայլը դէպ ի տիեզերական քաղաքականութիւնը :

Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնից յետոյ՝ Անգղիան : Վեհաժողով պահանջեց : Նախարարապետ Բիսմարկը յայտնեց իւր յօժարութիւնը «արդար դալալու» (միջնորդի) գերը ստանձնել Անգլիացիների եւ Ռուսների մէջ : Բանալով Բերլինի Վեհաժողովը , նա ստաց . «Մենք հաւաքուել ենք այստեղ , որպէս զի ենթարկենք Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնը այն տէրութիւնների ազատ քննադատութեան , որոնք ստորագրել են 1856 եւ 1871 թուականների դաշնագրութիւնները :

Այս խօսքերից յետոյ անցան հազիւ 20 տարի , եւ «արդար դալալու» դերը նոյնպէս այլեւս չէր բուականացնում Գերմանիային . . . նա կամենում էր , կարծես , վերջապէս վարզել զիւմակը եւ գոռալ ամբողջ աշխարհին . «Ես էլ ունիմ իրաւունք տիեզերական հարցեր լուծելու : » Երկու տարի սորանից առաջ , Վիլհելմ կայսրը մեծ նաւատորմով ուղարկեց իւր եղբորը Չինաստան , մտադիր լինելով անձամբ այցելել Մօսակայ Արեւելքը :

Ինչո՞ւ այցելեց Վիլհելմ Բ. ր Սուլթանին : Երուսաղէմում Գերմանիոյ կայսրը ասաց . «Փայլը չէ , զօրութիւնը չէ , հոշակը չէ , երկրային բարիքը չէ այն ինչ որ մենք փնտռում ենք եւ ձգտում ենք՝ միայն մի բանի—ամենաբարձր բարիքի—մեր հողիների փրկութեան » Եթէ Դիոգինէսը կենդանի լինէր , նա կը վերցընէր իւր լապտերը այն մարդուն փնտռելու , որը հաւատում է այս խօսքերին :

Տաճկա-գերմանական ընկերակցութեան հարկաւորութիւնը յառաջ է գալիս Գերմանիայի հետեւեալ երեք նպատակներից . ա . Գաղաքական . պատերազմական , բ . Ելեւմտական , եւ գ . Գաղթականական :

Ա . Գաղաքական-պատերազմական շահեր . — Գերմանիայի քաղաքական հրապարակախօսներից ոմանք հաւատացնում են , որ եթէ ոոցա հայրենիքը մտադիր եւս չլինէր քաղաքականապէս աւելի զօրանալու , այնու ամենայնիւ ստիպուած է նա իւր ներկայ statu quoեւ պահպանելու հարեւար թողնել զուտ եւրոպական քաղաքականութեան նեղ շաւիղը եւ անցնիլ տիեզերական քաղաքականութեան լայն ճանապարհի վերայ : Այդ հաստատումը կարծես որ ճիշդ է :

Դառնալով առաջնակարգ մեծ պետութիւն եւ անսպասելի կերպով Եւրոպայի կեդրոնում պատերազմական բանակ ստեղծելով , Գերմանիան զորանով ստիպեց եւ ստիպում է մինչեւ այժմ իւր մօտակայ եւ հեռաւոր հարեւաններին՝ լարել բոլոր ոյժերը իրանց գոյութիւն ունեցող դրութիւնը պահպանելու համար : Միեւնոյն ժամանակ , նկատուած է , որ ցեղական ազգակցութեան դիտակցութիւնը սրբան դնում է այնքան աւելի է ուժեղանում : Այս երկու հանդամանքը յառաջ են բերում նոյն ցեղին պատկանող զանազան ժողովուրդների եւ տէրութիւնների համախմբումը , այնպէս որ ապագայ մեծ պատերազմը մի քանի պատմապէտնելը երեւակայում են , որպէս պատերազմ անդօսաքոսական , սլաւոնական , գերմանական եւ լատինական ցեղերի մէջ : Գերմանիան այս վերջին ցեղը կարծես թէ արհամարհում է , եւ իւր ապագան բուականին ապահով է համարում , եթէ յաջողի հնարել մի քաղաքական ծրարի , որով նա կարողանար կուուել անդօսաքոսների եւ սլաւոնների դէմ : Այս երկու ցեղերից առայժմ ի նկատի են առնում Անգլիացիները եւ Ռուսները . Անգլիացիներից վախենում են Գերմանացիք ինչպէս քաղաքական այնպէս եւ քաղաքակրթական տեսակէտից , Ռուսներից՝ միայն քաղաքական-պատերազմական տեսակէտից :

Գերմանիայի ներկայ անտեսական դրութիւնը ստիպում է նորան փնտռել իւր համար նոր շուկաներ , եւ նոր յարմար երկիրներ իւր գաղթականների համար . բայց այս ձգտման իրագործման մէջ՝ նա , ինչպէս եւ ուրիշ տէրու-

Թիւնները, յաղիւում են Անգղիային, որը գրեթէ աշխարհիս բոլոր նշանաւոր կէտերում զցել է իւր ճանկերը երկրագունաբնակիցեւի մէջ, եւ որի հետ մրցել հնչտ չէ։ Այդ խոստովանում են եւ Գերմանացիք. նոքա խոստովանում են որ Անգղիացիք աւելի եռանդուն, աւելի հարուստ եւ ձեռներէց են։ Նոքա ընդունում են որ Անգղիացիք մարդարանական ամենաբարձր տիպարն են ներկայացնում եւ թէ այդ պատճառով նորանք սպանում են մինչեւ անգամ գերմանական ամբողջ ինքնատիպ քաղաքակրթութեան՝ թէ՛ տեխնիկական եւ թէ՛ հոգեկան(*) : այս հանգամանքները թոյլ չեն տալիս Գերմանիային բացարձակ կերպով կոռել Անգղիայի դէմ, նամանաւանդ որ նենգամիտ Ալբրոնը կարող է յաղթուել միայն ծովի վերայ : Իսկ այդ ասպարէզում՝ Վիլհելմ Բ. ընչնայած նորա վառ երեւակայութեան, չէ էլ երազում համեմատուել Անգղիայի հետ :

Ի՞նչ անել :

Հարկաւոր է անուղղակի կերպով կոռել, երկրորդական եւ ծուռ մուռ ճանապարհներով խանգարել Անգղիային բոլոր իւր արտաքին քաղաքականութեան ձեռնարկներում։ Բայց մինչեւ անգամ խուլ գիմաշրութեան այս ձեւի համար հարկաւոր է դաշնակից : Դա—Ռուսաստանն է, որի պատմական շահերը դարձնում են նորան Անգղիայի անհաշտելի թշնամի, եւ որի կամքը ամենից լաւ է սանձահարում Լանտոնը : Այսպէս, գերման քաղաքական հրապարակաստները մեծամասնութիւնը ասում է, որ պէտք է շնորհիւ որպէս սկզբունք—բարձր հաւանաշխարհային հարցերում միակնայ Ռուսներին հետ Անգղիացիներին դիմ : Այս կարծիքը երեւան է գալիս որպէս պատասխան Գերմանիայի «Անգղիական կուսակցութեան» կարծիքին. «Անգղիա ատէրները» այն համոզմունքներն որ Ռուսաստանի ընկերութիւնը բոլորովին աւելորդ է, քանի որ անգղիական եւ գերմանական շահերի հակառակութիւնը կարող է լուծուել կամ մեղմացուել մի որ եւ է քաղաքական համաձայնութեամբ : Սոքա ի միջի այլոց հաւատացնում են որ Ռուսաստանը չափազանց ներշնչուած է այն գիտակցութեամբ որ նա ունի պատմական «միսին» Արեւելքում, որ նորա սպառնաւ պահովուած է : Ուստի նա կարեւորութիւն չզգալով դաշնակից ունենալ, նա ոչ մի լուրջ համաձայնութիւն չի կայացնելու Բերլինի հետ : Բայց չնայած այսպիսի մի քանի սրամիտ փաստերի, Գերմանիան, իրականապէս, հակառակ է դէպ ի «անգղիատեացիներին» պահանջները, եւ վերջինները իրաւացի են՝ ասելով որ Անգղիան նոյնպէս առհասարակ չափազանց դժուարութեամբ է ուրիշ տէրութեան հետ մի որ եւ է համաձայնութիւն կայացնում, եւ թէ

դաշնակցութիւն կապել Տէմիդի բնակիչներին հետ՝ նշանակում է շինել «leonina societas» (առեւծային ընկերութիւն), շահում է միայն Անգղիան :

Եթէ Ռուսաստանը հարկաւոր է Գերմանացիներին՝ որպէս դաշնակից Անգղիայի դէմ, նոյն Ռուսաստանի դէմն եւս նա պահանջ է զգում ունենալ մի ուրիշ ընկերակից : Պատասխանել որ Գերմանիա ունի արդէն ապահով դաշնակցութիւն, — Երբեակ Նիզակակցութիւնը, — անտեղի է, որովհետեւ խօսքը այստեղ ոչ թէ ժամանակաւոր պատերազմական վտանգի մասին է Ռուսաստանի կողմից, այլ աւելի լայն, պատմական վճանգի մասին : Այս տեսակէտից Ռուսաստանը սպանում է Գերմանիային (ինչպէս եւ ամբողջ Եւրոպային) քաղաքական, զինուորական գերիշխանութեամբ (hégémonie), այնպէս էլ եւ սլաւոնական հեղեղումով : Համաշխարհային տիրապետութեան միջոցները Ռուսաստանը քաղում է Արեւելքում, որովհետեւ նա ուժեղանում եւ մեծանում է Արեւելքի հաշուով : Այս հանգամանքից բնականաբար հետեւած է, որ ամենաուժեղ կերպով պէտք է նորան ընդգիմաղրել Արեւելքում, բայց Երբեակ նիզակակցութիւնը (ի նրկատի ունենալով Աւստրիայի ոյժերը) այդ խնդրին չէ կարող համապատասխանորէն ծառայել . . .

Առածի կարգ անցել է այժմ, որ Ռուսաստանը փափաքում է, «իւր ջղերի բոլոր հիւթերով եւ սրտի արիւնով», ձեռք բերել Պոլիսը : Յիմար է համարում նա որ կասկածում է թէ արեւելեան հարցը իւր բնական լուծման եթէ թողուի, էրզրումը կը պատկանի Ռուսաստանին : Պոլիսը մի ուժեղ տէրութեան կարող է ապահովեցնել Փոքր-Ասիայի իշխանութիւնը, այնպէս էլ էրզրումից կարելի է տիրել Հայաստանի եւ Միջագետքի վերայ : Իսկ Փոքր-Ասիայի եւ Միջագետքի տիրելը առաջնորդում է, ինչպէս հաւատացնում են արդի մի քանի քաղաքագէտները, դէպ ի համաշխարհային տիրապետութիւնը : Եւ պիտի նկատուել թէ Ռուսաստանը, աւելի քան ուրիշ ո եւ է պետութիւն, ունի շահեր այդ երկիրները նուաճելու : Գերմանացիներին համար այս յոռետեսական կշռադատութիւնները աւելի մտայնում են հետեւեալ հանգամանքից : Այն պետութիւնը, որ իր աշխարհագրական դիրքով պիտիկարողանար դիմադրել Ռուսաց արեւելեան տարածման, հետըզհետէ արտայայտում է իւր մէջ այնպիսի սիմպտոմներ, որոնք թոյլ չեն տային կոյր կերպով ապաւինիլ նորա վերայ այդ տեսակէտից : Խօսքը Աւստրիայի մասին է : Կարելի է ապացուցանել, որ եթէ համեմատենք Ռուսաստանի եւ Աւստրիայը անցիալները, կը տեսնենք որ զոցա պատմական վիճակները երեւան են հանում բոլորովին հակադրական ձգտումներ, նշաններ : Առաջինը զեռ եւս ամբողջացումի (intégration) ճանապարհի վերայ է, երկրորդը՝ կազմալուծումի (désintégration) :

(*) Յայտնի պատոր հուսմանը գրել է վերին աստիճանի հետաքրքիր և տաղանդաւոր մի գիրք «Asia», որտեղ է միջի այլոց ասում է, «Գերմանացին ոչ մի ժամանակ չէ դաւնալու թուրք կամ Ռուս, իսկ Անգղիացու առաջ նա խուճարհում է և տեսնում է ինչպէս իւր երէխայքը խօսում են անգլիերէն :

Այն ժամանակ երբ Ռուսաստանը ուժեղանում է, Աւստրիան, այդ sui generis «արեւելեան» տէրութիւնը (ինչպէս ցոյց է տալիս եւ իստքը — Oesterreich — «արեւելեան թագաւորութիւն») քայլ առ քայլ զրկուում է իւր թագաւորութեան մարմնի զանազան անդամներից: Ինչ վերաբերում է նորա ներկայ գրութեան, նա համարեա թէ յուսահատական է: Իւր ամբողջութիւնը վտանգի է ենթարկուած, որովհետեւ նա մաղի պէս ծակծկուած է սըլաւոնական տարրով: Իսկ սլաւոնական գաղափարը, «սլաւոնիզմը», հէնց այն գործիքն է, որով Ռուսաստանը սպառնում է անդադար, թէպէտեւ անյայտ կերպով, Աւստրիային: Իսկ Ռուսաստանը վախենում է որ եթէ ինքը որ եւ է փորձ անէ դրաւել Պոլսը, Աւստրիան նոյն միջոցին կը գնայ Սալոնիկ: քայց այս սպառնալիքի իրագործումը, իսկպպէս, կախուած է նորանից թէ Ռուսները Պոլսը գրաւելու միջոցին ի՞նչ գրութեան մէջ կը լինի Աւստրիայի թագաւորութեան ամբողջութիւնը եւ ի՞նչ յաջողութիւն կ'ունենայ սլաւոնական քարոզութիւնը: Եթէ Սալոնիկն ընկնի սլաւոնների ձեռքը, այն ժամանակ ձոնապարհը այդ տեղով դէպ ի Արեւելքը — Փոքր-Ասիան, Սիւրիան, Սուէզը — փակուած է Գերմանացիների համար ընդմիջտ, եւ Ռուսաստանը կը տանէ իւր բաւցարձակ յաջթանակը Արեւելքում:

Իտալիան:

Այս երկիրը ելեւմտական սնանկութեան է մօտեցել: Ինչ վերաբերում է նորա պատերազմական ոյժերին, որի համար ամբողջ երկիրը հեծում է ծանր տուրքերի տակ, այդ ոյժերն էլ մեծ յոյսեր չեն տալիս: Մտածեցէ՛ք որ Հոտովայիցիների ժառանգները երեւան են գալիս այժմ որպէս ողորմելի հարկատուներ մի ափրիկ'ան իշխանի: Յամենայն դէպս Գերմանացիք լուրջ նշանակութիւն չեն տալիս Իտալիայի ընկերակցութեան: Իտալիայի դերը ուղղուած է աւելի Ֆրանսայի դէմ:

Այսպէս դուրս է գալիս որ Երբեակ Նիդալակցութիւնը հազիւ թէ կարողանայ ծառայել այն խնդիրներին, որոնք բոլորում են Գերմանիոյ ներկայ գրութիւնից, իսկ այս գրութիւնը այն է որ Գերմանիան չըջապատուած է երեք կողմից անսելի թշնամիներով—Ռուսաստանով, Անգղիայով եւ Ֆրանսայով... եւ այդ պատճառով Վիլհելմ Բ.ը ձեռք է տալիս Արդիւ Համբիլին:

Ռուսաստանի վերաբերեալ ըողոր այստեղ յայտնուած կշռաբառութիւններից յառաջ է գալիս հետեւեալ քաղաքական ծրագիրը, որը Գերմանիոյ այժմեայ քաղաքականութեան երկրորդ սկզբունքը կարող է համարուել (ստաւջինը Անգղիայի մասին էր). բոլոր եւրոպական հարցերու ընդդիմադրել Ռուսաստանին: Հարկաւոր է ամբացնել Տաճկաստանը որպէսզի Ռուսաստան չ«տարքուի» այդտեղ. իսկ դորա համար հարկաւոր է ուժեղացնել Աւստրիան, իսկ եւ սորա համար, որպէսզի նա քաջալերուի

ուսենալով զօրեղ պաշտպան, պէտք է ուժեղացրնել Գերմանիան, ամբացնել գերմանական տարրը Եւրոպայում: Ամէն ինչ այստեղ մէկ միւսի հետ կապուած է:

Այստեղ յառաջ է գալիս մի դժուարութիւն. ինչպէս գործել Տաճկաստանում: Ո՞ւմ կողմը բռնել, Ռուսաստանի՞ թէ Անգղիայի: Մենք տեսնք որ Տաճկաստանի հարցին համաշխարհային նշանակութիւն են տալիս: Ուրեմն հարկաւոր է դիմադրել Անգղիական ձգտումներին այստեղ, եւ Ռուսաց կողմը անհրաժեշտ է: Բայց մենք այժմ նոյնպէս ցոյց տուինք, որ Գերմանիան պահանջ է զգում արդիւքներ դնել Ռուսաց յաջողութեանը՝ Մերձակայ Արեւելքում: Ուրեմն ի՞նչ անել, Արդեօք, գուցէ ոչ մի կողմը չբռնել եւ անկա՞խ գործել Երկրորդ: Կարելի է ասել որ, այցելելով Սուլթանին, Վիլհելմ կայսրը այդպիսի մտադրութիւններ ունէր, քայց մի քանի հրապարակախօսներ ցոյց են տալիս որ Գերմանիան դեռ եւս ուժեղ չէ այնքան որպէս զի անկախ (*) մրցէ Ռուսները, Անգղիացիները եւ մինչեւ անգամ Ֆրանսացիները դէմ: Այդ քաղաքականութիւնը մինչեւ անգամ վտանգաւոր է հանդիսանում, որովհետեւ նա հեշտ կարող է Ռուսներին միացնել Անգղիացիների հետ, Գերմանացիներին Տաճկաստանից քշելու համար: Ուրեմն եթէ անկախ էլ չէ կարելի գործել, ի՞նչ անել: Հրաժարուե՞լ տաճկական քաղաքականութիւնից: Դա անկարելի են համարում գերմանական քաղաքագետները, ի նկատի ունենալով այն շահերը որ ունի Գերմանիան Փոքր-Ասիայում:

Այս դժուար հարցը այսպէս է լուծւում:

Տաճկական հարցը համաշխարհային նշանակութիւն ունի, եւ, համաձայն վերոյիշեալ ըսկզբունքի, այդ հարցի մէջ Բերլինը ամենայն կերպով պիտի դիմադրէ Լոնտոնին: Այստեղ Գերմանիան չէ կարող գնալ Անգղիայի հետ միասին, որովհետեւ այս վերջինին անանդական քաղաքականութիւնը թիւրքիայում, եւ Թիւրքիային համանման երկիրներում, կայանում է նորանում, որ այդ քաղաքականութիւնը քայքայում է տէրութիւնը՝ ապստամբեցնելով սորա հպատակների ստորուկ եւ տանջուող տարրերը: Միանալով Անգղիայի հետ, Գերմանիան ակամայ ստիպուած կը լինի ի գործ դնել նոյն քաղաքականութիւնը ի վնաս իրան, որովհետեւ այդպիսի քաղաքականութիւնը աւելի է մօտեցնում Տաճկաստանի քայքայուելուն օրը — իսկ Գերմանիան դեռ պատրաստ չէ այդ ժառանգութիւնից հրամայողական կերպով իւր մասը պահանջելու: Կարելի է ասել որ նա մինչեւ անգամ այն աստիճան պատրաստ չէ, որ չէ կարող պահպանել այն կալուածները եւ

(*) Այդպիսի անկախ քաղաքականութեան մեջաջողութիւնը արտայայտուեց հէնց առաջին քայլերից—երկաթուղու հարցում:

իրաւունքները, եթէ սոքա նոյն իսկ ընծայուին նորան: Նա չունի համապատասխան նաւատորմ: Բաց ի դորանից՝ Գերմանիան վախենում է, ինչպէս ասացինք վերեւ, Անգղիայի հետ դաշնակցութիւնով կրկնել Ճրանագիրներով իճակը Եգիպտոսում:

Արդեւ եկեց այս ընդդիմութիւնը ինքն ինքնեան վիւժկոյ: ժառանգակ նշանակում է Ռուսաց կողմը բռնել:

Ահա եւ այս դժուար հարցի լուծումը. այնպէս որ ոչ թէ ներդրածական կերպով Գերմանացիք օգնում են ռուսական քաղաքականութեան՝ Պոլսում, այլ կրաւորական կերպով, միայն օգնութիւն անելով նոցա՝ Անգղիացիներէր զէմ, եւ Բերլինի կառավարութիւնը ամենեւին մտադիր չէ Ռուսաստանին carte blanche տալ եւ ասել «արի գործիր»: Ընդհակառակն ամբողջ իւր այժմեայ ձեռնարկութիւնները Փոքր Ասիայում՝ նպատակ ունին անկիսեղի կերպով դժուարացնել Ռուսաստանի ընթացքը զէպ ի այդ կողմերը:

Գերմանիայի բոլոր այդ ձեռնարկութիւնները որոնց նպատակն է Տաճկաստանի ամբայնելը, առանձին անհանգստութիւն չեն պատճառում Ռուսներին, որովհետեւ, նայած Ռուսաց աւանդական քաղաքականութեան եւ պատմական շահերին, որոնք պահանջում են ցանկաւ նալ Տաճկաստանի թուլանալը, այս րոպէիս, ներկայումս, այդ թուլութիւնը նոցա հարկաւոր չէ, եւ մինչեւ անգամ անցանկանալի. Ռուսաստան անկեղծ ցանկանում է այժմ խաղաղութիւն, եւ Թուրքիայի թուլութիւնը միայն միջոց կը տայ Անգղիացիներին՝ արեւելեան պղտոր ջրերում ձկնի որսալ: Այսպէս մի հարուածով Վիլհելմ երկրորդի տաճկական քաղաքականութիւնը երկու նպատակ է սպանում, այսինքն արժանանում է Սուլթանի անվերջ շնորհակալութիւններին եւ չէ զբրկելում Նիկոլա կայսրի բարեկամութիւնից: Պիտի նկատել այստեղ, որ անկասկած այժմ հաւատը որ ընծայում է Պետերբուրգը Բերլինին՝ կ'ընդհատուի, եթէ «Տաճկաստանի ամբացնելը» լուրջ կերպարանք ստանայ, եթէ Թուրքիան այդ միջոցով քիչ շատ վերածնութեան ընդունակ դառնայ, կամ եթէ Գերմանացիք Փոքր Ասիան շինեն իրենց համար «պապունց տուն»: Բայց եւ այս դէպքում, մեր կարծիքով, Բերլինի կառավարութեան համար դժուար չէ լինելու Ռուսների կասկածը եւ անբաւականութիւնը ցրել, որովհետեւ Գերմանիայի գործունէութեան նշանները շարժանը Փոքր Ասիայում, այն տեսակէտից է որ հեշտութեամբ կարելի կը լինի մի որոշ համաձայնութեան գալ եւ մինչեւ անգամ Ռուսներին անկեղծ շնորհակալութեան արժանանալ:

Երկու խօսք եւս Գերմանիայի տաճկական քաղաքականութեան պատերազմական շահերի մասին:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, թէ գերմանական կայսրութիւնը ունի անազնի

եւ բազմակողմանի շահեր որոնք նա պիտի լուծի, այն հանգամանքը թէ նա չըջապատուած է զօրեղ թշնամիներով եւ թէ կարեւոր դէպքում դժուար է բոլոր յոյսերը դնել Երրեակ Նիզակակցութեան վերայ, ընականաբար նա աշխատում է ամէն պաշարաներից օգտուել իւր դիրքը տպանովելու համար: Ոչ մի ընկեր նա չէ կարող արհամարհել, եւ պիտի խոստովանել որ Տաճկաստանը պատերազմական տեսակէտից դեռ շատ ուժեղ է. այդ աղացուցանեց 1877-78ի պատերազմը (մեր յեղափոխական գործիչները իրենց կարծատեսութեամբ Թուրքիայի քաղաքակրթական թուլութիւնից եզրակացրել են, որ նա պատերազմական տեսակէտից նոյնպէս չնչին է, այնքան չնչին, որ հայկական հայրուկները հեշտութեամբ կ'օչընչացնեն Տաճկաց զօրքերը):

Ի հարկէ Վիլհելմը չէ կայացրել Սուլթանի հետ ոչ պաշտպանողական ոչ էլ յարձակողական դաշնակցութիւն, բայց այնու ամենայնիւ Տաճկաստանը ռազմագիտական կողմից վերանորոգելու ձգտելով, նա հետեւել է այն նպատակին, որ Թուրքիան ուժեղանալով, կը դառնայ Գերմանիային դաշնակից Ռուսաստանի զէմ: Այն ժամանակ երբ Տաճկաստանը պատերազմական մտքով աւելի վտանգաւոր կը հանդիսանայ Ռուսաստանի աչքում քան թէ նո է այժմ, այն ժամանակ դորանով ստեղծուած կը լինի Ռուսաստանի համար աւելորդ հարցեր: Խաղաղ ժամանակ, նորա քաղաքական ուշադրութիւնը ցրուած կը լինի, իսկ մի եւրոպական պատերազմի դէպքում նա ստիպուած կը լինի պահել Տաճկաց սահմաններում աւելի շատ զօրք քան թէ այդ կը պահանջուէր եթէ «հիւանդ մարդը» թողուած լինէր իւր վիճակին — յառաջդիմական անդամաւորութեան:

Բ — Ելեւսական շահեր:

Մենք չենք բերելու այստեղ զանազան թուանշանները՝ Գերմանիայի ընակչութեան աճումին, իւր զիւղատնտեսական ուժերի, եւ արհեստագործութեան պահանջներին վերաբերեալ: Մի հեղինակի հետեւեալ խօսքերը բաւականաչափ ամփոփ բացատրում են Գերմանիոյ տաճկական քաղաքականութեան տնտեսական նշանակութիւնը:

«Մենք անող ժողովուրդ ենք: Շուտով մեր թիւը կը հասնի վաթսուս միլիոնի, եւ դորանից յետոյ՝ եօթանասուն միլիոնի: Այս միլիոնները ցանկանում են հաց եւ աշխատութիւն. միայն գերմանական աբաով մենք երբեք այլ եւս չենք կարող ապրել: Որքան որ մեր ոչ իւղատնտեսութիւնը բարձր աստիճանի վերայ կանգնած լինի, այնու ամենայնիւ մենք պիտի ունենանք աւելի շատ գործարանների ծխնելոյցներ, որոնք պիտի ծխեն աշխարհային շուկայի համար: Սա կ'ենտական շահ է արուեստագէտների, ձեռնարկուների, վաճառականների եւ աշխատաւորների»:

Ուրեմն Գերմանիան պիտի լայնացնէ իւր շուկաները, փողեր բերէ հայրենիքը եւ զոցանով գնէ իրան համար հաց եւ ուրիշ պիտոյքներ :

Կարելի է բնական համարել, որ գերմանական քաղաքագէտները, նպատակ ունենալով այս, իրանց ուշադրութիւնը դարձրել են Փուրքիայի, կամ աւելի հիշք ստած՝ Փոքր-Ասիայի վերայ Գերմանիան ինչպէս եւրոպական աշուտութիւն, նոր չէ, հին է, բայց որպէս առաջնակարգ մեծ պետութիւն՝ զեռ երիտասարդ է : Այս պատճառով նորա ուժերը հազիւ թէ բաւական կը լինէին այն զժուարութիւնները յաղթելու համար, որոնք կապուած են այնպիսի նոր երկիրների («նուաճման») հետ որոնք չափազանց հեռու են ընկած մայր երկրից, եւ իրանց բնաւորութեամբ՝ չափազանց զանազանուում են այս վերջինից : Ինչպէս ամէն մի դոքս, մանաւանդ եւ գաղթային քաղաքականութիւնը պահանջում է երկարատեւ փորձառութիւն, միայն ընդհանուր քաղաքական խնայողութիւնը բաւական չէ :

Հետեւապէս գերմանական կայսրութիւնը պիտի նախադասէր ոչ-հեռաւոր երկիրները : Արդէն ստաջին այս հանգամանքի հիման վերայ Փոքր-Ասիայի ընտրութիւնը կարող է յաջող համարուիլ : Այս հանգամանքին միանում են ուրիշ հանգամանքներ, օրինակ, Բարձրագոյն Դրան «ընդունակութիւնը»՝ ազգեցութիւններ կրելու, Փոքր-Ասիայի բնութեան յատկութիւնը՝ առատ վարձատրելու այն աշխատութիւնները, որոնք ուղղուած են նորա բարեօրման :

Նուաճումները լինում են երկու տեսակի՝ պատերազմական եւ անեւտրական : Բացաւրութիւնների պէտք չկայ, որ Գերմանիան առ այժմ կարող է ինկատի ունենալ Փոքր Ասիայում միայն երկրորդը :

Ահա այն տնտեսական նպատակները, որոնց իրագործման վրայ աշխատում է այժմ գերմանական քաղաքականութիւնը Պոլսում .

ա. Գերմանական երկաթուղիներ անցկացընել Փոքր-Ասիայով եւ Միջագետքով :

բ. Գերմանական արուեստագործութեան բերքերը տարածել ամբողջ Տաճկաստանում :

Այս երկու վարչական նպատակներին միանում է եւ մի խնդիր, որը առայժմ զբաղեցնում է է միայն հասարակութեանը եւ քաղաքական հրապարակախօսներին .

գ. Գերմանական գաղթականութիւններ հիմնել Փոքր Ասիայում :

Այս երեք նպատակները միմեանց հետ սերտ կապուած են : Փորձենք մեր ցոյց տուած յաջորդականութեամբ ծանօթանալ այդ նրեք ընդհանուր նպատակներին հետ :

ա. 1888—1892 տարիների միջոցում Գերմանական Բանկը (Deutsche Bank) երկաթուղի հաստատեց Հայդար Փաշայից մինչեւ Անգորա, 1893ին նոյն գրամատուներ իրաւունք ստացաւ շարունակել գիծը Էօկիէհրից մինչեւ Կոնիա եւ մեծ յաջողութեամբ կատարեց եւ այս ծրարագիրը : Այս ձեռնարկները մեծ օգուտ բերին

ինչպէս Փոքր Ասիային, այնպէս եւ Գերմանիային : Ինչ վերաբերում է վերջինին, բաւական է յիշել որ երկաթուղու բոլոր անհրաժեշտ նիւթերէնի 2/3 մասը վեր է առած գերմանական արուեստագործութիւնից :

Այժմ որպէս յայտնի է, Գերմանիան առաջարկում է որ իրան թոյլ տուի անցկացնել մեծ երկաթուղի, գոյութիւն ունեցող երկաթուղու վերջին կէտից (Անգորա կամ Կոնիա) մինչեւ Բաղդադ : Այս գաղափարը Տաճկաստանի համար նոր չէ. նա արդէն քսան տարիից ի վեր զբաղւում էր այն հարցով, որպէսզի մեծ երկաթուղի շինուի Արշիպեղագոսի ավերից, ամբողջ Փոքր Ասիայով, բայց ինչպէս փողի պակասութիւնը, այնպէս էլ կառավարական շրջաններում որոշ համաձայնութեան բացակայութիւնը՝ մինչեւ այժմ խանգարում են այդ ծրագրի իրագործումը : Այդ անհամաձայնութիւնը հետեւեալն է . պատերազմական նախարարութիւնը, անհրաժեշտ համարելով նոր երկաթուղիներին համար այնպիսի մի ծրագիր, որով Ռուսաց զէմ մղուած ապագայ պատերազմում կարելի լինէր արագ հաւաքել Փոքր Ասիայի զօրքերը Ռուսաց սահմանների մօտ, պահանջում է իւր ծրագիրների իրագործուելը .

- 1. Անգորա—Կեսարիա—Սվազ—Էրզրում .
- 2. Կոնիա—Ազանա—Մարաշ—Հալէպ .
- 3. Անգորա—Կեսարիա—Սվազ—Մալաթիա—Դիարբեկիր—Մուսուլ—Բաղդադ :

Այս գծերը պիտի լինին գլխաւոր երկաթուղիական գծերը :

Այս ծրագրի զէմ, հանրային շինութիւնների նախարարութիւնը, ի նկատի ունենալով տընտեսական շահեր, ցոյց է տալիս իւր հետեւեալ ծրագրերը .

- Գլխաւոր գիծը .
- 1. Անգորա—Կեսարիա .
- 2. Կոնիա—Ազանա—Մարաշ—Հալէպ — Բաղդադ :
- 3. Հալէպ—Դամասկոս :

Դէպ ի Ռուսաց սահմանները եւ Սեւ Ծովը տանող գծերը կարող է լինել եւ երկրորդական երկաթուղի : Թրքական հանրային շինութիւններին նախարարութիւնը իր ծրագրով աչքի առաջ ունի, հակասակ պատերազմական նախարարութեան, անեւտրական-տնտեսական շահեր : Ինչպէս տեսնում ենք, լուրջ հարցը նորանում է թէ ո՞րտեղ պիտի դարձնուի գլխաւոր ուշադրութիւն . Մեծ Հայաստանի՞, այսինքն Ռուսաց սահմանների՞, թէ Անատոլիայի հարաւային մասերի վերայ :

Իսկ ահա գերմանական ծրագրերը .

- 1. (Հիւսիսային) Անգորա—Կեսարիա—Սվազ—Մալաթիա — Խարբերդ — Դիարբեկիր — Մարդան—Նիզիբին—Մուսուլ—Էրբիլ—Կարկուլ—Բաղդադ—Բասրա (Շաթ-Էլ-Արաբի մօտ) :
- 2. (Հարաւային) Կոնիա—Ատանա—Այնտար—Բիրիճիկ—Ուրֆա—Դիարբեկիր — Մարտան — Նիզիբին, եւն . մինչեւ Բասրա :

Թէ ինչո՞ւ գերմանական գրամաղխական

ընկերութիւնը մինչեւ այժմ չէ կարող որոշել այս ծրագիրներէն ո՛րը գերադասել, սորա պատճառները զանազան տեսակի են . այդ ընկերութիւնը հակուում է զէպ ի հարաւային ծրագիրը, որովհետեւ հիւսիսայինը մեծ գծուաբութիւններ կարող է յառաջ բերել գերմանօպուսական քաղաքականութեան մէջ . բաց ի դորանից, հիւսիսային ծրագիրը ներկայացնում է աւելի մեծ ճարտարապետական դժուարութիւններ, եւ աւելի թանգ պիտի արժեհնայ քան հարաւայինը :

Սուլթանը, եւ Երզրզի պատերազմական կուսակցութիւնը իր կողմից, թողնելով իւր սեփական ծրագիրները եւ ղեկավարուելով զերմանական ծրագիրներով, ընդհակառակն յայտնում են Գերմանացիներին թէ՛ կ'ուզենային որ նոցա լոկոմոտիվները սլանային զէպ ի Էրզրում, կտրատելով հայկական լեռները : Այս պատճառով բաւականին զարմանալի է որ Էրնեստ Ռեյխնիցերի անդղիական ծրագիրը, որ զանազան ուրիշ ծրագիրների հետ նորերումս Սուլթանին առաջարկուած էր, թէ՛ Սուլթանին եւ թէ՛ Բարձրագոյն Իրան առանձին ուշադրութիւնը գրաւած է . զարմանալի է որովհետեւ Ռէյխնիցերի նախագիծը համապատասխանում է աւելի գերմանական հարաւային ծրագրին : Գուցէ պատճառը պէտք է այն հանգամանքում փնտել, որ Ռուսները աշխատում են այժմ ամէն կերպ Պոլսում ընդգիծադրել որ եւ է «գերմանական» երկաթուղու ծրագրի զէմ՝ Տաճկաստանում, եւ հակում ունին աւելի ֆրանսական կամ անգղիական ծրագիրներին, եթէ բոլոր առաջարկուած երկաթուղիները ծրագիրներից մէկը անխուսափելի կերպով պիտի ստանայ իւր իրաւորձումը : Ինչպէս Թալզի մի թղթակից գրում էր Վիեննայից, Ռուսաստանը ամենեւին չէ ուզում որ Միջագետքի լուրջ հարցի մէջ խառնուի մի նոր պետութիւն—Գերմանիա, եւ կը ցանկանար Անգղիայի հետ ապագայ պատերազմում այդտեղ գործ ունենալ միմիայն Անգղիայի հետ :

Երկաթուղիները այս լուրջ հարցի ներկայ դրութիւնը այնպէս է, ինչպէս յայտնուած է Անանիսի նախորդ համարում, այսինքն շատ հնարաւոր է, որ երեք մրցակիցներն էլ, այսինքն Անգղիացիք, Գերմանացիք եւ Ֆրանսացիք, միանալով ձեռք կը բերեն Բաղդադի երկաթուղու թոյլատրութիւնը : Այդ իրաւունքները մտադրուած է հետեւեալ համեմատութիւնով որոշել . 42 0/0 Գերմանացիք, 38 0/0 Անգղիացիք, եւ 20 0/0 Ֆրանսացիք : Վերին աստիճանի հետաքրքրէ է որ, ինչպէս Երզրզում այնպէս էլ Բարձրագոյն Իրան մէջ, մի հակում կայ զէպ ի անշղիական ծրագիրը (Ռէյխնիցերինը) : Ռէյխըրի Գործակալութեան Պոլսոյ ներկայացուցիչը յայտնում է որ Թուրքերը յարաբերութիւնները զէպ ի Գերմանիան ստուել են, եւ ընդհակառակն ձգտում կայ չկորցնել, եւ մինչեւ անգամ գրաւել, Անգղիայի ընկերակցութիւնը :

Երեւի դա է պատճառը, որ Գերմանական Իրմաստունը միացել է Օսմանեան Իրամատան «Վիթալիս» ճիւղի հետ, որպէս զի միասին մրցին Անգղիացիների զէմ : Ինչպէս վերջին հեռագիրները յայտարարում են, սեպտեմբեր 12ին այդ երկու Իրամատունների մի յանձնախումբը ճանապարհ ընկաւ Պոլսից զէպ ի Կոնիա, եւ այդտեղից հարաւային նախագծի ճանապարհով (տե՛ս վերեւ) զէպ ի Բաղդադ՝ նոր հետազոտութիւններ անելու : Գերմանական Գեօլոգիք Չայքունկ լրագիրը աւսում է որ այդ հանգամանքից երեւում է թէ հիւսիսային ծրագիրը առայժմ թողուած է, եւ թէ այն գրամը որ պիտի ծախուի այդ յանձնախումբի վերայ (300-400 հազար մարկ) ցոյց է տալիս որ ձեռնարկողները լուրջ են զբաղուում իրանց խնդրով :

Այս յանձնախումբը յամենայն զէպս իւր հետազոտութիւնները չէ վերջացնելու մարտամից առաջ :

Անկախ այն օգտից, որը ցոյց տուինք վերեւ, այսպիսի ձեռնարկութիւնները մեծ նշանակութիւն ունին եւ Գերմանիոյ ելեւմտական շահերի երկրորդ կէտի համար՝ Տաճկաստանում, այսինքն՝ Գերմանական արուեստագործութեան արտադրութիւնները սարածել անրոյց Տաճկաստանում :

Մրագրուած երկաթուղիները կարճ միջոցում կը զարգացնեն երկրագործութիւնը Փոքր Ասիայում, կը հարստացնեն բնակիչներին եւ կը կարգաւորեն նոցա կեանքը, նոցա մէջ նոր ձգտումներ եւ պահանջներ առաջ կը բերեն, եւ գորանից յետոյ արդէն գերմանական վաճառականները իրենց ապրանքներով կարող կը լինին մեծ յաջողութիւն ունենալ այստեղ . իսկ այժմ, երբ Անատոլիայի բնակիչները, գիւղացիք, չափազանց աղքատ եւ առանց պահանջների են, արուեստագործութեան առարկաները այստեղ մեծ զժուարութեամբ պիտի տարածուին . Հայդար Փաշա — Անգորա եւ Էսկիշէնիք — Կոնեա գոյութիւն ունեցող գծերը ապացուցել են այդ :

Ի հարկէ՛ բաց ի այս երկարատեւ միջոցից, Գերմանացիք ամենայն միջոցներ կը գործադրեն, որպէս զի ներկայումս յետ մղեն օտար վաճառականների ւայրանքները Պոլսում եւ ուրիշ քաղաքներում : Վիլհելմի ընկերակցութիւնը Սուլթանին հետ՝ մեծ օգնութիւն կարող է հասցնել այդ ձգտումին :

Գալիս ենք երրորդ հարցին, այսինքն՝ Գ.—Գաղղակական հարցին :


Ինչպէս ասացինք, Բերլինի կառավարութիւնը այժմ ամենեւին չէ զբաղուում այս հարցով, եւ ընդհակառակն կարելի է սպասել որ նա թշնամաբար կը վերաբերուի այս ձգտման, երբ իւր հպատակները ձգտին այսպիսի բան իրագործել Փոքր Ասիայում, որովհետեւ գործնով ինչպէս Սուլթանի այնպէս էլ սուս կառավարութեան մեծ զժգոհութիւններ կարելի է պատճառել : Այսու ամենայնիւ այս գաղթա-

կանական հարցը շատ է հետաքրքրում մի շարք հրապարակախոսներին եւ քաղաքատնտեսութեան գիտնականներին (այստեղ նկատի է առնուում, ի հարկէ, ոչ թէ մասնակի գաղութումներ, այլ կազմակերպուած գաղթականութիւնը (colonisation):

Այնպիսի գիտնականներ ինչպէս Յր. Լիւթ, Բոչէր, Բոգբերթուս, Ֆրանսացի Լըրուա-Պուլիէօ, յետոյ զինուորականները որոնք լաճանօթ են թիւրքիայի հետ, Մոլթէն, Յոն Տէր Կոլց փաշան եւ ուրիշները, այն կարծիքն են յայտնում, որ Փոքր-Ասիան մի ասպարէզ է ներկայացնում գերմանական գաղութների համար, իսկ ոմանք մինչեւ անգամ հաստատ կերպով ասում են, որ Փոքր Ասիան ասպագայում կը ներկայացնէ մի գերմանական գաղութ:

Այս ձգտումների մասին երկար չենք խօսելու այստեղ, որովհետեւ նոքա շատ կնճստ են մինչեւ անգամ Գերմանացիների համար. բաւական է ցոյց տալ որ մեծ անհամաձայնութիւններ կան գաղութներէ ճեղի վերաբերմամբ. օրինակ՝ մէկ հեղինակը ցոյց է տալիս Փոքր Ասիայի հիւսիսային մասերում յարմար սեղեր գերման գաղթականութեան համար, այսինքն Ատաբազարի հարաւային մասերը, Սաքարիա գետի ափերը, Էսկիշէիքի եւ Քուտայի շուրջը, յետոյ Պուրսաք գետով գէպի Անգորա. միւսը ցոյց է տալիս Սիւրիայի երկիրները, իսկ ոմանք, — Կիլիկիան, եւ առհասարակ արգի եւ ասպագայ գերմանական երկաթուղու գծերի եզերքը գտնուող երկիրները: Գերմանիայի ներգործական միջամտումը Արևելեան Հարցին մէջ, եւ իւր ըլլոր ծրագիրները, անկասկած, մեծ նշանակութիւն ունին Հայերի համար: Դորա մասին հետեւեալ համարում:

Պարիզ ԳէՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԷՕԶԵԱՆ



Մենաւորին հեծութենէն կըրծարախ Կը գըզըզի խոտջն անլոյս, փապար խոր, Տըբտում հոգւոյ գուբ ստուերալից քարափոր, Ուր ամենայն ձայն զըզման ողբ է գանդաղ:

Հող ոչ կանթեղ կայ, ոչ ճաճանչ մանրամաղ՝ Այլ խաւարի ցաւ եւ կական վըշտաւոր. Հող առ Աստուած կ'աղաղակէ սուրբ Գրիգոր, Ու կը քըսէ գետնին վըրայ ճակատ պաղ:

Փըրկէ՛ գանի, միայնութեան մո՛ւթ քաւիչ, Բազմորոգայթ փորձութենէն մեղսաշատ. Փըրկէ՛ գանի՝ աղերսաւոր սըբտի ճի՛չ:

Եթէ գանի պըղծեց բոցոս ժանա խարհուրդ, Թող գապաթին վըրայ վերէն անընդհատ Իյնայ կաթի ասպաշխարման շիթ մը ցուրտ:

Բ

Կ'աղաղակէ այսպէս՝ Աստուա՛ծ, յոյս սրտիս, Կը պապակիւմ ճառագայթիդ սըբբութեան. Տեսութենէդ մի՛ զիս զըկեր յաւիտեան, Ու բարկութեանդ կապանօք մի՛ կապեր զիս:

Գըծուծ ու սին կեանք մը տըւիր թըշուարիս Որ լամ՝ եւ դու կընքես մուրհակ թողութեան. Կը յօրինեմ գիշեր ցորեկ դառն մատեան Դառն հեծութեանց՝ որ ճենճերե՛ն իմ հոգիս:

Ու թող թոքերս լըլկին, լեղուս սեւանայ, Թող փըտախմ, թող մահ բուրեմ, թող բառնամ [կոծ Բայց ողորմէ՛ ինձի, Աստուա՛ծ Աստուածոց:

Թող ես դառնամ մեռելօրհնեաց քահանայ Եւ դիաթաղ ինձի, սակայն, ո՛վ Անմահ, Թող որ մտնամ երկնից Քաղաքն ամրապահ:

Գ

Բայց յաշաղկոտ չար արեղայք սըբտով փուտ, Նախանձալից կը հընհընան միասին, Եւ վանատան բակը նըստած կը խօսին — Դա հերձուածող է, ծայթ է, կեղծ է եւ սուտ:

Կը բամբասեն: Ու նոր ժողված կարմիր թութ Ըսկուտեղով ահա քաշած առջեւնին Կը բաշխեն թուխ բըզբըզուկէ մը գինին, Կը հըռհըռան խոլոտեղով բըբեր մութ:

Կ'արհամարհէ ըզմեզ, կ'ըսեն, ինք միայն Կը փափաքի ստանալ համբաւ սըբբութեան: Դա՛տ վարենք, դա՛տ, եղբա՛րք, մեզ պէտք է [ատեան:

Իշխանաւոր, Եպիսկոպոս ամենայն Պէտք է գիտնան՝ դեւի է դա որոգայթ, Պիղծ է Գրիգոր, աղանդաւոր է եւ ծայթ:

Դ

Ո՛վ սուրբ՝ ահա հրաւիրակներն որ կուգան, Կուգան կ'ըսեն՝ Մեծաւորաց տո՛ւր համար:

Գրեգոր կ'ելլէ ճըզնարանէն լըռարար,
Անձայն տըժգոյն երեւոյթքի մը նըման :

Երթա'նք, կ'ըսէ, բայց ո՛վ հիւրերս պատուական
կընդրեմ , ինծի հետ առէք ճաշ մը յօժար :
Երկու տապկած ազաւնի , դոյզըն պաշար ,
Կը պատրաստէ որ ճաշակեն միարան :

Բայց արեղայք կ'ոռնան՝ Աստուա՛ծ, վա՛յ ինծի
Այսօր ուրբաթ է՝ դու պա՞հսպ ալ կը խոռես :
Չէի գիտեր, կը մըռմըռայ սուրբը հեզ :

Եւ թըռչնիկներն ահա կ'օրհնէ մատնացի .
Եւ կեանք կ'առնուն, կը թըռթըռան թեւաբախ .
Եւ աչուընին կը պըլպըլայ ինչպէս շաղ :

Ե

Անմիա մարդոց որ իր առջին կուէ ինկած
Կը թախանձեն ներել՝ կ'ըսէ սուրբ Գրեգոր .
Դուք հանեցիք զիս իմ խորշէս մենաւոր
Ուր վայելել մըտեր էի միայն լաց :

Թողէք հանգարտ զիս , զիս թողէք անկուսկած,
Կ'ատեմ մարմինս , մահու հալաւ արտածոր ,
Լալ կը բաղձամ՝ հալել մաշել զիս բոլոր,
Որպէս զի շուս երթամ թըռչիմ առ Աստուած :

Կը փափաքիմ մաքրել քաւել զիս ամբողջ .
Թեբեւըս հիւր գայ ինծի Կոյս գեղեցիկ
Որ լոյս ունի մարգարտափայլ խոպոպիկ :
Ա՛խ այն ատեն պիտի բերկրի հոգիս ողջ ,
Թէ փըրկութիւն գըտայ՝ պիտի գիտնամ ես ,
Պիտի օրհնեմ կեանքըս՝ անմահ մըշտապէս :

Զ

Խորհըրդաւո՛ր անձաւ , միայն դու կըրնաս
Մանրապատում ընել ի՛նչչափ աղաղակ
Եւ ի՛նչչափ ջայլ անդուլ հոսեց հոգին փակ ,
Ու կանգնեցաւ անձնապարսաւ դատախազ :

Ո՛վ հըրիզէն բարբառ , հաւա՛տք աննիաղ ,
Դուք հիւծեցիք դուք ծիւրեցիք զայն համակ ,
Եւ հեշտութիւնն որ իր սըրտին էր կամակ
Վիշար միայն կը շընորհէր հանապաղ :

Ի՛նչ տեսիլքներ , ի՛նչ երազներ , ի՛նչ շողեր
Այդ մըթութեան խորը ակտաւ արդիօք ան .
Ի՛նչ անհուն բոց մ'արդիօք զանի կ'ողողէր :

Օր մը մըտան փապարն եւ ոչ զոք գըտան .
Լացը մաշեր էր իր մարմինն աննըման—
Նարեկացին աներեւոյթ էր եղեր :

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԱՆ

ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

Այս ընդհանուր վերնագրով ուսումնասիրութեանց շարք մը կը սկսինք հրատարակել Անահիթի մէջ : Մեր ազգային գործունէութեան ամենէն անհրաժեշտ տարրերէն մէկը, —տարր մը որ, ինչպէս միւսները, մինչեւ հիմա շատ հարեւանցի կերպով մշակուած է, —անսկզունի է մեր դրացի, մեր բնակակից ցեղերը՝ մանրամասն, իրական, ճշգրիտ ծանօթութեամբ մը : Մեր գոյութիւնը պահպանելու համար, մեր ցեղային շահերը ամրացնելու համար, պէտք է որոշապէս գիտնանք շահերը, ձգտումները, ուժերը մեր բնակակիցներուն ու դրացիներուն որոնց հետ ամէն վայրկեան գործ ունեցած ենք եւ պիտի ունենանք ինչ ալ ըլլան պայմանները, գիտնանք անոնց բարի կամ յոռի տրամադրութիւնները դէպ ի հայ ժողովուրդը, թափանցենք այդ տրամադրութեանց պատճառները, որպէսզի մեզի նկատմամբ լարուած հակա կրութիւններուն դէմ գիտակցօրէն կարենանք պատրաստուիլ ինքնապաշտպանութեան եւ որպէսզի մեզի ընծայուող շահակից ու համակիր ուժերէն ջանանք օգտուիլ մեր ցեղին զօրացմանը եւ ընդհանուր երկրին բարգաւաճմանը նպատակով : Բաճիկի իր վէպերուն մէջ մերթ ուշիմ կերպով ցոյց տուած է ինչ որ Թուրքիոյ Հայը կրնար յուսալ ու քաղել իր դրացիներէն եւ ինչ ծառայութիւն որ ի փոխարէն կրնար անոնց մատուցանել : Անտարակուսելի է, զժբազդաբար, որ վերջին շարժումներուն մէջ, հայ ժողովուրդը չգիտցաւ օգտուիլ իր տրամադրութեանը տակ գտնուած շահակից ուժերէն եւ ասոնց մէկ մասն ալ իրեն հակակիր դարձուց :

Մինք հրաւիրեցինք մեր Հայաստանցի բարեկամներէն մէկ քանին որ ատանց ո եւ է կանխակալ կարծիքի, ատանց ձգտումի, մեր ընթերցողներուն ներկայացնեն Հայոց դրացի ցեղերն ու ժողովուրդները՝ այնպէս ինչպէս որ են իրենք իրենց մէջ եւ այն բարոյական ու նիւթական յարաբերութիւններով զոր ունին մեր ժողովրդին հետ : Այսօր կը հրատարակենք ուսումնասիրութիւն մը ցեղիկներու վրայ : Արդէն պատրաստ ունինք յօդուած մը Գուրգերու մասին : Եւ գոհ պիտի ըլլանք որ մեր ընթերցողներէն ու աշխատակիցներէն անոնք որ Թրքական

Հայաստանը մօտէն կը ճանչնան , մեղի աջակցին այս Շարքը ամբողջացնելու , եւ զրկին յօգուածներ Թուրքերու , Թուրքմէններու , Չէրքէզներու , Աւշարներու , Լազերու , Նեստրականներու , Այտրիներու , Դպտիներու , քրդական այլ եւ այլ ցեղերու վրայ :

Ե Չ Ի Տ Ի Ն

Ա . . ԵԶԻՏԻՆԵՐՈՒ ԲՅԱԿՁՈՒԹԻՒՆԸ , ԱԶԳԱՀԱՄԱՐԸ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Եզիտիները Տաճկահայաստանի եւ Ռուսահայաստանի լեռնաբարձունքներուն վրայ ցիրուցան հաստատուած , եւ կառավարական աշխարհահամարներու մէջ չհաշուած ըլլալուն համար՝ իրենց ազգահամարը ճշդութեամբ գիտցուած չէ , բայց անոնց թիւը մօտաւորապէս 25—30,000 ի կը հասնի : Իրենց մեծագոյն մասը կը գտնուի Սինճար լեռները , Մուսուլի շրջակայքը . այդտեղ ատենով 50,000 ի կը հասնէր իրենց թիւը , բայց այժմ 13—15,000 կը հաշուէ . կը գտնուին նաեւ Մասեաց եւ Աւրագածի ստորոտները , եւ ուսօ-թրքական Բազրուանդի , Բասնի , Կարսի ու Երևանի սահմանապլիթ լեռնաբարձունքներուն վրայ , ու այդ տեղուանք իրենց թիւը կը հասնի 4000ի : Ռուսահայաստան՝ Դաղվանի Թանգուրակ գաւառը 3000ի չափ են , Ապարանի մէկ քանի գիւղերը՝ 2000 ի մօտ . նաեւ Շիրակայ Նախաւան կամ Տիկոս գաւառի գիւղերը (Անիի շրջակայք) մօտաւորապէս 4000 , որոնք գաղթած են Անթապ կամ Մանազկերտ (Ապահունիք) գաւառէն՝ ուսօ-թրքական վերջին պատերազմէն յետոյ : Կան նաեւ քիչ թուով Վանայ լճի հիւսիսային ափերուն վրայ , եւ Թուրքիոյ այլ եւ այլ կողմերը , ինչպէս նաեւ Ռուսահայաստանի այլ եւ այլ քաղաքները :

Եզիտիները աւանդաբար կը պատմեն որ իրենք ալ երբեմն ունեցեր են իրենց սեպհական երկիրը , իրենց հայրենիքը , թագաւորութիւն եւ զօրք , ու իրենք ալ ազգ մը ճանչցուած են հին ժամանակները : Ասոնք աւանդաբար գիտեն որ իրենց հայրենիքն է եղեր Շանգեար , այժմեայ Մուսուլը , Մերտինը , Սզերզը , Շերուանն ու Բոնտանը . յետոյ , կորսնցնելով իրենց թագաւորութիւնը , ափոփուած են Սինճար լեռան կիրճերուն եւ լեռնաբարձունքներուն վրայ , հոն ունին իրենց միակ դերը (ազօթատելի), Շակըի կամ Շակըի : Դարուս առաջին քառորդին , թուրք կառավարութիւնը զօրքեր կ'ուղարկէ ասոնց դէմ , որոնք միջոց մը քաջութեամբ դիմադրելով , ուսելիքի եւ մթերքի սպառումէն յետոյ անձնատուր եղած՝ շասերը կը ջարդուին , մաս մը կը փախչին , եւ միայն ամենաբարձր գիրքեր գրաւողները կ'ազատուին : Մինչեւ վերջին տարիներս , 1892—

93 թուականը , թուրք կառավարութիւնը յաճախ զօրք կ'ուղարկէր Սինճար լեռան վրայ ապրող Եզիտիներու դէմ , որոնք իրենց բարձր գիրքերու շնորհիւ միշտ յաղթած են : Հայկական շարժումներէ յետոյ , թուրք կառավարութիւնը ստիպուեցաւ այլեւս չզբաղիլ անոնցմով :

Բ . ԵԶԻՏԻՆԵՐՈՒ ԿՐԹՆՔԸ (*)

Եզիտիներու կրօնքը պարզ արեւապաշտութիւն է : Արեգակը կ'ընդունին որպէս տիեզերքի արարիչը , որպէս ամենակարող , ամենազօր , անձնունդ եւ անմահ—ինչպէս հին արեւապաշտները :

Եզիտիները , արեւը ճանչնալով տիեզերքի արարիչը , որպէս անոր առաքեալներ , բարեաց բաշխողներ՝ կը յարգեն լոյսը եւ ջերմութիւնը , ինչպէս նաեւ կրակը , որոնց հետ կ'ընդունին աներկուց ի հոգիները , մեալիքներ եւ ֆրիջրաներ (ըստ աստուածապաշտներու՝ սատանաներ եւ հրեշտակներ) :

Լոյս , ջերմութիւն եւ ֆրիջրաներ (հրեշտակներ) .—Ըստ Եզիտիներու , լոյսը եւ ջերմութիւնը Ֆրիջիթաներու զօրութիւններն են անոնց տեսանելի յատկութիւններն են , որոնք ամէն տեղ կը հասնին եւ երկրիս արարածներուն բարօրութեան համար կը բարեխօսեն առ արեւարարիչը , եւ առատ շնորհներու պարգևումը կը խնդրեն անկից : Եզիտիներու կրօնապետները , իխիերը , ամէն օր , արեւու ծագման ատեն պարտաւոր են լոյսի եւ ջերմութեան միջոցաւ իրենց անխօս աղօթքը եւ խնդրումները ուղղել առ արեւարարիչը : Ինչպէս արեւի զօրութիւնով (վի՛ շամս) նոյնպէս լոյսի եւ ջերմութեան զօրութիւնով երզումներ կ'ընեն (վի՛ նուր , վի՛ գերմը , ա՛յս լոյսը , ա՛յս ջերմութիւնը) :

Կրակ եւ մեալիքներ (սատանաներ) .—Եզիտիները ինչպէս լոյսն եւ ջերմութիւնը , նոյնպէս եւ կրակը կ'ընդունին որպէս արեւարարիչ բարեաց բաշխողը եւ կը յարգեն ու կը պաշտեն զայն , սա տարբերութեամբ միայն որ կրակը , մէալիքներու հետ , ժամանակաւու-

(*) Եզիտիները , հանգամանքներու եւ պարագաներու ազդեցութեան տակ , սորված են կեղծիքի միջոցովը պահել իրենց կրօնքին իսկութիւնը . մահմետականներու ներկայութեան Մուհամմետը եւ քրիստոնէականներու ներկայութեան քրիստոսը որպէս մարգարէներ ընդունելով՝ կործնել տուած են շատերու թէ Եզիտիներու կրօնքը խառնուրդ մըն է արեւապաշտութեան եւ մահմետականութեան , ուրիշներու՝ արեւապաշտութեան եւ քրիստոնէութեան , մինչդեռ իրօք ոչ մին է եւ ոչ միւսը :

բազէս , երկրիս վրայ մնալու դատապարտուած ըլլալով՝ ներկային համար չի կրնար բարեխօսել առ արեւ-արարիչը , որովհետեւ դէպ ի անբարձրանալու հրամանը չունի : Եզրիտիները կ'ընդունին որ մէալիքները իրենց ըմբոստութեան համար վնասուած են արեւ-արարչի տեսութենէն եւ իրենց զօրութիւնը եղող կրակին հետ երկրիս վրայ են թափուած , բայց զանոնք չեն անարգեր իրենց այս ըմբոստութեանը համար : Ինչպէս զիտենք , աստուածապաշա կըրօնքի հիմնադիրները (թէ՛ մովսիսականութեան , թէ՛ քրիստոնէութեան եւ թէ՛ մահմետականութեան) անարգելով այդ ըմբոստ , դատապարտուած հոգիները , զանոնք «յաւիտեանական գեհենի հրովը» կ'այրեն ապապային մէջ , մինչդեռ եզրիտի կրօնի հիմնադիրները , ասոնց կարեկցելով , արդարացնելու փաստեր կը ներկայացնեն , նոյն իսկ ապապային մէջ անոնց կը վերագրեն դատելու իշխանութիւն մը , եւ անոնց պետին , Մեալիքի-Տաուզին կը վերապահեն Մեծ-Օրուան դատաւորութիւնը : Մէալիքի-Տաուզ աստուածապաշտներու Բեհեզդեբուղ անուանածն է :

Ահաւասիկ ինչպէս կը բացատրեն եզրիտի փրկելը սատանաներն եւ կրակը յարգելու օրինաւորութիւնը . ասի կերպով մը իրենց «հաւատոյ-հանգանակ»ը կարելի է սեպել :

Նախ կը ծագրեն մովսիսական , քրիստոնէական եւ մահմետական կրօնքի վարդապետութիւնները , առարկելով թէ՛

«Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այդ հողածին ադամ-որդիները , իրենց ծառայութեանց փոխարէն «վարձատրուին , հրաշքներ գործեն , մեռելներուն կեանք տան , ու ըսեն թէ մէալիքները , որոնց իրենք ալ կ'ընդունին աբարչին հաւասարնստիլը եւ անկէ քիչ պակաս զօրութիւն ունենալը , իրենց ծառայութեան փոխարէն աւելի չնորհ մը ուղեկնուն «համար յաւիտենապէս կորստի դատապարտուած ըլլան») :

Յետոյ կ'աւելցընեն .

«Մո՛ւտ է : Ատոնք արարիչը ճանչնալու մէջն իսկ սխալած են , իրենց գացած ճամբան խոտոր է եւ անել : Անոնք պիտի չփրկուին , որովհետեւ տեսնելով ու վայելելով արեւ-արարչի բարիքներն ու զօրութիւնը , անգոյ «աներեւոյթ Սատուծոյ մը կուտան բոլոր անոր արժանի փառքերը :

«Բո՛ւր մարդիկ , բո՛ւր ցեղերը սխալած են , մենք ուրախ ըլլալու ենք որ մեր կըրօնքը անարատ պահած ենք , եւ պիտի պահենք մինչեւ աշխարհիս վերջը , մինչեւ մէալիքներու իրենց տեղը նորէն բարձրանալը : Մենք ենք աշխարհի մաքուր ցեղը որ մեր

«արիւնը , մեր ցեղը խանելով չպղծեցինք : «Մեր ճանչցած արարիչը ամենազօր եւ ամենապարգեւ արեւն է : Այո՛ , մէալիքները «յանդգնեցան անոր դէմ , անժամանակ ուղեցին անկէ իրենց ծառայութեան վարձատրութիւնը , եւ Արեւը , բարկացած , քչեց զանոնք «իր պալատէն , ու անոնք , իրենց զօրութիւնով՝ կրակով , դատապարտուեցան ժամանակաւորապէս մեր երկրի վրայ մնալու : Եւ միթէ մենք անոնցմէ խորհելու էինք , միթէ անոնցմէ երես դարձնելու էինք : Լսեցէ՛ք :

«Եթէ թաղաւոր մը բարկացած իր հրամանատարներէն մէկուն , կամ իր մէկ բանակին , զանոնք իր երեսէն արտաքսէ , աքսորէ երկիր մը , միթէ այն երկրի ժողովուրդը «քար ու փայտով՝ այդ զօրքերը քարկոծելու է . եթէ ժողովուրդը այդպէս վերաբերուի դէպի «դատապարտուած զօրքը , որչա՛փ կը վշտացընէ զանոնք , եւ կը կարծէք որ եթէ թագաւորը լսէ՛ պիտի չբարկանա՞յ այդ ժողովրդին անազնի վարմունքը տեսնելով :

«Ըսէ՛ք . ձեր տունը եկող հիւրը , ըլլայ փախըստական , ըլլայ աւազակ , ըլլայ մարդասպան , գուք զայն կը պատսպարէ՞ք թէ կը թողո՞ք որ դուրսը մնայ , սոված անպատրաստ պար մեռնի :

«Տեսե՛ր էք — զող մը , դատապարտեալ-ոճ-ըրագործ մը , յանցաւոր մը երբեկախաղանը կը «տանին , ժողովուրդը անոր ետեւէն անարգապէս աղաղակ կը բարձրացընէ , թէ կարեկից արցունք կը թափէ . զայն կը դատապարտէ , թէ անոր վրայ կը կարեկցի ու կը «խղճայ . . .» :

Այս գաղափարով է ահա որ Եզրիտիները կը յարգեն սատանաներն ու կրակը եւ կրակին իրենց օճախէն մարիլը մեղք կը համարին ու ատոր համար կենդանիներու աղբէ պատրաստած կտորներ կը թաղեն կրակախառն փոշի մէջ ուր կը ծխան մինչեւ յաջորդ օրը , եւ եթէ յանկարծ կրակը մարի փրկին կամ շեխին օճախէն՝ նորոգելու են :

Այս գաղափարով է դարձեալ որ Եզրիտիները կը փրկորին , կը կատողին , կրք իրենց ներկայութեան մէալիքներուն շէյքաւն , սասանայ , դեռ անուանները տրուի : «նալէթ օլսո՛ւն» բացատրութիւնը եւ նոյն իսկ ո եւ է պատճառով «գետին թփները» Եզրիտիներու կատաղութիւնը կը բորբոքէ , որովհետեւ կ'ընդունին որ մէալիքները երկրիս վրայ են եւ մարդոց աչքին աներեւոյթ՝ կրնան հոն ներկայ ըլլալ կամ լսել ու վշտանալ այս անարգանքին համար . եւ երբ պատահի այսպիսի դէպք մը , հոն գտնուող Եզրիտիները իրենց — չգործած— մեղքէն ազատելու համար , իւրաքանչիւրը

եօթն անգամ մէջալիքներէն եւ Մէջալիքի-
Տառագէն ներում ու թողութիւն խնդրելու
են (*):

Եզրտիները, ինչպէս յետոյ պիտի տեսնենք,
ուրիշ որոշ փաստերով կը հերքեն այն թէ՛
«Սատանան օձի կերպարանքով ներկայացած
Նախահօր, զայն խաբած եւ զրախտէն դուրս
վոնտուելուն պատճառ զարձած է» . չուենին
դէպ ի օձերը այն ատելութիւնը զոր սնուցած է

(*) Ներկայացնեմ Եզրտիներու այսպիսի վարժունքէն
անցք մը:

Ասկէ շոր տարի առաջ, ընկերոջ մը հետ Բաբբանէն
հետիոտն կարս ուղեւորելով, Մրենու, Մազաբերդի, Անիի
և ուրիշ քրտաշարժ ավերակներու առջև բնագոյարար
կանգ առած կ'ուշանայինք կարս հասնելու, մինչդեռ
ատիպուած էինք նոյն երեկոյին հոն ըլլալ: Երբ բոլոր-
ովին հեռացանք այդ խոռվայտը տեսարաններէն եւ
Ալաճայի ստորոտը հասանք՝ արդէն իրիկնապահին մօտ,
փորձեցի դիմել Ղալիճայի (Բագնայր) Եզրտիներուն,
անոնցմէ երկու ձի առելու և նոյն երեկոյին կարս
հասնելու: Երբ հասնեցինք զիսկապատ էի այդ գիւղը և շատեր
ծանօթ էին: Այս անգամ զիսկեցինք իրզգօ անուն ծա-
նօթի մը և երբ կ'զրտիական ընդունելութիւնը (սար
սար եմբն, սար ճաւ եմբն—գլխուս վրայ, աչքիս վրայ)
ընցաւ, յայտնեցի նպատակս—նոյն օրը կարս հասնելու
ստիպողականութիւնը, և դեռ ես իրմէ ձիերը չեմ գրած,
Եզրտիի հիւրասիրութեամբ անիկա առաջարկեց որ իր
ձիերը հեծած երթանք. շնորհակալութեամբ հաւանե-
ցանք և ճաշելու սկսանք շուտով մեկնելու համար: Սե-
նակը կը լեցուէր գիւղացիներով, որոնք բարեւելով կը
չորուէին սենեակին մէջ երկնցած թաղիքներու վրայ, եկաւ
Եզրտի մըն ալ, որ յայտնեց թէ կարսէն կուգար և շատ
գէշ բաներ էր բրած. ճաճկահայաստանի քաղաքներէն
մեկի կոտորածին լուրն էր, մեզ համար նոր լուր մը չէր,
բայց Եզրտիները կը հետաքրքրուէին եւ միեւնոյն հար-
ցումին կրկին բացատրութիւններ կը պահանջէին: Բնկերս
որ գիւրագրգիռ և բարկացաւ էր, արդէն ազդուած
օրուան սխուր տեսարաններէն, չկրցաւ ա'լ համբերել
և իրտակցութեան վերջ տալու համար դէպ ի նորեկը
դարձաւ, դինքը նախապէս զգուշացուցած էի որ Եզրտիներ-
ու տան մէջ «սատանայ», «նալ էթ»), ևն բառերը չարտա-
սանէ, եւ խոստացած էր. բայց հիմա մտածելով թէ Եզր-
տիները այդ բառերը լսելով միայն պիտի սրտնեղին ու
հեռանան, կ'ուզէր այդ առիթն օգտուել ու նորեկին
հարցուց թէ ո՞ր քաղաքն էր շարգուողը, Եզրտիի
ըսաւ քաղաքի անունը, հարցուց թէ ո՞ր թաղիքը, և
Եզրտիի, ծանօթ նոյն քաղաքին, թուեց մէկ քանի
թաղերը. այն մտմանակ ընկերս աւելցուց. Բարեկամ,
տեսա՞ր որ դուռն բան չես գիտած, քեզ խաբեր են, այդ
քաղաքին մէջ շաշերը քու ըսած թաղերդ չէին բնակեր,
«Շէյթան մահալլէսի» կը բնակէին:

Շաշի թէ աւարտած, մենք կարծեցինք թէ սենեակը
երկրաշարժէ մը կը դղրդէր. իրզգօն, բոլոր տնեցիները
ընկերս շրջապատած՝ կը պաշտպանէին, մինչդեռ միւսու-
ները սենեակին սիւները քանդելու կը ճգնէին: շաշի սե-
ղանը քաշեր էին մեր առջեւէն, սենեակը տակ նուզարայ
էր եղած, ախտէն թիւր, կողովներ դէպ ի մեզ կը նե-
տէին, մնուրքներու դարմանը մեր վրայ կը մաղուէր,
խլացուցիչ աղաղակ մը բարձրացուցած էին. և միջոց մը
կուռելէ յետոյ հաղի կըրցանք հանդարտիլ և սենեակ-
էն դուրս հանել տունէն չեղող Եզրտիները: Բիշ յետոյ
փորձեցինք ճամբորդել, սանաւերը հիւրասիրութեան
դէմ չմեղանչելով պատրաստած էր ձիերը և վշտանալու
նշան ցոյց չէր տար դէպ ի հիւրը որ իր կրօնքը անար-
գած էր: Բայց երբ դուրս եկանք և լսեցինք այն սպառ-
նալիքները որ դարցիները կ'ուղղէին մեզ հիւրասիրողին
թէ պիտի սպաննէին այն ձին որուն վրայ յովալիքներուն»
հայտնայ մը պիտի նստէր, հարկադրուեցանք հետիոտն
ուղեւորել: Մեր ետեւէն սատանայապաշտները ընկերոջս
հասցէին դեռ անարգական խօսքեր կ'արձակէին...

զարեքէ ի վեր ընդհանուր մարդկութիւնը:
Ինչպէս գիտենք, մարդկութիւնը ատած է
զանոնք աւելի քան ամինազարհուրելի դա-
զանները, եւ այդ ինչպէս կը հաստատէ Աստու-
ածաշունչը՝ Աստուծոյ հրամանն է եղած, թէ
«պէտք է մարդիկ ջանան օձերու գլուխը ջախ-
ջախել եւ օձերը մարդոց դարչապարը խած-
նել...» եւ զոր հաճութեամբ կը գործա-
դրեն մարդիկ մինչդեռ Եզրտիները՝ հակառակ
այս հրամանին՝ իրենց հանդիպած օձերու վրայ
չեն յարձակիր, զանոնք չեն սպաններ. իսկ
իրենց տուններուն մէջ եղած օձերը կ'ընդունին
որպէս «տան տէրը», եւ ի թէ նոյն իսկ ամէն
օր անոնք երեւան ելլին, երբեք չեն դպիր(*):
Եզրտի շէխերն են միայն որ թէ՛ օձերը չեն
սպաններ, բայց զանոնք բնակելով («կրթելու» եւ
իրենց հնազանդեցնելու համար սպաննելէն ա-
ւելի կը շարչարեն, ինչպէս արար կամ պարսիկ
տերովիչները: Այսու հանդերձ պէտք է գիտնալ
որ օձերը կարծուածին չափ ատուելիք կենդա-
նիներ չեն, անոնք մարդոց հետ ու եւ է բնածին
թշնամութիւն չուենին, եւ կը ջանան վնասել այն
ժամանակ, երբ մարդիկ զանոնք սպաննելու
դիրքի մը մէջ գտնուին: Գաղանները մարդոց կը
վնասեն իրենց անօթութիւնը յագեցնելու
համար, մինչդեռ օձերը երբեք: Եւ մանաւանդ,
օձերը ունին ուրիշ յատկութիւն մը որ կը հեր-
քէ այն թէ օձերը մարդկային ցեղին հետ ան-
հաշտ թշնամիներ են. (իս այս ըսածս կրնան
ստուգել անոնք որ սպարած են այնպիսի եր-
կիրներ ուր շատ օձեր կան): Օձերը կը սիրահա-
րին զնստի եւ վայելչակազմ պատանիներու,
գեղեցիկ կանանց եւ աղջիկներու, ու կը յա-
ղենան միայն զանոնք զիտելով. տեսնուած են
օձեր որ զլուխին զրած առաստաղի գերանի
մը կամ կախ ինկած մարդակէ մը կը զիտեն
իրենց սիրելին: Անսովոր բան մը չէ դարձեալ
որ առաւօտները անկողնէն ելած ժամանակ
զնստի կ'լին մը, պատանի մը, կամ աղջիկ մը
իր անկողնոյն շուրջը կամ բարձին տակ, գա-
լարուած տեսնէ օձեր. ընդհակառակն յաճախ
պատահող դէպքեր են ասոնք տաք եւ լեռ-
նային երկիրներու մէջ ուր շատ օձեր կան, եւ
որոնք չեն խայթեր: Ասկէ զատ օձերը կը զմայ-
լին երաժշտութիւնը լսելով, ինչպէս ոչխար-
ներ որ հովուին սրինգին ձայնը իմանալով
ճարակելէ կը զազրին եւ անուշ նայուածք մը

(*) Եզրտիներու այս սովորութիւնը կը յարգեն շաշերն
և փուրդերը, ու բոլոր տնեցիները տան օձը մօր եղ
բայր—«քեռի» կ'անուանեն, թէ որքեօք ինչո՞ւ—ոչինչ
գիտեմ՝ այդ մասին. շաշերը «քեռի» իրենալէն գուշա-
կութիւններ կ'ընեն, երբ տան մէջ հեռանդ կայ և
«քեռի» երեւայ, կը նշանակէ որ հիւանդը պիտի մեռնի.
Եթէ պանդուխտ կայ, կը նշանակէ թէ պիտի վերադառ-
նայ, ևն: Տան օձերու, «քեռի» ներու մասին շաշատանի
մէջ շատ առասպելական պատմութիւններ կը խօսուին:

կը դարձնեն դէպ ի ձայնին եկած կողմը, նոյն-
պէս օձերը՝ հողէն դուրս ելած՝ մտիկ կ'ընեն
այդ ձայնը : Հայաստանի մէջ ամառ ժամանակ
երբ խմբով կիներ լեռներէն բանջարեղէններ
հաւաքելու կ'երթան եւ երբ երգելով կը շը-
ջին , շատ օձեր դուրս կուգան իրենց բոյներէն
եւ կը յառաջանան ձայնին եկած կողմը , այն-
պէս որ աղջիկները վախերնէն կը հեռանան :

Սակայն , մարդիկ , որչափ զգուած են այս
կենդանիէն որուն միակ «յանցանքն» է ինք-
զինքը պաշտպանել երբ իր վրայ յարձակին ,
այնչափ եւ աւելի օգտակար են համարած անոր
անկենդան մարմինը . օձերու աղբը , որ հազուա-
գիւտ եւ հոտաւէտ է , մինչեւ այսօր կը գոր-
ծածուի եղիտի , պարսիկ եւ քուրդ շիւնրու
եւ հարուստներու կիներէն , որոնք դժուարու-
թեամբ ձեռք կը բերեն զայն . նոյն ազգերը
ինչպէս եւ Հայերն ու զուցէ ուրիշ արեւելիցի-
ներ օձերու ձգած շապիկն ալ իրենց հետ կրելով՝
գլխացաւէ , «չար-աչքէ» , որոգայթէ , նախանձի
ատելութենէ ազատուած եւ բազդաւոր կը հա-
մարեն զիրենք . օձի մարմնոյն իւրաքանչիւր
յօդը տարբեր տարբեր հիւանդութեանց համար
կը գործածուի : Այսպէս մինչեւ այսօր այն ա-
րեւելցի ժողովուրդները զոր յիշեցի դեռ
զանոնք իբրեւ դեղ կը գործածեն : Օձերու
նոր հաւկիթը քանի մը տեսակ հիւանդու-
թեանց համար «նահապետական բժշկանք»ը
Հայաստանի մէջ կը գործածեն : Օձերու մարմնոյ
մասերէն դեղ պատրաստելու միջոցները աւելի
յատակ կան նշանակուած Հայաստանի մէջ
տեղ-տեղ գտնուող ձեռագիր հին բժշկարան-
ներու մէջ :

Գ .- ԿՐԹՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Եզիտիները ունին նաեւ կրօնական արարու-
ղութիւններ—ծննդեան , ամուսնութեան , թաղ-
ման , հողեհացի եւ մեռելայիշատակի առիթով
կատարուած : Արարողութիւնները այր եւ կին
փիրերը կը կատարեն :

Ծննդեան արարողութիւնը կը կատարուի
հետեւեալ կերպով . մանուկը ծնելուն երկրորդ
օրէն սկսեալ մինչեւ եօթն օր , օրը ժամ մը
փիրը զայն իր բազուկներուն վրայ առած լը-
ռելեայն աղօթելու է . մանկան եօթ շաբթուան ,
եօթ ամսուան եւ եօթ տարուան հասնելուն՝
առանձին արարողութիւններ կան . եօթ ամ-
սուան հասակին մէջ արուները կը թլփատեն :

Անլսելի աղօթքներով եւ ձեւական մասնա-
ւոր փոփոխութիւններով է որ կը կատարուին
նաեւ միւս կրօնական արարողութիւնները ,
«եօթ օրը» միշտ անփոփոխ պահելով :

«Հոգեհաց» կ'ըսեն մեռնողի մը հոգւոյն փր-
կութեան համար անոր մահուանէն եօթը օր

կամ եօթը շաբաթ յետոյ տրուած հացկերոյթը ,
որուն կրնան մասնակցել Եզիտի չեղողներ ալ :
Հոգեհացէն զատ , իւրաքանչիւր Եզիտին
իր հին ու նոր մեռելներու յիշատակին տարին
անգամ մը հացկերոյթ տալու է , եթէ կարո-
ղութիւնը կը ներէ : այս հացկերոյթը «մեռե-
լարաժին» կամ «մեռելայիշատակ» կ'անուանեն :
Եզիտիներու զրացի մահմտական եւ հայ
ժողովուրդները հետեւեալ հետաքրքրական
արարողութիւնը կը պատմեն Եզիտիներու մե-
ռելաթաղի առիթիւ : Կ'ըսեն որ մեռելը թաղե-
լէն առաջ , անոր աջ ձեռքը գաւազան մը կը
կապեն , իսկ իւրաքանչիւր ոտքին տակ եր-
կուական կտոր օձաւ կը դնեն , պատանքը եր-
կու կտորներէ կը շինեն եւ խոշոր կարով մը
իրարու կը միացնեն : Թաղումէն յետոյ , ամէն
օր՝ մինչեւ եօթն օր , իրիկունները , օրը ժամ մը
փիրը մեռելին զերեզմանին առջեւը ձունկի
եկած՝ աղօթելով , գերեզմանին վրայ կը խո-
նարհի եւ , շրթունքը գերեզմանի հողին փա-
կուցած , եօթն անգամ կը կրկնէ այսպէս .

«Լսէ՛ , ո՛վ մարդ , ինձի լսէ՛ . — ահա՛ աջ
«ձեռքդ գաւազանը եւ ոտքերուդ տակն ալ
«օձառը . երբ քեզ դատարանը տանն՝ Մէալիքի-
«Տառզի դատաւարութեան պաշտօնին հասնե-
«լէն առաջ , մի՛ վախար նորէն : Եթէ քեզ ար-
«քայութիւնը դրկեն , արդէն լա՛ւ . իսկ եթէ
«չէ , — պատանքդ պատռէ՛ , արհամարհանօք
«հոն եղողներու երեսը ծեփէ՛ , յայտնէ՛՝ քու
«եզիտիութիւնդ ու Մէալիքի-Տառզին հետե-
«ւող ըլլալդ . անոնք ա՛լ քեզի պիտի չմօտե-
«նան , ու դուն գաւազանիդ կրթընած , ու-
«ժովցի՛ր , ոտքերդ գետնին վրայ տորթէ՛ , սահէ՛
«եւ արքայութիւնը գնա՛ » :

ԱՐՍԷՆ

(Շարունակելի)



Զ Ա Ն Գ Ը

Եւ ես այստուր եւ անապատուր ,
Հոգիս ծակեացած , յո՛ւռ քախտուր եւ .
Եւ ես ըզգուր եւ , սհա տեսնուր եւ ,
Տիեզերիդ ողջ՝ մի մեծ , անհուն զանգ ,
Եւ հոգիս՝ նրա յեզուակը վրսեւ :

Եւ հրաշքներով , վեհ՝ յրոտքեան մեջ
Տիեզերքն անչափ՝ ին՛ր յողակցուր է—

Երգն անհունութեան եւ յաւերժութեան .
 Եւ սիեզերք խո'ր յոգանջում ե —
 Եւ իմ հոգումն ե , իմ Ոգին ե այն
 Որ յոգանջում ե , — եւ Մարգարե եւ . .

Եւ անա այնեղ արեւոյս ե ծրխում—
 Ծանր եւ քանկր—ովկիսանի պես .
 Եւ գո'րչ, հարք ե այն—մի հրակայ զանգում .
 Եւ հոգուս խորհից քարքառ եւ զբում—
 Զոգանջը զանգին սիեզերական :
 Եւ դեպ ի անքոյս իջնում եւ անա ,
 Դեպ' նրա հոգին զանալիժում եւ , —
 Նրան խայրելու եւ խարոզելու ,
 Եւ արսառուելու , եւ այրելու . . .

Աւեկասն-բարոյ Ա.ԻԵՏԻՔ ԻՍՍ.ԶԱԿԵԱՆ



Պ . ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Հովտ . 16ին , Մոսկուայի մէջ տօնուեցաւ
 Պ . Գրիգոր Զանչեանի հրապարակագրական
 գործունէութեան քսանուհինգամեակին յու-
 բելեանը : Պ . Զանչեան հանրածանօթ է Ռու-
 սիոյ մտաւորական դասակարգին մէջ՝ իբրև
 ամենէն ազատաստ ու աշխուղի հրապարա-
 կագիրներէն մէկը ռուս մամուլին : Սակայն հայ
 ցեղէն բոլորած այդ ուժը չէ մոռցած երբեք իր
 արիւնին իր վրայ զրած պարտականութիւն-
 ները : Պ . Զանչեան ասիթ չէ փախուցած հայ
 ժողովրդին անցեալն ու ներկան Ռուսե-
 րուն ճանչցընելու , եւ «հայկական խնդրոյն»
 ամենէն խանդոտ ներկայացուցիչներէն մէկը
 եղած է միշտ «Ռուսաբայա Վեամուսթի» լրագրին
 մէջ ուրուն կ'աշխատակցի, ինչպէս եւ իր գրքի
 ձեւով աշխատութիւններուն մէջ : Այդ ուղ-
 ղութեամբ , իր ամենէն կաբեւոր գործը ,
 «Եղբայրական օգնութիւն թուրքիոյ դժբաղդ
 Հայերուն» տիպոգրով հաւաքածուն եղաւ ,
 զոր հրատարակեց ասկից երկու տարի առաջ ,
 եւ որուն վաճառման հասոյթովը չորս որբանոց
 բացուեցաւ Հայաստանի մէջ :

Ռուս բարեկամներէս մէկը, որուն առաջարկած
 էի Զանչեանի հաւաքածոյին մէկ վերլուծումը
 պատրաստել (որմէ օգտուելով՝ Փրանսացի հը-
 րապարակագիր մը քիչ օրէն պիտի հրատա-
 րակէ յօդուած մը բարեղեան մամուլին մէջ) ,
 հետեւեալ կերպով կ'ուրուագծէ Զանչեանի
 դէմքը եւ անոր «Հաւաքածոյ»ին նշանակու-
 թիւնը . «Մարդ մը, Հայ մը, Պ . Զանչեան, —
 որուն անունը յարգանքով եւ երախտագի-
 տութեամբ կ'արտասանուի Ռուսերուն կողմէ,

որովհետեւ աւելի քան ուրիշ մէկը՝ ինքզինքը
 նուիրած է Ռուսիոյ մէջ հաստատել , կազմա-
 կերպել , հանրացնել Արեքսանդր Բ . ի թագա-
 ւորութեան առաջին տարիներուն (Մեծ Բարե-
 նորոգմանց շրջանին) պաշտամունքը , —յա-
 ջողած է խմբել , հաւաքածոյի մը շուրջը որ
 բարեգործական ձեռնարկ մըն է միանդամայն ,
 աշխատակիցներու բազմութիւն մը , որուն
 պարունակած ստորագրութեանց թուումը
 միայն բաւական է ապացուցանելու այնմիայն-
 զոյն համակրութիւնը զոր ռուսական ընկերու-
 թիւնը կը զգայ թրքական դժոխքին մէջ գա-
 լարուող հայ ժողովրդին համար եւ արամադը-
 ըութիւնը զոր ունի անոր օգնելու որպէսզի
 մարդկային կեանք մը ունենալու կարող ըլլայ :
 Կայսերական ընտանիքէն իշխան մը, Մեծ-Իռքս
 կոտանդինը, չէ վարանած գրքին առաջին էջին
 համար բանաստեղծութիւն մը տալ , եւ անա
 կը տեսնենք աշխատակիցներուն մէջ հայր
 իվան Սերկիեֆը, այն մարդը որուն մէջ կ'անձ-
 նաւորուի ուղղափառ Ռուսաստանին կրօնա-
 կան հաւատքը, Լէօ Թալսթայ որ 'իլիոնաւոր
 Ռուսերու հետ զաղափարի փոփոխութեան
 մէջ կը գանուի , Վերեսչակին , Ռուսերու ա-
 մենէն նշանաւոր նկարիչը, Կոմս Ուխթումսքի,
 Ներշուա Բ . կայսեր բարեկամն ու ճամբոր-
 դութեան ընկերը, «Ս . Բեթերպուրկսքայա Վե-
 տմուսթի» լրագրին անօրէնը , Սբասովիչ ,
 «Վեսթնիկ Եւրոպի»ի ազատական հրատարա-
 կագիրը , հուշակաւոր գիտուններ՝ Գուլալեւսքի
 ընկերարանը , Թիմիբիազով քուսաբանը , Բրոֆ .
 Բարիչէվ , Բրոֆ . Շթաքելպերկ , Կերիէ , իշխան
 Թարխանով , Գորչ , Սթարաթենքօ , Անուչին ,
 Կոմս Գամարովսքի , Միլիուքով , Միլլէր , Վե-
 սելովսքի , Սալաթեանց , Եղիազարեանց , Կոմ-
 սուէի Ուվարով , Վիպասաններ եւ բանաստեղծ-
 ներ ինչպէս Գորչէնքօ , Չիխով , Չլաթով
 վրացի , Մա 'ին , Պալմոնիթ , Մինսքի , Վայն-
 պէրկ , Պարանձիելիչ , Ժեմզուժնիքով , Սաթա-
 խով , Տիօնէօ , եւն , եւն . ստիպուած ենք կա-
 սեցնել այս թուումը , որ կրնայ երեքկիսուել :
 Այս մարդոցմէ իւրաքանչիւրը իր կրցածը
 ըրած է իր տաղանդին եւ ուժերուն չափովը
 զարդարելու համար այդ հատորը , որպէսզի ա-
 նոր մեծաքանակ վաճառումը ապահովուի եւ
 անոր արդիւնքովը նիւթական օգնութիւն մը
 հասնի կարօտեալ Հայերուն : Բայց ատոնց
 քով , այդ գեղեցիկ հրատարակութեան մէկ
 քանի հեղինակները չեն քաշուած միանդա-
 մայն իրենց քաղաքական ըմբռնումը յայտնել
 բացէ ի բաց՝ այն հարկաւոր եւ անխուսափելի
 միջոցներուն մասին զոր պէտք է ձեռք անել
 Հայոց վիճակը տեւականօրէն բարեփոխելու
 համար : Այսպէս՝ կոմս Գամարովսքի , Մոսկուայի
 Համալսարանին մէջ միջազգային հանրային իրա-
 ւագիտութեան ուսուցիչ , կը գրէ . «Անհնար է որ
 ո եւ է սահմանադրութիւն կամ բարենորոգում-
 ներ կարգապահութիւն հաստատեն թրքական
 կայսրութեան մէջ , առեւն է որ պետութիւն-
 ները հրաժարին դիւանապետութեան ձեռքով

ստեղծուած այդ ֆեթիշէն որ է Թուրքիոյ ան-
ձեռն-Տիսելիութիւնը . առեն է որ գործի սկը-
սին՝ ընդհանուր համաձայնութեամբ մը, եւ ա-
մենէն խաղաղական եւ արդարագատ միջոցնե-
րով Թուրքիոյ արդի գրութեան տեղ դնեն նոր
եւ կենսունակ քաղաքական էութիւններ ասէն .

Պ . Ջանշեան այն Հայերէն մէկն է որ մեր
ազգային միջավայրէն աւելի բարձր միջա-
վայրներու մէջ փայլուն դերք մը յաջողելով
գրաւել քաղաքակրթեալ աշխարհին կ'ապա-
ցուցանեն մեր ցեղին քաղաքակրթական մեծ
կարողութիւնները . միայն ատով արդէն Պ .
Ջանշեան արժանի պիտի ըլլար մեր ժողովրդին
երախտագիտութեանը : Իր հայապաշտպան աշ-
խատութիւնները , եւ մասնաւորապէս այն բա-
րոյական ու նիւթական անբաղդատելի ծառա-
յութիւնը զոր Պ . Ջանշեան մատուց հայ ազգին՝
«Նըբայրական օգնութիւն» հաւաքածոյովը , մեր
երախտագիտութիւնը կը բերապատկեն եւ ա-
նոր կուտան արտագին , խանդաղատագին շեշտ մը ,
զոր ժողովուրդ մը կ'ուսնանայ իրեն ուղղակի
օգտակար եղողներուն համար : Անահիսի խմբա-
գրութիւնը յարգանքով կ'ողջունէ Պ . Ջանշեա-
նին մէջ՝ մեծ հրապարակագիրը , ազնիւ ու
մարդասէր մտածողը եւ բազմադիւն հայ գոր-
ծիչը :

Յատաջիկայ թուով մանրամասն յօդուած մը
պիտի նուիրենք Պ . Ջանշեանի կենսագրութեան
եւ յորելեանին : Ա . Չ .

ԹՐԱՆՍՎԱԼ ԵՒ ԱՆՓԼԻՍ

Այն Անգլիան, որ իրաւարարական դատարա-
նի ամենէն ազատագի ծրագիրը ներկայացու-
ցած էր Լա Հէի Գեսպանախորհրդին մէջ ,
զեռ երեք ամիս չանցած , հրէշային հեղու-
թեամբ մը , պատերազմ կը հրատարակէ . . .
փոքրիկ Թրանսվալին դէմ : Եւ պատերազ-
մին շարժառիթը գրամի խնդիր մըն է ,
Թրանսվալի հանքերուն տիրանալու փափա-
քը , որ կը տօնորէ Չէմպերլէյնը եւ իր ըն-
կերները : Անշուշտ մարդկային ընդհանուր քա-
ղաքակրթութեան շահերը Անգլիոյ կողմն են :
Գահիրէէն Բարեյուսոյ Գլուխը երկնցող եր-
կաթուղին Ափրիկէի եւրոպացման մեծ գոր-
ծիքը պիտի ըլլայ եւ անոր անարգել ի-
րագործման համար հարկաւոր է որ Անգլիան
իր քայլերուն առջեւ Թրանսվալին խոչընդո-
տութիւնը վերջնապէս դադարեցնէ : — Բայց
«սրտի» տեսակէտով՝ փոքրիկ Թրանսվալին
վրայ նետուող հսկայ Անգլիային արարքը ա-
մօթալի, տգեղ, զգուշելի է : Պէտք է վերջնապէս
ըմբռնենք, աւա՛ղ, որ քաղաքական հաշիւներուն
մէջ «սիրտը» տեղ չունի Մեր այն Հայերը որ կը
յամառին երեւակայի, որ Անգլիա, «տկարներու
պաշտպան», անկեղծօրէն ուղեց Հայերն ար-
մատապէս ազատել իրենց կացութենէն եւ

արաւաքին արգելքներու պատճառովը միայն
չկրցաւ իր նպատակին հասնիլ , թող քիչ մը
խոկան Թրանսվալի դէմ մղուած այս պատե-
րազմին վրայ : Անգլիա մեր խնդիրը գործա-
ծեց եգիպտոսի հարցը կարգադրելու համար,
եւ յաջողեցաւ : Հիմա, նորէն միեւնոյն քաղա-
քականութիւնն է , որ այս անգամ անդիմակ
կը գործէ :

Անգլիոյ «մարդասիրական քաղաքականու-
թեան հաւատացողները կրնան նաեւ կարգալ-
սա հատուածը այն յայտարարութեան վրայ
Պեթլը, Ֆրանսացի մեծ գիտունը եւ նախկին
Արաւաքին գործոց նախարարը, զրկած է «Փիւ-
կանո»ին (23 հոկտ .) հերքելու համար գերման
լրագիրներու վերջերս հրատարակած գրոյցնե-
րը որոնց համեմատ 1896ի դէպքերուն միջո-
ցին Ֆրանսա որպէս թէ ընդունած ըլլայ
Գերմանիոյ հետ համաձայնելով Թրանսվալին
օգնութեան հասնիլ՝ ընդդէմ Անգլիոյ . «Բա-
րեացական ձեռով մը ընդունեցայ Պօէրներու
հանրապետութեան պատուիրակը, բայց առանց
ուզելու ակնոր հետ խաղաղ այն անբարոյակա-
նապը որ Եսաշախէյ իրաւերը դիմադրուեալ,
որոշած չըրաշով հանդերձ այդ դիմադրութեան
վաւանակցիլ : Այ Անգլիան ոչ Գերմանիան ինծի
չառաջարկեցին այս խնդրոյն վրայ իրենց տե-
ւութիւնը փոխանակել Ֆրանսական կառավա-
րութեան հետ , եւն »

Պէթլըյի ակնարկութիւնը կ'ուղղուի Անգ-
լիոյ , եւ յստակօրէն Հայկական խնդրոյն :
Անգլիա իր Փիլիք Բըրրիով , իր նաւատոր-
միզով , իր ճատերով , քաջալերեց Հա-
յերը՝ իրենց յանդգնութեանց մէջ շարունա-
կելու , եւ ճիշդ այն վայրկեանին ուր պէտք էր
իր ճատերը գործի փոխէր , նաւերը ետ դարձուց
եւ , ուրիշ հաշիւներ կարգադրելու համար,
Սուլթանին քծնիլ սկսաւ :

Անգլիոյ «մարդասիրական քաղաքականու-
թեան» հաւատացողները կրնան նաեւ խորհըր-
դածել հետեւեալ դէպքին վրայ գոր կը պատմէ
«Նովոէ Վրեմիա»ն : Ռուսիոյ Սիմֆերոպոլ քա-
ղաքին մէջ , Գուգուլեան անունով Հայ մը ,
ջարդիրէն ի վեր հոն ապաստանած , այնտեղ
կը հանդիպի իր հայրն ու եղբայրը սպաննող
տաճիկին , անոր վրայ կը նետուի եւ գաշոյն
մը փորը խոթելով կը սատկեցնէ զայն : Գու-
գուլեանը Երզուեալներու դատարանիմբ առջեւ
կը տարուի . զինքը կը պաշտպանէ Ռուսիոյ
ամենանշանաւոր փաստաբաններէն մէկը՝ Գա-
րաբէյսքի՝ որ կ'ըսէ , «Եւրոպայի ամենէն մեծ
մտքերը ձայն բարձրացուցին այս հազարաւոր
անպատասպար մարդոց բռնաբարուած իրա-
ւունքներուն համար , եւ այդ բանը պաշտո-
նապէս ընդունեցան բոլոր պետութիւնները ,
թէպէտ ցաւալի է որ անկից մեծ օգուտ մը չու-
նեցաւ ճնշուած ազգը . մահմետականներու հը-
պատակ եղող գրեթէ բոլոր ազգերը ազատու-
թիւն ստացան , միայն Հայերը մինչեւ հիմա
կը տանջուին անհնց լուծին տակ : Ռուսաս-
տանը , իր պատմական աւանդութիւններուն

վրայ հիմնուելով, չի կրնար եւ չպարտի սառնարտութեամբ վարուիլ քրիստոնեաներուն տանջանքներուն հանդէպ :» Երգուեալները միաձայնութեամբ անպարտ կ'արձակեն Գուլգուլեանը, նկատելով որ ան սպաննած է թուրքը վրէժինդրութեան արդար եւ սուրբ զգացումով մը : Արդ, երեք տարի առաջ, Մուշեղ անուանով Հայ մը որ, ճիշդ նմանօրինակ պարագաներու մէջ, իր ազգականներն սպաննող Տաճիկ մը Գահիրէի մէջ խեղդած էր, անգլիական զատարաններէն մահուան զատապարտուեցաւ եւ կախաղան հանուեցաւ . . .

Ոչ ոք իրաւունք ունի հետեւցնել մեր այս տողերէն թէ ուսումով ենք մենք եւ անգլիապետաց . մենք «ուսումով» չենք, բայց «անգլիապետ» ալ ըլլալու պատճառ չենք անանք, եւ կը կարծենք թէ Ռուսը «ազգակուլ» եւ Անգլիացին «տկարներու պաշտպան» ենթադրելը տղայական պատրանք մըն է : Եւ պէտք է երբեք չմոռնանք ինչ որ մեր անգլիապետութիւնը մեզի աղէտք պատճառեց : Մենք ոչ անգլիապետք, ոչ ուսաստէր պէտք է ըլլանք, այլ հայասեր, եւ գիտնանք զորժամեղ այն բոլոր ուժերը որ կրնան մեր դատին օգտակար ըլլալ :



ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷ՞Չ

Արշակ Զօպանեան աւարտելու մօտ է իր Ֆրանսիայէն հատորը Հայ վիպապատկեր տխարողով, զոր կողմասի հայ թերթերը շատոնց ծանուցած են : Այդ հատորը պիտի պարունակէ էջեր Աւրովեանէն ու Բաֆֆիէն, նորաժէպներ Շիրվանդադէն, Փափագեանէն, Լէօն, Բաշալեանէն, Սվաճեանէն, Կամարականէն, Տիկին Սվաճեանէն, Հրանդէն, Զօհրապէն, եւն . . . իւրաքանչիւր հեղինակին համառօտ կենսագրութեամբը : Հատորին յառաջաբանը պիտի գրէ Ֆրանսացի ծանօթ գրագէտ մը : Հատորը լոյս կը տեսնէ 4—5 ամիսէն : Անկից անմիջապէս յետոյ, Զօպանեան պիտի փութայ աւարտել ուրիշ գործ մը, «Հայ բանաստեղծներ», զոր նոյնպէս մասամբ պատրաստած է արդէն, եւ որ պիտի պարունակէ հայ ժամանակակից բանաստեղծներու լուսագոյն էջերէն հատընաւութիւն մը ֆրանսերէնի թարգմանուած : Այս երկու գրքերը սկզբնաւորութիւնը պիտի ըլլան ամբողջ Շարքի մը, (ֆրանսերէն գրական թարգմանութիւն մը Եզիշէի պատմութեան, Նարեկացիի աղօթքներուն, Արովեանի Վերին, եւն) : Զօպանեան կ'ուզէ այսպէսով իրագործել ինչ որ ուրուագծած էր իր բանաստեղծութեամբը Հայաստանի պատմութեան եւ գրականութեանը վրայ (*), եւ ինչ որ Անաթոլ Ֆրանս, որ այդ բանաստեղծութեանը կը նախագահէր, պահանջի կերպով ըմբռնեց եւ բացատրեց իր ճառին հետեւեալ հատուածին մէջ .

(*L'ARMÉNIE, son histoire, sa littérature, son rôle en Orient, par A. Tchobanian, avec une introduction par A. France.

«Պարոն Արշակ Զօպանեան մեզի պիտի ճանչցնէ գրականութիւնը այդ երկրին գործը զժողովութիւններով միայն կրճատչանք : Պիտի պարզէ մեզի հայկական միտքը՝ դարձրուն մէջէն եւ մեզի լսելի պիտի ընէ մերթ զիւրեքանական ու մերթ ողբագին ձայնը ժողովրդի մը, որ այնքան դարերէ ի վեր իր հայրենիքէն այրիացած, կը տեւէ, կը տոկայ, կը յուսայ : Պիտի տեսնենք որ այս Հայերը իրօք ժողովուրդ մըն են՝ լեզուի, կրօնական դաւանանքներու նոյնութեամբը, նոյն յիշատակներուն եւ նոյն յոյսերուն համահաղորդութեամբը, զգացմանց եղբայրութեամբը, միեւնոյն կեանքով ապրելու, միեւնոյն հոգևով մտածելու հզօր ու յարատեւ կամքովը : Եւ պիտի խոստովանինք որ այս ժողովուրդը, մտացի եւ զիւրեքանական, արեւմտեան աշխարհին բարձրագոյն գաղափարներն ընդգրկելու հակամէտ, իրաւունք ունի ա'յնքան իր հանճարովն որքան իր զբժբաղութիւններովը՝ համակրութիւնը վայելելու այն ժողովուրդներուն որոնցմէ բլիսցան արգարութեան եւ ազատութեան գաղափարները :»

ԳԻԹԱՊՃԻ ԽԱՆ ԵՒ 1900Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՊԱՐԱԿԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

Թանի հոկա. 13 թուոյն յաւելուածին մէջ կը կարգանք հետեւեալ յօդուածը ուր հանդէսով կը գտնենք 1900ի ցուցահանդէսին պարսկական բաժնին ընդհանուր յանձնակատար հայապէի Գիթապճի խանին ծրագիրը գովեստով յիշատակուած .

«Ի՛նչ ա'Օրսէի վրայ կը կատուցուի այս պահուն պարսկական բաժնին պալատը, որ Ռիւտե Նասրոնին ամենէն փայլուններէն մէկը պիտի ըլլայ : Ծարտարապետը, Պ. Ֆիլիք Մեռիա, պարսկական բաժնին ընդհանուր յանձնակատարին նշանակած ծրագրէն առաջնորդուած, փորձած է ճշգրիտ վերարտադրութիւն մը կանգել Սպահանի ամենէն համբաւաւոր պալատներէն մէկուն, Մետրէսէ Մատերշահ պալատին, իր պատմական դրանը հետ : Ե՛նքը, որ երկու յարկէ կը բաղկանայ, 110 քառակուսի մեթրի սալոն մը ունի, զարդարուած՝ ճշմարիտ արեւելեան պերճութեամբ մը, պարսկական երանգներով (մութ-կապոյտ, պերուզակ-կապոյտ, կանանչ եւ նարնջագոյն) : Պատուոյ զուռը կը բացուի երաժիշտներու քէօշկի մը վրայ : Կտեւը կը գտնուի սրագաւ մը, ուր պարսկական հողային ու ճարտարագործական բոլոր արտադրութիւնները պիտի ցուցադրուին : . . . Պալատին ամենէն ինքնատիպ մասը պիտի ըլլայ իր տամալին (terrasse), որ պիտի ունենայ երկու սիւնազարդ պորմիլ (pavillon) զոր ճարտարապետը օրինակած է Սպահանի «Վատասուն սիւնով Պալատ»ին վրայէն : Այդ պորմիլը, եօթը մէթր բարձրութեամբ, պիտի յենուի սիւներու անտառի մը

վրայ՝ որոնք պիտի բաղկանան բազմատեսակ հայկերներու հետաքրքրաշարժ համախմբումէ մը, եւ լոյսի խաղերու միջոցաւ հրաշալի փայլ մը պիտի ընդունին. գիշերը, ելեքտրականութիւնը բիւրաւոր շողշողուն ու բազմերկեան հուրեր պիտի վառէ այս զարմանազան յակերթին մէջ : Քիթապճի խան, պարսկական բաժնին ընդհանուր քոմիսէրը, այս փայլուն պալատը կառուցանելով՝ «Հագարումէկ գիշերներու» գրուի մը կ'իրականացնէ, որ Անթուան Կալանն անգամ պիտի ապշեցնէր :»

—Պ. Բաշին ջաղեանց Բարիդ հասած է ամսէ մը թ վեր . համակրելի արուեստագէտը մտադիր է երկու տարիի չափ մնալ մեր քաղաքը, եւ իր նկարչական արտադրութիւններով մասնակցիլ 1900ի մեծ արուեստահանգէսին :

—Մեր աշխատակից Պ. Աղեքսանդր Մատուրեանի մէկ նամակէն կ'իմանանք, որ մտադիր է պատրաստել ընդարձակ զօրծ մը, «Ռուս բանաստեղծներ» տիտղոսով. այդ զօրծը, որուն շահեկանութիւնը պէտք չունինք բացատրելու, պիտի բաղկանայ երեք հատորէ, որոնք պիտի պարունակեն ուս բանաստեղծներու լաւագոյն հատուածներուն հայերէն թարգմանութիւնը . «Առաջին զբոսը, կը գրէ Պ. Մատուրեան, տեղ կը ընեն միայն Պուշկին եւ Լերմոնթով, որոնք ուս բանաստեղծութեան թաղն ու պսակն են կազմում . երկրորդ զբոսը՝ բանաստեղծ-քաղաքացիներ եւ ժողովրդական երգիչներ՝ Նեկրասով, Պլեչչեկով, Կոլցով, Նիկիտին . երրորդ զբոսը «արուեստն արուեստի համար» ուղղութեան ներկայացուցիչներ, Ալեքսէյ Տոլստոյ, Մայկոֆ, Ֆետ, Պոլոնսկիյ . չորրորդ զբոսը՝ երիտասարդ բանաստեղծներ՝ Նադսոն, Մինսկիյ, Ֆրուզ, Մերիժկովսկիյ :»

—Սեպտեմբեր 22ին Հոտմի մէջ մեծ չքեղութեամբ բացուեցաւ արեւելագէտներու համաժողովը : Ներկայ էին հազարէն աւելի արեւելաբագէտներ : Կեդրոնական դերը կը կատարէր հանրաձայնութիւն մը Կուպերնադիսը, որ այդ համաժողովին կազմակերպիչն է : Իբրեւ Ռուսաստանի ներկայացուցիչ այնտեղ կը զբոսնէր Պ. Կ. Եղեանց, որ իր «Հայաստան եւ Մեծն Պետրոսը» աշխատութեան վրայ ճառ մը արտասանեց ժողովին մէջ : Պարսկաստանի ներկայացուցիչն էր հայազգի Մելքոն խան :

—L'Arménieին մէջ կը կարդանք թէ Տր. Մ. Էլմասեան հրատարակեց է Annales de l'Institut Pasteurին մէջ աշխատութիւն մը (որուն ամփոփումը Բարիդի Կենսաբանական Ընկերութեան հաղորդուերէ) շնչատական գործարաններու մէջ գտնուող մակարոցձի մը (parasite) վրայ, որ կ'երեւայ թէ արտածնական կարեւոր դեր մը ունի ցնցուղներու (bronche) եւ թոքի հիւանդութեանց արտադրումին մէջ :

—«Ռեզիւսիանիթիք»ը իր Սեպտ. 30ի թուոյն մէջ հրատարակած է ժ. Գարու հայ բժշկաբան : Միւթար Հերացիին վրայ ուսումնասիրութիւնը, զոր Տր. Վ. Թորգոմեան կարդացած էր Բարիդի բժշկական Ակադեմիային յուլիս 24ի նստին մէջ :

ՊԱՏՐԻԱՐԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Բարիգեան բոլոր թերթերը հրատարակեցին հոկտ. 11 թուականով Կ. Պոլսէն ուղղուած սա հետագիրը .

«Այսօր կայսերական իրատէ մը ելաւ, որ կը վաւերացնէ հայկական բարենորոգումներու ուսումնասիրութեանը համար Երլաթ-Բէօջըը յատկապէս կարգուած յանձնարարութիւն հետեւեալ առաջարկութիւնները . ա. դաւաններու մէջ Հայոց երթեւեկը արգելող արաստովոր անօրինութեանց բարձումը, բաց ի կասկածելի անձերու պարագայէն . բ. Հայկական խոսովութեանց ատեն քտնուած եկեղեցիներու, դպրոցներու, վանքերու վերաշինութիւն կամ նորոգում, կառավարական օջնութեամբ, գ. Կոտորածներու միջոցին սպաննուած կամ պաշտօնէ հրաժարեցուցուած հայ պաշտօնեայներուն առնելիքին վճարումը . դ. Ետի-Քուլէ որբանոցի մը կառուցումը . ե. Բանասերկուած յիսունըչորս Հայոց՝ ներում, եւ քանուչորս հայու դէմ տրուած մահուան վճին՝ մշարն ջենական բերդարդիւթեան վերածում : Արթին փաշայ այսօր սզգային վարչութեան հաղորդեց այս իրատէն : Հայոց պատրիարքը հիմակ ետ պիտի առնէ իր հրաժարականը : Իրատէն կատարեալ գոհացում կուտայ Հայոց խնդրանքներուն (!!!) : Սակայն բարենորոգումներուն գործադրութիւնը տարակուսական է :»

Պէտք չունինք մեր կողմէն մեկնութիւններ աւելցնելու : Հետագիրը, հեզնական վերջաւորութեամբ, կը բաւէ ամէն բան մեկնելու : Կը շատանանք թարգմանելով «Թան»ի հոկտեմբեր 16ի թուոյն խմբագրականին սա հատուածը .

«... Որովհետեւ հայկական խնդիրը կը սպառնար դարձեալ սուր ձեւ ստանալ, Ապտիւլ Համիտ շատ սիրուն կերպով գործին մէջէն ելաւ : Անգամ մը եւս, պատրիարքը իր հրաժարականը տուած էր՝ ազգային ժողովին հետ : Տագնապ մը անխուսափելի կը թուէր : Շուտով իրատէ մը եկեր է վերանորոգել կարգ մը խոստումներ որոնք ինչ ինչ կէտերու մէջ ծանրակշիւ խոստովանութիւններ են եւ որոնք անհամար անգամներ կրկնուած են արդէն : Շուտով պատրիարքն ալ իր հրաժարականը ետ առել է եւ ներդաշնակութիւնը կը տիրէ հիմա Քուսի-Քարուի եւ Երլաթի Բէօջըի մէջ :

«Կարելի է որ մէկ քանի խեղճ մարդիկ, այն յիսուներկու Հայերուն մէջէն որոնց բանակ արձակումը ծանուցուած է, իրապէս օգտուին այս կարգադրութեան : Ատի միշտ պատահական շահ մըն է, աւելի այն անհատներուն համար քան նոյն ինքն ազգային դատին : Ատի պատճառ մը չէ որ դիտել շտանք թէ Հայաստանի խնդիրը, ինչպէս ամէն այն հարցերը որ Արեւելեան խնդիրը կը կազմեն, զեռ ճիշդ այն կեանք վրայ կը գտնուի ուր զայն թողուցին 1895-96ի ջարդերը : »

Ա Ն Ա Հ Ի Տ Ի Կ Ե Ր Ը

Այն պահուն ուր «Անահիտ»ը իր առաջին տարեշրջանը կը լրացնէ , անօգուտ չեմ հաւ մարիք մէկ քանի բառով ամփոփել , եւ բացատրել , այն գերը զոր այս ամսաթիւերթը ձգտեցաւ կատարել իր երեւումէն ի վեր :

Մեր ժողովրդին արգի շփոթ ու ցաւագին կացութեանը մէջ . ես փափաքեցայ հիմնել եղբայրական մեծ ժամադրավայր մը , ուր գրական , քաղաքական կամ կրօնական ո եւ է աղանդամոլութենէ հեռու , աշխարհիս չորս անկիւնէն՝ հայ մտքեր , —անոնք որ , հին կա՛նոյր , գեղեցկասէր կամ օգտապաշտ . դործնական կամ գաղափարական , ճեղին ուժը կը ներկայացնեն՝ իր այլազան ձեւերով —գան յայտնուել քով քովի , իրար լրացնել , իրար շեշտել ու ձոխացնել , որպէսզի այս փոխանցական կեդրոնին մէջ՝ կազմեն տեսակ մը ազգային-մտաւորական միութիւն , եւ այդ համախմբուած ձիւերու դաշնակուսովը մեր ամբողջ ցրուած , տառապող , շուարած ժողովրդին ներշնչեն հաւատք՝ ապագային , ու ստեղծեն Լոյսը , գիտակից ու վճիտ մտաւոր Լոյսը , որ անհրաժեշտ է որպէսզի այդ ապագան իրականանայ :

Մտադիրը խոշոր էր , —եւ դայն ձեռնարկելու յանդգնութիւնը ունեցայ միմիայն անոր անհրաժեշտութեանը համոզումէն տիրակաւորէն մղուած : Թէ արդէն այս առաջին տարիին մէջ ո՛ր աստիճան «Անահիտ»ը կը ցաւ իրագործել այդ ծրագիրը , իմ գործս չէ զայդ որոշել : Պիտի շատանամ ըսելով թէ այս առաջին տարեշրջանը «ուրուագիւծ» մը եղաւ լոկ , ուրուագիւծ մը ուր սակայն արդէն նշանակուեցան բոլոր տարրերը որ պիտի ձեւացնեն ազգային-մտաւորական լիակատար օրկանը որ պիտի ըլլայ «Անահիտ»ը , երբ նիւթական պայմաններուն դժուարութիւնները , —որոնք սկսած են հարթուել — բացարձակապէս լուծուին , եւ անի կարենայ ստանալ այն ընդարձակ ծաւալը որ հարկաւոր է իրեն որպէսզի իր ամբողջական ինքնութիւնը գտնէ : Ռուսահայ եւ թրքահայ հասարակութեանց գրեթէ բոլոր ծանօթ գրագէտները սիրուն բարեացակամութիւնը ունեցան , առաջին վայրկեանէն իսկ . իրենց աշխատակցութիւնը «Անահիտ»ին խոստանալու , եւ արդէն Վահրամ Սվաճեան ու Վրթանէս Փափագեան . Ս . Շահաղբեանց եւ Լեւոն Բաշալեան , Տիկին Սվաճեան եւ Ալեքսանդր Ծատուրեան , Երուանդ Օտեան եւ Միր-Նրօ իրենց քարը բերին Շէնքին հիմնրուն համար . եւ վստահ եմ որ միւսներն ալ պիտի չմոռնան կատարել իրենց խոստումը : Այդ բոլոր գրագէտները ըսին , իւրաքանչիւրը իր խառնուածքին , ճաշակին ու իմաստասիրութեանը համեմատ , ինչ որ մեր ազգային կեանքը , կամ ընդհանուր մարդկային կեանքը , իրենց խորհիլ կամ գգալ կուտայ :

«Անահիտ»ը որ իր խմբագրական ուրոյն որոշ ուղղութիւնը ունի , բայց որ իր աշխատակիցներուն համար ո եւ է դպրոցի կամ ազանդի բնաւորութիւնը չ'ընդունիր , պիտի շարունակէ հիւրընկալել ամեն տեսակ զգայութեանց , իմաստասիրութեանց ու ճաշակներու արտայայտութիւնները , այն միակ պայմանով որ ատոնք գիտակից ու անկեղծ ճիգերու արդիւնք ըլլան :

Ուրախութիւնը ունեցայ մանաւանդ նկատելու որ մեր նոր սերունդը , ուսանայ ինչպէս թրքահայ , ինքնարուս ձգտումով մը եկաւ իր ուժերը նուիրել «Անահիտ»ին . Վ . Նալբանդեան , Գ . Վանցեան , Մելիք-Կարազօզեան , Չարքք , Իսահակեան՝ ուսուսանայ երիտասարդութենէն . Օր . Յովհաննէսեան , Վարսամեան , Տիգրան Եսայեան , Եարձանեան , Հրաչ , Երուսիան . Տր . Գօլջեան , Սոսորով , Տր . Եսայեան՝ Թրքահայերէն , իրենց այլազան ճիգերն ու տաղանդները ի սպաս գրին «Անահիտ»ի ընդարձակմանը . եւ ես գոհ պիտի ըլլամ բոլոր «նոր»երը —ինծի ծանօթ

կամ անծանօթ — որ մեր ազգային մտաւորականութեան Գաղափարի կամ Գեղեցկութեան տարր մը բերելու սահմանուած են՝ «Անահիտ»ի շուրջը խմբուած տեսնելով :

Եւ այսպէս , հակառակ ծաւալի սահմանափակութեան , «Անահիտ»ը ջանաց մեր հասարակութեան ներկայացնել մասնաւորապէս Ֆրանսայի եւ ընդհանրապէս ամբողջ քաղաքակիրթ աշխարհին մէջ անցած գրական , գեղարուեստական , քաղաքական զէպքերը . իմ էական մտադրութիւններէս մէկն է այդ բաժինը մեծապէս ընդլայնել «Անահիտ»ին մէջ , եւ — երբ իւրաքանչիւր թիւ գոնէ 48 էջի ծաւալ ունենայ — տալ ամէն անգամ վերլուծումը ամսուան մէջ անցած ամէն նշանակալից զէպքի կամ երեւոյթի . եւ այս տեսակէտով , պիտի խնդրեմ , դարձեալ , Եւրոպայի եւ Ամերիկայի բոլոր երիտասարդ աշխատակիցներէս որ հաճին կանոնաւորաբար «Անահիտ»ին ղրկել ամփոփում մը այն մտաւորական , գեղարուեստական , քաղաքական եւ ընկերական կարեւոր երեւոյթներուն որ իրենց գտնուած երկրին մէջ պիտի պատահին :

«Անահիտ»ը պիտի շարունակէ հրատարակել ուսումնասիրութիւններ մեր երկրին , մեր յեղին , մեր պատմութեան ու գրականութեան վրայ . պիտի տայ երբեմն , արեւմտեան աշխարհաբարին թարգմանուած , էջեր մեր նախնեաց մատենագրութենէն , եւ ուսասնայ գրականութենէն : Այսպէս՝ «Անահիտ»ը պիտի ջանայ ճանչցնել , հետզհետէ աւելի ընդարձակ եւ աւելի որոշ կերպով , Եւրոպան՝ Հայուն , ու ճանչցնել միանգամայն , պայծառ ու անաչառ վերլուծումով մը , իր անցեալովն ու ներկայովը , Հայը՝ Հայուն :

Այս նպատակով , «Անահիտ»ը պիտի սկսի նաեւ ի մօտոյ նոր շարք մը , Օսարին կարծիք՝ ընդհանուր տիտղոսով , շարք մը որ պիտի պարունակէ թարգմանութիւնը բոլոր այն էջերուն որոնցմով հին ու նոր օտար պատմաբանները , ճամբորդները եւ գրագէտները իրենց բարի կամ յոռի զգացումը յայտնած են մեր ժողովրդին նկատմամբ կամ շահեկան տեղեկութիւններ տուած են մեր երկրին , մեր պատմութեան մասին ու այն դերին վրայ զոր մեր ցեղը կատարած է օտար երկիրներու մէջ :

Ատոնցմէ զատ , հրաւիրած եմ ժամանակակից օտար գրագէտներ , պատմաբաններ , հայագէտներ եւ քաղաքագէտներ , որպէսզի իրենց կարծիքը , իրենց զգացումները , իրենց խորհուրդը յայտնեն մեր ժողովրդին անցեալին , ներկային եւ ապագային վրայ . եւ վստահ եմ որ Պ . Պ . Վիքթոր Պեռառէն եւ Անթուան Մեյէէն յետոյ , որոնք այս առաջին տարեշրջանին մէջ այդ գործը հաճեցան կատարել , պիտի գտնուին ուրիշ շատեր որ մեր ժողովրդին պիտի հաղորդեն , «Անահիտ»ին միջոցովը , իրենց քննադատութիւնը կամ խրախուսանքը , իրենց խորհուրդներն ու համակրութիւնը :

Ես փափաքեցայ որ «Անահիտ»ը կարենար միտլութեան գիծ մը ըլլալ աշխարհիս չորս անկիւնները տարտղնած Հայութեան հատուածներուն միջեւ . գոհութիւնն ունիմ հաստատելու որ առաջին տարեշրջանը դեռ չլրացած՝ արդէն այդ փափաքը իրականութիւն դարձած է , եւ այսօր՝ Ափրիկէի ամենէն հեռաւոր խորշերէն մինչեւ Ռուսաստանի բոլոր հայաբնակ քաղաքները , Հնդկաստանէն մինչեւ Ամերիկա , Պարսկաստանէն Ճավա , Եւրոպայի բոլոր հայ գաղթականութիւններուն մէջ , եւ այլուր ալ , «Անահիտ»ը կը կարգացուի :

Այս ամենէն յետոյ , կամ մանաւանդ այս ամենէն առաջ , «Անահիտ»ը ունէր ամենակարեւոր պարտք մը կատարելու , այն է մեր ազգային քաղաքականութեան անկողմնակալ , անաչառ քննադատութիւնը փորձել : Այնպիսի ատեն մը ուր նոյն իսկ մեր ազգային գոյութիւնը վտանգի մէջ է , բնական է որ մտաւորական , գեղեցկագիտական բոլոր ձիգերէն ու ձեռնարկներէն առաջ , ամէն Հայու տմենակենսական մտահոգութիւնը պէտք է ըլլայ այն խնդիրը որ հայ ազգին մահու եւ կեանքի խնդիրն է , եւ շատ բնական էր որ այդ խնդրոյն քննութիւնը ամենամեծ եւ ամենակարեւոր տեղ մը բռնէր ուսումնասիրութեանցը մէջ «Անահիտ»ի պէս ամսաթերթի մը , որուն նպատակն է իր ուժերուն չափովը հայ ցեղին զօրացմանն ու զարգացմանը նպատակ :

Անգիտակից եւ տարտամ խանդի քաղաքականութեան մը , անհաշիւ ու անտրամաբան համայնագոհութեանց գործունէութեան մը տեղ , զոր կը տեսնէի մեր ազգային գործերու ընթացքին մէջ կէս դարէ ի վեր տիրական , ես ցանկութիւն յայտնեցի որ սկսինք ունենալ

ստոն խորհրդածութեան վրայ հիմնուած Գործունէութիւն մը , զոր վարէ Բանականութիւնը՝ խանդն ու կորովն իրեն գործիք ընելով , որուն ամէն քայլերը գիտակից ջանքերով , ուռումնասիրուած ձեռնարկներով նշանակուին եւ ուր Յանդգնութիւնը , որ անհրաժեշտ է անշուշտ ու նուիրակօրն , պատճառաբանեալ ըլլայ եւ նպատակաշարուար :

Գիտէի որ այս նիւթին զոչելով , պիտի հանդիպէի մոլեգին կիրքերու բոլորքման մը , որոնցմէ ոմանք՝ միամիտ ու կոյր աւելնէն բոցոտած , ուրիշներ՝ պարզապէս շահասէր ու անձնական նկատումներէ : Բայց ատի պատճառ մը չէր կրնար ըլլալ որ ետ կենացի իմ տեսնելու եղանակս ամենայն անկեղծութեամբ ու համարձակութեամբ արտայայտել . մեր ազգին արդի կացութեանը մէջ , չէզոքութիւնը վատութիւններուն մեծագոյնը պիտի ըլլար . պատմական այնպիսի վայրկեանի մը մէջ ենք ուր ամէն Հայ , մտաւորականն ինչպէս գործիչը , արուեստագէտը ինչպէս պարզ բանորը , յեղափոխականը ինչպէս գիւնաագէտը , իրենց մտահոգութեանց մէջ առաջին տեղը պարտին տալ ազգային գոյութեան ինքրոյն մտահոգութեանը , եւ պարտին գործել՝ իրենց օգտակար հասարած եղանակովը , — գործել՝ Եւրոպայի ու Ամերիկայի մէջ հայկական փոփոխականտին մղում տալով , գործել՝ մեր ցեղին նիւթական ու բարոյական ինքնապաշտպանութեան անհրաժեշտ ու ստիպողական գործը դրական ու հեռատես եղանակով մը կորզմակերպելով , գործել՝ մեր ժողովրդին արդի թշուառութեանցը նիւթական օգնութիւն հասցնելու ջանադիր ըլլալով , գործել՝ սխալ ուղղութիւնները մատնանիշ ընելով եւ կասեցընելով (որովհետեւ սխալ գործունէութիւն մը գաղբեցնելն ալ՝ գործել է) , գործել՝ սխալին տեղ ուղիղը փնտնելով , ձեւակերպելով եւ իրականացնելով , գործել՝ այս կամ այն կերպով , բայց գործել :

«Անահիտ»ը գործեց :

Ես յայտնեցի ինչ որ սխալ կը նկատէի մեր երէկուան գործունէութեան մէջ եւ նոր ուղղութեան մը , նոր գործունէութեան մը պէտքը զգացուցի : Այն կարգ մը մեծածխոր դրժգոհութիւնները զոր իմ քննադատութիւնս յարոյց , ինքնին ապացոյց են թէ յայտնած գաղափարներս ճշմարտութիւններ կը պարունակէին եւ թէ առանց ազգեցութեան չէին անցած :

Այդ քննադատական գործը ես կատարած էի առանց ո եւ է յաւակնութեան , յանձն առնելով հրատարակել նոյն իսկ «Անահիտ»ին մէջ ամէն շուրջ յօդուած ուր փառսերով ցուցնէին իմ տեսութիւններու սխալ կողմերը : Իմ միակ փափաքս էր որ ազգը , իր գահավէժ ընթացքին մէջ դէպի վտանգալից Անձամոթը , վայրկեան մը կարենար կանգ առնել , որոշ տեսնել իր նրպատակակէտը , քննել իր միջնու հիմա բռնած ուղղութիւնը , չափել իր ուժերը , եւ ճշգիւ գիտակցաբար ինչ որ պէտք է ընէ հասնելու համար Կեանքին , խուսափելու համար Կորուստէն : — Նախատինքներու եւ իմաստակութեանց խեղկատակ բուրդ մը , — ահաւասիկ ինչ որ կարգ մը թերթեր բարձրացուցին իմ գաղափարներուս դէմ , եւ կարծեցին ատով պատասխանած ըլլալ (!) : Նախատինքները զիս անտարբեր կը թողուն : Նոյն իսկ կան նախատինքներ որոնք պատուաբեր են («Շարժում»ի ու «Միութիւն»ի պէս թերթերու կողմէ նախատուիլը փաղաքշական բան մըն է) : Այդ ամբողջը բնական արտայայտութիւնն էր Ապուշութեան որ կ'ատէ Մտածումը , մերթ ալ՝ ոճրագործՆահասիրութեան որ ինքզինքն իր խանութիւն մէջ վտանգուած կը զգայ եւ անարգ Անձամոթութեան որ իր ինքնարբեցութեանը մէջ ինքզինքը խանգարուած կը գտնէ : Ամենաջերմ կողմնակից՝ Գործունէութեան , ես ուրիշ բան չէի ըրած բայց եթէ քննել սա կէտը՝ «Ճիշդ է այն յատակագիծը որով մեր ազգը կը գործէ կէս գարէ ի վեր» : կարծած էի տեսնել որ յատակագիծը անճիշդ էր եւ անորոշ , եւ անոր գործադրութեանը մէջ գտած էի հոյակապ խանդ եւ անձնուիրութիւն՝ միամիտ ու չփոթ ուղեղներէ առաջնորդուած , երբեմն ալ պարզապէս թեթեամիտ ու շահասէր նկատումներու գործիք դարձած , եւ որ կը յանդէր բաղձացուած նպատակին ճիշդ հակառակ արդիւնքին , կործանման : Այս տեսութիւնս հաստատեցի զէպքերով , անուններով , խորհրդածութիւններով , Երեւակայեցիին թէ տեսութիւնս քանդած եղան ինձի վերագրելով իմ մտածմանս ու ձգտումներուս ճիշդ հակառակը , զիս ներկայացնելով իբրեւ պահպանողական , իբրեւ թրքասէր , իբրեւ հակառակորդ հայկական գործունէութեան , — շոշորութիւններ՝ որով կը կարծէին , գրողի մը անձը մըտնելով , անոր գաղափարներուն արժէքը կտորել : Ապուշները չէին նշմարեք զոնէ սա կէտը թէ բոլոր քննադատութեանցս

մէջ չէի դադարած իբրև հայ գործիչի մտատիպար ներկայացնել Վահան Մամիկոնեանը , ճարտարակազմի : Ուրիշներ իմ եզրակացութեանս մէջ տարտամութիւն կարծեցին տեսնել , եւ զայդ համարձակեցան երկրորդութիւն համարել : Արդ , այսպիսի փափուկ եւ վտանգալից նիւթի մը մէջ , քննադատին պարտքն է որոշապէս յայտնել ինչ որ պիտի չի ընել , իսկ միայն զգացնել (շատ քողարկեալ կերպով) ինչ որ ընել պիտի ե , որովհետև մեզի պէս չաբաշար հալածուած ժողովուրդ մը պարտաւոր է ոչ միայն որոշ գիտնալ այլ եւ գաղտնի պահել ինչ որ մտադիր է ընել ինքզինքը փրկելու համար , այսինքն իր բուն յատկագրին իր մանրամասնութեանցը մէջ : Սակայն պէտք եղածէն աւելի կրկնած ու շեշտած եմ թէ բան մը պիտի ե ընել , թէ պէտք է , անհրաժեշտ է գործել , եթէ ոչ հիմա անմիջապէս , գոնէ վաղը անպատճառ , եւ անոր համար ոչ թէ հիմա անմիջապէս որպէսզի վաղը ընելիքն յարողի : Եւ Վահան Մամիկոնեանը իբրև մտատիպար ներկայացնելու շատ պայծառ կերպով կը ցուցնէր գործունէութեան այն ընդհանուր ոգին եւ ուղղութիւնը զոր կը նախասիրեմ : Արդ , այս բոլորին «Շարժում»ը կը պատասխանէ , հրատարակելով երբեմն յօդուածներու իր Գասպարը կը պնդէ թէ պէտք է շարունակել միեւնոյն ծրագիրը , միեւնոյն տեղումները , միեւնոյն ձեւովը , եւ թէ «Չարժուելով Չարժուելով հայ ժողովուրդը պիտի սորվի ջարդել իր թշնամին(!)» , երբեմն ալ յօդուածներ ուր զիս կը ներկայացնեն իբրև Սուլթանին(*) մէկ մտերիմը (ճիշդ այն պահուն ուր «Թայագ»ին մէջ կը հրատարակուէր պոլսական թղթակցութիւն մը որուն համեմատ Սուլթանը Պ. Գոնսթանէն խնդրած է որ Չերագը , Բիզան եւ զիս ներսային արտաքսն) : Վերջապէս , գտնուեցաւ Հայ մը , Նիւ-Եորքի «Հայրենիք»ին ԼէՕն , որ իր քստմնելի տղիտութիւնը հասցնելով տեսլական ծայրայեղութեան , չամչցաւ սապէս խոսք մը ստորագրել «Մենք չենք ընդունիր Օրմանեանի եւ Վահան Մամիկոնեանի հաշտարար քաղաքականութիւնը , զոր կը քարոզէ «Անահիտ» , եւն . » : Վահան Մամիկոնեանը Օրմանեանի հետ նոյնացնել , եւ «Անահիտ»ին վերագրել Օրմանեանական հաշտարար (!) քաղաքականութիւն մը , nec plus ultra է տղիտութեան եւ ապուշութեան . . . Ի՞նչպէս կ'ուզէք որ «Անահիտ»ը կարեւորութիւն տայ նախասիրներուն այսպիսի արարածներու , որոնք հայրենասիրութիւնը իրենց մենաշնորհ կը համարին եւ Հայոց Պատմութիւն մը դեռ չեն կարգացած , որոնք կ'ուզեն ազգային գործունէութեան առաջնորդ հանգիստնալ եւ պարզ cretinներ են : Միակ կարեւորութիւնը զոր կարելի է եւ պէտք է տալ ատոնց , սա տեսակէտովն է թէ զարհուրելի վտանգ մը կրնայ գալ ազգին գլխուն եթէ ազգային գործունէութեան մէջ ու եւ վարիչ դեր ունենան Հայոց պատմութեան իսկ անգիտակ եւ ուղեղով հիւանդ պարոններ . եւ երէկուան մեր գործունէութեան վարիչներուն շարքին մէջ բաւական ստուար թուով «Լէօ»ներ ու «Դասպար»ներ գտնուեցան . . . Ես կը կարծեմ թէ «Անահիտ»ը ամենամեծ ծառայութիւն մը կը մատուցանէ ազգային իրական գործունէութեան շահերուն , յայտարարելով թէ գործել կարենալու առաջին պայմանը այն է որ նախ յաջողինք ապուշներն ու տգէտները անշարժացնել :

Եւ արդէն , հակառակ այդ ամբողջ բխման եւ վատառողջ խօսքերին զոր այս կարգի ուղեղներ յարուցին «Անահիտ»ին դէմ , ես որոշ ու հաստատ ապացոյցը ունեցայ թէ ճշմարիտ հայրենասէրները , բուն անձնուէրները , իրական գործիչները , ինքն իսկ հայ ժողովուրդը , ընդունած էր ինչ որ «Անահիտ»ը կը քարոզէր , կը բաղձար , կը զգացնէր : Այն Հայերէն որ իրենց կեանքի վստակի դրին վերջին դէպքերուն մէջ , այն Հայերէն որ սքանչելի զինուորներ եղան՝ յոռի , զօրապետներու ձեռքը մնացած , ոչ մէկը խեղաթիւրեց , ոչ մէկը դատապարտեց «Անահիտ»ի տեսութիւնը՝ իր ոգիին մէջ , եւ տեսայ անոնցմէ շատեր որ յայտնած գաղափարներուս՝ սկզբունքով համախոհ էին : Միակ դիտողութիւնը զոր կը ներկայացնէին , այն էր որ քննադատութեանս մէջ յոռի վարիչներուն դէմ զայրոյթը աւելի շեշտուած էր քան հիացումը ժողովրդէն բղխած անձնուէրաց շարժումին եւ թէ ընդհանրապէս գործողներու սխալներուն վրայ աւելի ծանրացած էր քան չէզոքներուն վատութեանը եւ թրքասէրներուն ցածութեանը վրայ : — Այս դիտողութեան ճշգրտութիւնը յօժարակամ կ'ընդունիմ , բայց ի փոխարէն դիտել

(*)Սնցողակի , եւ պարզ հետաքրքրութեան համար կը հրաւիրեմ «Շարժում» լրագրին տնօրէնը որ իր բարեկեան թղթակից «Վահագն»էն պահանջէ հրատարակուելու քաղաքական տալ եւ իր ունեցած ապացոյցները մէջտեղ դնել «Շարժում»ի 167 թուով հրատարակուած իր յօդուածին այն տողերուն մասին որոնցում ինծի վերագրած էր՝ 1⁰ Սուլթանին կենացը բաժակ պարզած ըլլալ (!) , 2⁰ Բարիքի ծածանան գետնապատան առջև առտուրնէ մինչև իրիկունսլ քտալ (!?) :

կուտամ որ սխալ գործունէութեան մը վարչները աւելի անմիջական ու մեծ վստայ մըն են, եւ ընական էր որ՝ տեսնելով մանաւանդ թէ ճիշդ նոյն տեսակ մարդիկ միեւնոյն բանը չարունակել մտադիր էին՝ քննադատ մը ամենէն առաջ եւ ամենէն աւելի ա՛յդ վստայը մատնանիչ ընէր :

Միակ երկու հրապարակային լուրջ ընդդիմախօսութիւնները որոնք երեւցան «Անահիտ»ի քննադատութեան իբրեւ պատասխան , Պ . Չերազի ուսումնասիրութիւնն էր եւ այն յօդուածներու շարքը որով «Իրօշակ»ը կը ձգտի հաստատել թէ հայկական կոտորածները «իբրեւ ընական հետեւանք մը» եղած են : Այդ երկու պատասխանները չեն համաձայնիր իմ տեսութիւններուս եւ չեն ջնջեր իմ համոզումներս . բայց զանոնք չեմ շփոթեր ուրիշներու վարնոց ու տխմար պոռչուածքներուն հետ , «լուրջ» կը նկատեմ զանոնք, որովհետեւ «ուսումնասիրութեան» մը արդիւնք են , «իմաստասիրութիւն» մը կը ներկայացնեն :

Պ . Չերազի ուսումնասիրութեանը մասին պիտի գրեմ ի մօտոյ ինչ որ կը մտածեմ : Այդ ուսումնասիրութեան մէջ ամենէն աւելի աչքի զարնող կէտը , զոր կը շատանամ այժմէն լոկ մատնանիչ ընելով , այն շուարեցնող դերերջանիկ լաւատեսութիւնն է , որով Պ . Չերազ դեռ կը յամառի հաւատալ թէ Պերլինի վեհաժողովին ասեմն Ներսէս պատրիարքին զրկած հայկական պատուիրակութիւնը անսխալ քաղաքականութիւն մը ունեցաւ եւ բրաւ ամէն ինչ որ կարելի էր՝ ամենէն լաւ եղանակով . Պ . Չերազ կը պնդէ թէ Սան-Սթեֆանոյի Դաշնագրին 16րդ յօդուածը , որ Տաճկաստանը բաժնելու եւ այդ նպատակով անոր գերի ազդութիւնները թրջական լուծէն ազատելու մէջ շահ ունեցող պետութեան մը միջամտութեանը զրկան իրաւունքը կը պարունակէր, նուազ իրական կարեւորութիւն ունի քան Պերլինի դաշնագրին 61րդ յօդուածը որ Հայոց խնդրով դրականապէս զբաղելու համար անհրաժեշտ կը կացուցանէ վեց Պետութեանց համաձայնութիւնը . այսինքն՝ գրեթէ-անկարելիութիւն մը : Չպիտի ծանրանամ տո այժմ դիտել տալու այն ամբողջ վտանգաւոր ազդեցութիւնը զոր այսպիսի ինքնագոհութեան , ինքնախաբէութեան եւ անհիմ լաւատեսութեան մտաւոր վիճակ մը (ինչպէս եղած է միշտ եւ է դեռ Պ . Չերազինը) կրնայ ունենալ ազգի մը հանրային գոծրունէութեանը մէջ , եւ պիտի շատանամ թարգմանելով սա հատուածը այն հոյակապ յօդուածին զոր Բարիզի «Օտոռ» թերթը հրատարակեց վերջերս (թիւ 721) , եւ ուր կոչիէ , զոր պատիւ չունէի ճանչնալու այդ յօդուածին հըրատարակումէն առաջ , բացարձակապէս համակարծիք կը հանդիսանար այն գաղափարին զոր յայտնած էի «Անահիտ»ի 3րդ թուոյն խմբագրականով . «1878 մարտ 3ին , Սան-Սթեֆանոյի դաշնագրին մէջ , Ռուսիա 16րդ յօդուած մը մտցուցած էր որ Թուրքիոյ վրայ պարտք կը դնէր Փոքր-Ասիոյ մէջ հարկաւոր եղած բարենորոգումները վաղընդփոյթ իրագործել , եւ որ Հայոց ապահովութիւնը կ'երաշխաւորէր Քուրդերուն եւ Չէրքէզներուն դէմ : Ալեքսանդր Բ . Չարը այսպէսով կը փոխարինէր այն ծառայութիւնները զոր ընդունած էր իր հայ զորավարներէն ուսու-թուրք պատերազմին ժամանակ . մարդկային զպացման մը կը հնազանդէր ու քաղաքագիտական մտածման մը : Հայաստանը պիտի գտնուէր Ռուսիոյ թերեւս շահագիտական բայց ապահովապէս ազդեցիկ պաշտպանութեանը տակ : Պետութիւնները միջամտեցին , Սան-Սթեֆանոյի դաշնագիրը պատուեցին , անոր տեղը դրին Պերլինի ընդհանուր Դաշնագիրը : Այս անգամ , տարսաւ 61րդ յօդուած մը Հայաստանի մէջ բարենորոգումներ պահանջեց , առանց պայմանաժամ կամ երաշխաւորութիւն որոշելու : Ի՞նչ պիտի եղրակացնէր եւլտրդ-Քէօշքի հրէշը . թէ լիազօր ազատութիւն ունէր , ու եւրոպայի լիակատար հաւանութիւնը՝ իր զոհը լինցնելու համար :»

«Իրօշակ»ը իր «Ամբոխաին տրամաբանութիւնը» տիտղոսուած յօդուածներու շարքովը , կը ջանայ հերքել գաղափար մը զոր ի մէջ այլոց եւ ինծի կը վերագրէ եւ զոր երբեք չեմ արտայայտած : «Իրօշակ»ը կը կարծէ թէ «Անահիտ»ը յայտարարած ըլլայ որ հայկական ջարդերուն «իսկական պատճառը» հայ յեղափոխական շարժումները եղան , եւ կը հերքէ զայդ՝ օտար հայասէրներու հատուածներ ալ վկայութեան բերելով : Ես երբեք չեմ ըսած որ հայ յեղափոխական շարժումները եղան հայկական ջարդերուն «հիմնական պատճառը» . թուրք կառավարութիւնը վերջին ուսու-թուրք պատերազմէն ի վեր ծրագրած է հայ ժողովուրդը տկարացնելու եւ անոր «ազգութեան տարրերը» ջնջելու ծրագիրը . բայց թուրք կառավարութիւնը երբեք պիտի չհամարձակէր մեծաքանակ կոտորածներուն հրամանը տալու , եթէ

Սասունի, Պոլսոյ եւ Վանի «կազմակերպուած» ցոյցերը տեղի ունեցած չըլլային • այնպէս որ այդ ցոյցերը առիթ տուին, «պատրուակ եղան» ջարդերուն իրագործմանը • մաթեմատիկոսին կարելի է ապացուցանել որ՝ օրինակի համար՝ առանց Պանքային ցոյցին՝ Պոլսոյ ջարդը տեղի պիտի չունենար • այնպէս որ հայկական ազէտքներուն մէջ Սուլթանին ու Եւրոպային խոշոր պատասխանատուութեանց հետ՝ դառն բայց անխուսափելի պարտք մըն է խոստովանիլ որ մենք Հայերս ալ մեր պատասխանատուութեան բաժինը ունինք, զոր կարգ մը օտարներ կրնան վեհանձնօրէն հաշուի չդնել (*), բայց զոր մենք քաջաբար պարտինք ընդունիլ : Խնդիրը կը մնայ դիտնալու թէ Հայոց համար անհնարի՞ն էր այդ ցոյցերը, այդ շարժումները զսպել, յապաղեցնել, զանոնք աւելի պատեհ վայրկեանի վերապահել, եւ անոնց համար աւելի գործնական ծրագիր մը ունենալ • «Դրօշակ»ը կը կարծէ թէ անհնարին էր, թէ հայ ժողովուրդը այն աստիճան «գանակը ոսկորին էր եկած որ ա՛լ վայրկեան մը չէր կրնար սպասել, եւ թէ բոլոր այդ շարժումները բնական, normal հետեւանքը եղան հայ ժողովրդին նիւթական ու հոգեկան կացութեանը • ես կը կարծեմ թէ, որչափ ալ իրօք անհանդուրժելի եւ գարշելի ըլլար Հայոց կացութիւնը, հայ ժողովուրդը կրնար դեռ սպասել, պատրաստուիլ, զօրանալ, կազմակերպուիլ, եւ քաղաքական յարմար վայրկեանի մը՝ մէջանդ նետուել իր ազատագրումը ձեռք ձգելու համար • վերջին ցոյցերը anormal դէպքեր եղան (այս կէտը ստուգած եմ բնիկ Հայաստանցիներէ) : արուեստականօրէն կազմակերպուած՝ երիտասարդ, խանդավառ, գաղափարաւոր եւ անխորձ վարիչներու ձեռքով, եւ սա քաղաքական սխալին վրայ կրթնած՝ թէ «կը բաւէ ո եւ է հայկական շարժում մը ըլլայ, Հայու արիւն թափի, եւ Անգլիան պիտի միջամտէ ու Հայութիւնը պիտի ազատագրուի : » Երբք չեմ մտածած, երբք չեմ ըսած որ ստրուկ ժողովուրդ մը պէտք է ընդունի իր վիճակը, պէտք է յաւիտեան նաւը կրնայ իր տկարութեանը գաղափարէն ջախջախուած • ստրուկ ժողովուրդ մը որ կ'ընդունի, որ կը համբերէ, որ ազատման իտէալ մը մը չունի, որ չի պատրաստուիր դիմադրութեան, որ յանձն չ'առնէր զոհաբերութիւնը, մնաւած ժողովուրդ մըն է • բայց ատկից չի հետեւիր որ պէտք է խակ ու անհաշիւ յանդգնութիւններով հազճեպել ու վտանգել ապագային կարելիութիւնները : Հայ ժողովուրդը դեռ ոչ նիւթապէս, ոչ հոգեպէս պատրաստ չէր այդ խոշոր ճիգը փորձելու (եւ ատոր ապացոյցը ունեցանք այն երեւոյթին մէջ որով, քանի մը տասնեակ առիւծախիտ երիտասարդներէ զատ, ամբողջ հայ ժողովուրդը, ամէն տեղ, բաց ի Զէյթունէն, առանց ո եւ է դիմադրութեան ջարդուեցաւ) : Նմանապէս՝ քաղաքական ընդհանուր կացութիւնը դեռ հետու էր հայկական խնդրոյն համար հասունցած ըլլալէ • Եւրոպայի կառավարութեանց մօտ հայկական դատը աննշան մանրամասնութիւն մըն էր, իսկ Եւրոպական ժողովուրդներուն համար՝ Հայը անձանօթ տարր մը • ու միակ երկիրը, Անգլիան, ուր «մասնաւոր շրջանակի մը մէջ» կը զբաղէին Հայերով, չէ թէ

(*): Եւ հոս դիտել պիտի տամ որ «Դրօշակ»ի յօդուածագիրը Գերմանացիներուն կարծիքը զանց առած է յիշելու : Խօսքս Թրքասէր Գերմանացիներուն վրայ չէ, որոնք Հայը տեսակ մը Հրէայ կը նկատեն եւ կ'ատեն • Ե ոչ իսկ կ'ակնարկեմ լիպնիթ ընկերվարականին պէս մեծ անաշու մտքի մը, որ հայ յեղափոխականները «Թուսոյ դորձիքները» կը հռչակէ • Խօսքս գերման հայասերներուն վրայ է, այն խումբ մը ազնիւ անձնաւորութեանց որ Գերմանիոյ մէջ հայապաշտպան հոյակապ պայքար մը կը մղեն, որոնք երկու Շարթաթերթ կը հրատարակեն միմփայն • Հայոց խնդրոյն նուիրուած, որոնք երկու միլիոն մարք շրջեցին Հայաստանի կարօտեալներուն եւ 8—10 որբանոց բացին՝ որոնց մէջ կ'ուզեն հայ որբերը «կրթել իբրեւ Հայ» • ահաւասիկ ինչ կը գրէր այդ հայասերներէն մին ընդարձակ յօդուածի մը մէջ որ երեւցած է «Tägliche Rundschau» թերթին 1898 Գեկտեմբերի 289, 294, 299 թիւերուն մէջ՝ ... Ասոնց (հայկական գաղտնի միութիւններուն) նպատակն էր հայ ժողովուրդը պատրաստել եւ յաւաք բերել Եւրոպական միջամտութիւն՝ 61րդ յօդուածին համեմատ • Երիտասարդ մոլեւանդները, որոնցմէ գրեթէ տարածերթօրէն կազմուած էին այդ ընկերութիւնները, կ'աշխատէին ժողովուրդը «լուսաւորել» իր երաւունքներուն մասին ... Իրենց ծրագրին զլխաւոր կէտն էր Եւրոպայի ուշադրութիւնը գրաւել • այդ նպատակով անոնք զանապտն մանր խառնակութիւններ կը յարուցանէին եւ թուրքերու վայրագութեանց տեղի կուտային, որովհետեւ համոզուած էին որ, գոնէ Անգլիայէն դուրս, Եւրոպական մամուլին վրայ անկարելի էր ուրիշ կերպով անմիջական ազդեցութիւն գործել : Երիտասարդ Հայութեան այս քայլը յիմարութիւն էր (Thorkheit) • ո եւ է մտածող մարդ կրնար դիւրութեամբ ըսել թէ իրերու կացութիւնը անկարելի կը դարձնէր այդ ճամբով նպատակի մը հասնիլը, եւ թէ ընդհակառակն հարկաւոր էր սպասել Հայաստանի համար աւելի բարեպատեհ քաղաքական ընդհանուր կացութեան մը : Այս իմաստութիւնը, որքան ալ դիւրին ըլլար, պակեցաւ կըրքոտ հայ երիտասարդութեան մէջ, ինչպէս պակեցաւ նպատակաւորմարութիւնը եւ հանդարտ դատողութիւնը գերման երիտասարդութեան մէջ, որ Բարիզէն յետոյ 814ին ֆարսպատի որոշումները յաւաք բերաւ) :

«հայասեր» էր, այլ «թրքասեր եւ հակառուս» (ինչ որ միեւնոյն բանը ըսել չէ), երբեք չէր խոտացած Հայ ժողովրդին մասնաւոր պաշտպանութիւն (բաց ի մէկ քանի անհատներու պղատոնական ճտեղծէն եւ մասնաւոր մամլոյ մը կարգ մը յողուածներէն) եւ աւելի թուրքիան պահպանել ու շահագործել կ'ուզէր Ռուսին զէմ քան շահ ունէր Հայը թուրքին զէմ պաշտպանելու : Քանի մը հայ անհատներ են, — ուսանողներ, հրապարակագիրներ, եւն—որոնք, այս այնքան անբաւական ու խախուտ *donnée*ներուն վրայ հիմնուելով, զրգեցին հայ ժողովուրդը քաղաքական նպատակ ունեցող շարժում մը սկսելու, արդ, ինչպէս որ կրցան այդ շարժումը զրգել եւ կազմակերպել, այնպէս ալ կրնային (ես համոզուած եմ) ժողովրդին գեղոնութիւնը, յուսահատութիւնը սանձել, անոր ուժը խաացնել, եւ գործունէութեան համար զայն սպասեցնել պատեհ ժամուն. կրնային՝ եթէ լրջօրէն ուսումնասիրած ըլլային կացութիւնը : Եւ կ'ուզեմ որ լաւ գիտեն թէ «քաղաքական նպատակ ունեցող շարժում» կ'անուանեմ այդ շարժումները . արդ, նազարբէկի «Հնչակ»ը «քաղաքական»էն աւելի «ընկերական» խնդիր մը կը տեսնէր հայկական հարցին մէջ, եւ ատի այնքան սխալ որքան վնասակար շփոթում մըն էր . հայ *prolétaariat*ին թուրքիոյ ամէն կողմը հայ կամ թուրք վաշխատուէն կեղեքուիւն ու շարաչար շահագործուելը «մարդկային հարց մըն է», հայ ժողովրդին ուշադրութեանը արժանի, եւ որ կրնայ ու պարտի իր բարեփոխման համար մասնաւոր ճիգերու գործունէութիւն մը յարուցանել, բայց այդ չէ «հայկական խնդիր» ըսուածը, այն զոր կ'ըմբռնէ ազգը իր սրտին խորէն. «հայկական խնդիրը» հայ ժողովրդին համար բազմաւն է ունենալ աշխարհիս մէջ անկիւն մը ուր հայ ցեղը իբրեւ ազատ եւ ինքնուրոյն ցեղ կարենայ ապրիլ ու զարգանալ . «հայկական խնդիրը» հայ ժողովրդին համար իսկականապէս «ազգայնական» խնդիր մըն է : Եւ նոյն իսկ ըստ Քարլ Մարքսի, ազգայնական փուլը կը կանխէ ընկերավարականը : Հայը որ կը կեղեքուէր թէ՛ իբրեւ մարդ՝ հայ կամ թուրք վաշխատուներէն, եւ թէ՛ մասնաւորապէս իբրեւ Հայ թուրքէն ու Քուրդէն, պարտէր նախ իր ճիգը կեդրոնացնել իր «ազգութիւնը» փրկելու, եւ յետոյ՝ ազատ ազգ մը ձեւանալէն ետքը՝ կրնար ընկերական պայքարին անցնիլ : «Հնչակ»ի վարիչ խումբին «ընկերավարական» գաղափարներով տոգորուած մտքերը շփոթեցին : Երկու գործերը, եւ ատոր համար է որ չգիտցան սպասել, ու չգիտցան կեդրոնացնել ու սահմանագծել հայկական շարժումը : Ազգ մը, որ իրեն նպատակակէտ ունի «ազատութիւն»ը ձեռք ձգել, այդ գերապոյն նպատակին սիրոյն համար յանձն կ'առնէ, հակառակ ամենէն գարշելի տառապանքներուն, սպասել, — որովհետեւ յախուռն շարժում մը կրնայ երբեմն վերջնապէս ջնջել ամէն յոյս : Սպասել զիտնալը, ուժերը ժողովելը եւ խտացնելը, ճիգը յարմար վայրկեանին վերապահելը, «քաղաքական» այսպիսի ծրարչի մը համար ոչ միայն վատութիւն չէ, այլ «հայրենասիրական յատկութիւն» մըն է, կը նշանակէ ուժ, գիտակցութիւն, որոշ կամք ունենալ : «Հնչակ»ի խմբագիրները ըսին թուրքիոյ ամէն կողմերը գտնուող ամբողջ հայ ժողովրդին՝ «Ոտքի ելէք ձեր բռնաւորներուն, ձեր վաշխատուներուն գէմ», ինչպէս որ Յրանասայի մէջ ժողով մը նոյն կողմ կ'ուզէ Յրանասայի բոլոր գործաւորներուն : Յոյները, որոնց կացութիւնը կը նմանէր մերինին, աւելի քաղաքագէտ եղան, «հայրենասիրական» որոշ գործունէութիւն մը ունեցան . փոխանակ մտքերնէն անցընելու ոտքի հանել Պոլսոյ, Իզմիրի, Փոքր Ասիոյ բոլոր Յոյները որոնք նոյնչափ կը տառապէին որչափ Յունաստանիները, իրենց ամբողջ ճիգը կեդրոնացուցին Յունաստանի մէջ ուր արտաքին ու ներքին կարելիութիւնները, հաւանականութիւնները, եւ իրենց սեպհական ուժերը ամենէն աւելի շեշտուած էին : Եւ չեմ գիտեր թէ ինչո՞ւ «Երօշակ»ը «հակայեղափոխական», «հակահայրենասիրական» անուանելու պիտի համարձակի այսպիսի քննադատութիւն մը : Միջքիւ վիչ որ նոյն իսկ իր բանաստեղծութիւններովը անգիտակցաբար զրգոյն պատճառներէն մէկը եղած էր 1830ի Լեհական ապստամբութեան, ցաւ զգաց երբ Հոռոմի մէջ գտնուած միջոցին իմացաւ այդ ապստամբութեան պայթիլը . «Միջքիւ վիչ», կը գրէ Լատիւլաս Զամոյսքի կոմսը իր «Յիշատակ»ներուն մէջ, կը պարսաւէր անխորհրդածեալ խիզախանքները վարսովիոյ ընդդիմադիր կուսակցութեան, որ յայտնապէս այն ատենուան Յրանասային շողակրատ խորհրդարանականութեան մէջ օրինակ կը փնտռէր . կը ցաւէր տեսնելով անհաւասար, անհարկին պայքար մը՝ ճակատադրականապէս աղէտքի յանգելու սահմանուած : Իր քաղաքագիտական փորձառութիւնը կը զղէր խորունկ, իրական եւ խզճամիտ հայրենասիրութենէ մը որ զինքը իրեն

Ահաւասիկ ինչ որ երբեք պիտի չզգարիմ ըսելէ , որովհետեւ վտանգը տեսնողին համար պարտք մըն է վտանգը ցուցնել : Աշխարհիս բոլոր Շարժումները , իրենց բոլոր ուղիներովը , կրնան զիս ներկայացնել այնպէս ինչպէս կ'ուզեն . վարժութիւն չունիմ զիս ուրիշին որակուածն ճանչնալ . ես զիս գիտեմ , եւ այդ կը բաւէ . ու գիտեմ որ «Շարժում»ի կարծածէն շատ աւելի թուով Հայեր կան , եւ ամենէն ազնիւները , որ հասկցած են ինչ որ ըսել կ'ուզեմ : Յայտարարել թէ վարժապետեանի ու Բաֆֆիի պէս ազգասէրներու , Ժիրայրի , Բաբկէնի եւ Աւետիսեանի պէս քաջերու յիշատակը նախատած եմ , անարգ ու ծիծաղելի ստուծիւն մըն է՝ ապուշներ չփոթեցնելու սահմանուած : Ներսէսին ու Բաֆֆիին գործը ծայրէ ի ծայր անթերի չգտնելը չի նշանակեր այդ անձերուն կատարած կարեւոր դերը ուրանալ եւ մանաւանդ բնաւ չի նշանակեր անոնց հակառակորդ բանակին՝ թրքասէր գարշելի էֆէնտիներու՝ քաղաքականութիւնը նախընտրել : Նաբոլէոնին ամենէն խանգաւառ հիացողները անգամ այդ վիթխարի գործիչին ամեն ըրածները անախալ չեն գտներ : Կոյր հիացումները ամուլ ու նոյն իսկ վնասակար են . մեր սիրած մարդոցը գիտնալու ենք բուն արժանիքը զանազանել թերութիւններէն : Բաֆֆի հայ ժողովրդին բարոյական վերանորոգման ամենէն հզօր վարպետներէն մէկը եղաւ , ու այդ քաղաքական միտք չունէր , եւ չգիտցաւ (ինչ որ Մերենց եւ ուրիշ արեւմտեան Հայեր զգացին վայրկեան մը , ինչպէս եւ մեծ Մելիքոֆը) նշանակել գործունէութեան այն որոշ շըրջանակը ուր Հայը ամենէն աւելի հաւանականութիւն ունէր իր քաղաքական նպատակին հասնելու : վարժապետեան իր խորհրդականներուն հետ ստեղծողն է «հայկական խնդրոյն» իբրեւ քաղաքական հարց , բայց Պերլինի վեհաժողովին ժամանակ ես կը կարծեմ թէ ան չգիտցաւ այդ մեծ առիթէն քաղել իր ազգին համար այն ամբողջ օգուտը որ կարելի էր : Իսկ Ժիրայրները , Բաբկէններն ու Աւետիսեանները պատիւն ու գեղեցկութիւնն են մեր ցեղին . անոնք կը ներկայացնեն ամենէն բարձր եւ ամենէն մաքուր ձեւը զոր մարդկային Կորովը կրնայ ըզգենուլ . քանի որ Գաղափարի մը յաղթանակին համար գիտցան Մահը արհամարհել : Բայց ատի պատճառ մը չէ որ այդ զինուորներուն հիանալի գեղեցկութիւնը զիս ստիպէ վարիչներուն յատակազիծը ճիշդ գտնելու : Իմ ամբողջ պայքարս յատակազիծին դէմ է : Պայքարս պիտի շարունակեմ անվկանդ : Ազգ մը , անհատ մը այն ատեն միայն կը յաջողի , երբ գործնական յատակազիծ մը ունի . առանց գործնական յատակազիծի , անհատական կտու հաւաքական ամենէն մեծ յանդգնութիւնները ուրիշ բան չեն ըլլար բայց եթէ գեղեցիկ գոհողութիւններ որոնք իրենց նպատակին վնաս կը բերեն . այդ պարագային՝ մարդ պարտաւոր է խոնարհիլ անձնագոհներուն ճիշդ անհատական շքեղութեանը առջեւ , եւ միեւնոյն ատեն զանոնք մղող յատակազիծն ու զայն գծողները զատապարտել (անոնց համար որ իրենց պանկին մէջ «ուղեղ» ըսուած գործարանը ունին , այս մտածելու եղանակը , ու եւ է հակասութենէ զերծ , գիտականապէս ճիշդ է) : Խնդիրը , միակ խնդիրը յատակազիծին վրայ է : Հերիք է որքան բացազանչութիւններու գոհ ըրինք մեր ժողովուրդը : Յեղափոխութիւն մը՝ զգացման երեւոյթ մը չէ լոկ , հաշիւ մըն է միանգամայն , գործ մըն է : Ուսումնասիրեցէք Իտալիոյ վերականգնումին պատմութիւնը : Ունենալով հանդերձ անհունապէս աւելի բարձր ուժեր , պաշտպանութիւններ եւ յաջողման հաւանականութիւններ , Իտալացիք իրենց պայքարին մէջ զրին անարպիկութիւն մը՝ այնքան սքանչելի որքան իրենց քաջութիւնը . եւ առանց Քաւուրին հրաշալի կերպով վարպետորդի եւ ձկուն զիւանագիտութեանը , Իտալացի հերոսներուն ամբողջ ճիգը կրնար ի գերեւ ելլել : Արդ ինչ որ ես կը բաղձամ , կ'երագեմ ու կը քարոզեմ՝ առաջին վայրկեանէն ի վեր , ճիշդ այն է որ Քաւուրի ուղղութեանը գոնէ ստուեցր ունենանք մեր մէջ , մենք որ՝ անաւորապէս դժուարին խնդիր մը ունենալով՝ ուրիշ բոլոր ժողովուրդներէն աւելի պէտք ունինք ճարպիկութիւնը քաջութեան միացնելու : Քաւուրին բարձր հեղինակութիւնը մէջ բերելով , ու եւ է ակնարկութիւն չեմ ընելու եւ չեմ կրնար ընել : Մեր ամբողջ կէս դարու ազգային գործունէութեանը մէջ , մեր գործիչները ոչ միայն չեն ունեցած Քաւուրին նոյն իսկ հեռաւորապէս քաղաքատուելիք սեւէ դէմք , այլ եւ — այս է դիտուելու կէտը — ոչ իսկ ձգտումը ցուցուցած են այդ սարը ունենալու : Անշուշտ Ներսէս եւ իր գործիչները «գիւանագիտական» ուղղութեամբ գործել ուզած են եւ մեծ զիւանագէտի համբաւ ալ չինած են մեր մէջ , բայց անոնք զիւանագիտական ամենէն մեծ սխալը գործած են կարծելով թէ միմիայն զիւանագիտութեամբ կա-

րելի է հայկական խնդիրը լուծել, եւ նոյն իսկ իրենց դիւանագիտական գործունէութեանը մէջ ոչինչ ցոյց տուած են որ կարենայ Քալուրը յիշեցնել: Իսկ՝ վերջին շարժումներուն մէջ մեր գործիչները ոչ միայն քալուրեան ձգտումը չեն ունեցուց, այլ ասած եւ արհաւիրեցած են զայն. ինզճ Հայաստանցիները, «Հնչակ»ը կարգալով, կ'երեւակայէին թէ յեղափոխական վարիչները ամենասերտ յարաբերութեանց մէջ էին Կլատաթոնին, Սուլպէրիին կամ Կալլէսի իշխանին հետ, մինչդեռ նազարբէկ եւ իր ընկերները Սթերնիաք ոչնչականին պէս ինքնին շատ յարգելի բայց մեր դատին համար շատ քիչ օգտակար եւ նոյն իսկ վնասակար անձնաւորութիւններու հետ միայն յարաբերութիւն ունէին: Մեր գործիչները կը մտածէին (եւ իրենցմէ ոմանք կը մտածեն դեռ) թէ առանց ո եւ է դիւանագիտական նախապատրաստութեան, յանկարծական մէկ քանի ցոյց սարքելով, պիտի կրնան Եւրոպան ստիպել միջամտութեան, եւ թէ այդ միջամտութիւնը պիտի նպաստաւոր ըլլայ Հայերուն: Այսքան երկարօրէն պիտի չժամրանայի այս կէտին վրայ, եթէ չտեսնէի որ մինչեւ այսօր միեւնոյն մտաւոր վիճակը, միեւնոյն ձգտումը կը տիրէ մեր գործիչներուն եւ իրենց օրկաններուն մէջ (եւ արդէն սխալ մըն ալ զոր կը գործեն ոմանք, սա է որ կ'երեւակային թէ հիմա դեռ ատենը չէ քննադատելու, քանի որ գործունէութեան մը կրակոտ շրջանին «մէջտեղ» ենք. անոնց համար որ կը կարծեն թէ սխալի մը մէջ մտած, թաթխուած, ընկղմած է ազգը, հիմա առաւել քան երբեք ատենն է քննադատելու, որպէսզի այդ սխալ ճամբով ազգը չշարունակէ քալել, եւ որպէսզի՝ դեռ ամէն բան չկորսուած՝ կարենայ ուղիղ ճամբան մտնել եւ անկից ընթանալ): Այսքան դեռ մինչեւ այսօր այդ նոյն ձգտումը կը մնայ մեր գործիչներուն մէջ, որ «Դրօշակ»ը, «Շարժում»ը եւ ուրիշ թերթեր «վատութիւն» բառով թարգմանեցին իմ «խոհմտութիւն, շրջահայեցութիւն, ճարպիկութիւն» բառերս, եւ կը շարունակեն, ամենէն սարսափելի դասէն յետոյ զոր ազգը կրեց, միեւնոյն անհաշիւ եւ յախուռն յանդգնութեամբ գործելու ուղղութիւնը ջատագովել: Հոտ է վտանգը: Եւ այդ է մեր գործիչներուն ամենէն խոշոր սխալներէն մէկը: Տկարին հաար, որ իր իրաւունքին զօրութիւնն ունի եւ անձնագործութեան ուժը, բայց որ նիւթապէս անկարող է դէմ առ դէմ չափուել իր բռնաւորին հետ, «յեղափոխական» անհրաժեշտ յատկութիւն մըն է, ամենասուր «դէնք» մըն է նարպիկոսիւնը. անոնք որ յաջողման այդ գործիքը զանց կ'առնեն, եւ անհամեմատական ու ապահովապէս ապարդիւն յանդգնութեանց կը մղեն ժողովուրդը, յոռի յեղափոխականներ, յոռի հայրենասէրներ են. եւ երբ այդ բանը կ'ընեն առանց իրենք զիրենք ալ վտանգին մասնակից ընելու, առանց իրենք ալ անձամբ կրակին մէջ նետուելու, «ոճրագործներ» են:

Այսպէս կը մտածէ, ինծի հետ, Պ. Ամիրջարէ Զիրբիանի, զոր պատիւ ունիմ ճանչնալու, ոչ թէ նամակներով, այլ անձնապէս, եւ որ յեղափոխութեան վարպէս մըն է:

* *

Մենք ամենքս մեր մտքէն վայրկեան մը պէտք չէ հեռացնենք այն ահաւոր չարիքը զոր մեզի հասուց թուրք իշխանութեան գարշելի, հրէշաւոր, ամօթալից բարբարոսութիւնը: Հայկական ջարդերէն յետոյ, այլ եւս անհնարին է որ Հայն ու թուրքը կարենան մոռնալ ինչ որ անցաւ իրենց միջեւ: Ոճիր մը կայ երկու ցեղին մէջտեղը, եւ ամենէն հսկայական ոճիրը մարդկային պատմութեան: Ո եւ է Հայ որ մոռնայ մեր մորթուած եղբայրներուն, մեր սուրբի ծայրն անցուած երախաներուն, մեր անպատուած մայրերուն, մեր բզքտուած քոյրերուն յիշատակը, հրէշ մըն է այնքան նողկալի որքան Համիտը: Երիտասարդը որ կորով ունի եւ մտքի թարմութիւն, հարուստը որ նիւթական ուժ ունի, հմուտը որ գաղափարներ ու ծանօթութիւններ ունի, ամենքն ալ պարտաւոր են մեր ազգային գոյութեան փրկումին հարցը իրենց գլխաւոր, իրենց միակ նպատակը դարձնել, եւ եթէ չմտածեն ատոր, եթէ այդ նպատակով ո եւ է գոհողութիւն յանձն չառնեն, «մարդ» անունը կրելու արժանի չեն: Մենք վրէժ մը ունինք լուծելու, եւ մեր էութեանը ամբողջ ուժովը ձգտելու ենք որ կարենանք զայն լուծել. մեր վրէժը պիտի լուծած ըլլանք այն օրը երբ յաջողինք մեր պայքարին մէջ յաղթական ելլել, երբ յաջողինք ապացուցանել մեր զգուշի բռնաւորներուն ու Եւրոպային ալ, թէ մենք ջարդուելու սահմանուած ժողովուրդ մը չինք, թէ մենք ջնջուելու սահմանուած ազգութիւն մը

չենք . բայց որպէսզի կարող ըլլանք այդ ճիգին եւ որպէսզի հասնինք այդ արդիւնքին , անհրաժեշտ է որ պատրաստուինք , զօրանանք , գիտնանք ընելիքնիս , եւ ճիշդ վայրկեանին գործենք (ու թերեւս «վայրկեանը» կարծուածին չափ չ'ուշանար) : Աննպատակ , մասնական եւ անտեւական շարժումներ ուրիշ բանի չեն ծառայեր բայց եթէ , բռնապետին առիթ տալով իր վայրագութիւնները բազմապատկելու , մեր ժողովրդին ուժը նուազեցնել ապագան աւելի եւս վտանգել : Անհրաժեշտ է որ tactique մը ունենանք : Մեր թշնամին , բացի թուոյ մեծամասնութենէն , բացի կաղմակերպուած զօրքի ջախջախիչ առաւելութենէն , ունի միանգամայն «բարբարոսութեան» զարհուրելի զէնքը . պէտք է մտածենք թէ երկու անձնուէր աղու յանդգնութիւնը կրնայ երկու հարիւր կիներու , տղաքներու եւ ծերուհիներու մահուանը պատճառ ըլլալ :

Այս ամբողջ վերջին շրջանին մէջ , նիւթապէս անհուն կորուստ կրեցինք , բայց բարոյական շահ մը ունեցանք (ահաւորապէս սուղ գնուած , բայց իրական շահ մը) . քաղաքակիրթ «ժողովուրդները որ առաջ մեզ չեին նախնայ բնաւ , հիմամեզի համար ցաւակցական համակրութիւն մը ունին եւ ամօթ կը զգան իրենց անտարբերութեանը պատճառով մեզի դէմ կատարուած ոճիրը յիշելով : Այդ բարոյական ուժը գիտնանք գնահատել , զայն պահպանենք , ընդարձակենք , զօրացնենք , եւ անոր վրայ յենլով՝ պատրաստուինք , լուծեան մէջ , մեր ուրոյն , մեր ներքին , ուժը կազմակերպելու , ա'յն որ անհրաժեշտ է : Եւ ես առաջինն եմ փափաքող որ վերջապէս կարենանք աւելի քիչ ուժ ու ժամանակ մտնել մեր ներքին վէճերուն , եւ աւելի յսճախ ու աւելի բուռն ու տիրական կերպով յիշել թէ մեր ատելութիւնները պէտք է կեդրոնանան Երլտըզի հրէշին ու զայն արտաբողոք սեփմին վրայ :

Կ'աւարտեմ՝ կրկնելով բանաձեւ մը զոր արդէն գծած եմ նախորդ յօդուածներու մէջ , եւ որ՝ կը փափաքէի՝ ամէն հայ գործիչի նշանաբանը դառնար Պէտք չէ որ հայ ցեղը միմիայն Տաճկաստանի կործանմանը կրաւորական դործիքն ըլլայ եւրոպական շահերուն ի նպաստ . պէտք չէ որ Հայը իր արեւնովը օտար գրաւումներու համար միջնորդի դերը միայն կատարէ . այդ դերը մարդկային ընդհանուր քաղաքակիրթութեան տեսակէտով գեղեցիկ է , բայց ապերախ : Եւրոպական ուժերը երբ խուժեն եւ վերջնապէս տիրանան Տաճկաստանին , իրենց հզօր հոսանքին մէջ բնականօրէն պիտի քշեն տանին հայ ցեղը , որ այդպէսով պիտի դատապարտուի ձուլուելու եւ անհետանալու , եթէ այդ մեծ յեղաշրջումներուն ատենը՝ անի ինքնապահպան լուրջ ուժ մը չունենայ : Արդ մենք կ'ուզենք , եւ Յեղին դարաւոր , խորին , ներքին ըզձանքն է այդ , որ Հայը կարենայ ունենալ իր «ուրոյն» կեանքը իբրև ազգութիւն , եւ կարենայ դեր մը խաղալ պատմութեան մէջ՝ իր «ուրոյն» անունով . Հայը բոլոր մտաւորական ու բարոյական ճիւղերն ունի այդ դերը խաղալ կարենալու համար : Չվտանգենք այդ կարելիութիւնը աննպատակայարմար եւ տարածամ գոհարեթիւններով : Գիտնանք ամփոփուիլ , սեղմուիլ , կծկուիլ՝ Մեծ Ոստումին համար զոր պէտք է ընենք , որպէսզի ձեռք ձգենք աշխարհիս մէջ «անկիւն մը» ուր ազատ ըլլանք եւ որուն շնորհիւ մեր ցեղը իր ինքնութիւնը կարենայ պահպանել :

Ահաւասիկ ինչ որ «Անահիտ»ը ըսած է մինչեւ հիմա , ինչ որ պիտի չգաղբի յեղյեղելէ : Եւ ասի իր կատարած ու կատարելիք դերին մէկ բաժինն է , որ թերեւս ամենէն նուազ օգտակարը եղած պիտի չըլլայ :

Բարիկ , 17 հոկտեմբեր 1899

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ



Die erste Art der Bewegung ist diejenige, welche durch die
 Einwirkung der Schwerkraft bewirkt wird. Diese Bewegung ist
 eine gleichförmige Beschleunigung, d. h. die Geschwindigkeit
 nimmt mit der Zeit in gleichem Maße zu. Die Beschleunigung
 ist eine konstante Größe, die durch die Erdbeschleunigung
 g bezeichnet wird. Die Geschwindigkeit v nach der Zeit t ist
 durch die Gleichung $v = gt$ gegeben, wobei g die Erdbeschleunigung
 und t die Zeit ist. Die zurückgelegte Strecke s nach der Zeit t
 ist durch die Gleichung $s = \frac{1}{2}gt^2$ gegeben.

Die zweite Art der Bewegung ist diejenige, welche durch die
 Einwirkung der Federkraft bewirkt wird. Diese Bewegung ist
 eine harmonische Schwingung, d. h. die Auslenkung x nach der Zeit t
 ist durch die Gleichung $x = A \sin(\omega t + \phi)$ gegeben, wobei A die
 Amplitude, ω die Kreisfrequenz und ϕ die Phase ist. Die
 Geschwindigkeit v nach der Zeit t ist durch die Gleichung
 $v = A\omega \cos(\omega t + \phi)$ gegeben, und die Beschleunigung a
 nach der Zeit t ist durch die Gleichung $a = -A\omega^2 \sin(\omega t + \phi)$
 gegeben.

Die dritte Art der Bewegung ist diejenige, welche durch die
 Einwirkung der Drehkraft bewirkt wird. Diese Bewegung ist
 eine gleichförmige Drehbewegung, d. h. der Winkel θ nach der Zeit t
 ist durch die Gleichung $\theta = \omega t$ gegeben, wobei ω die Winkelgeschwindigkeit
 ist. Die Winkelbeschleunigung α nach der Zeit t ist durch die
 Gleichung $\alpha = \frac{d\omega}{dt}$ gegeben.

Die vierte Art der Bewegung ist diejenige, welche durch die
 Einwirkung der Reibkraft bewirkt wird. Diese Bewegung ist
 eine gleichförmige Bewegung, d. h. die Geschwindigkeit v nach der Zeit t
 ist durch die Gleichung $v = v_0$ gegeben, wobei v_0 die Anfangsgeschwindigkeit
 ist. Die Beschleunigung a nach der Zeit t ist durch die Gleichung
 $a = -\mu v$ gegeben, wobei μ der Reibkoeffizient ist.

Die fünfte Art der Bewegung ist diejenige, welche durch die
 Einwirkung der Luftwiderstandskraft bewirkt wird. Diese Bewegung ist
 eine gleichförmige Bewegung, d. h. die Geschwindigkeit v nach der Zeit t
 ist durch die Gleichung $v = v_0$ gegeben, wobei v_0 die Anfangsgeschwindigkeit
 ist. Die Beschleunigung a nach der Zeit t ist durch die Gleichung
 $a = -kv$ gegeben, wobei k der Luftwiderstandskoeffizient ist.

Die sechste Art der Bewegung ist diejenige, welche durch die
 Einwirkung der Corioliskraft bewirkt wird. Diese Bewegung ist
 eine gleichförmige Bewegung, d. h. die Geschwindigkeit v nach der Zeit t
 ist durch die Gleichung $v = v_0$ gegeben, wobei v_0 die Anfangsgeschwindigkeit
 ist. Die Beschleunigung a nach der Zeit t ist durch die Gleichung
 $a = -2\omega \times v$ gegeben, wobei ω die Winkelgeschwindigkeit der Erde ist.

ԲԱՑՈՒԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆԱՀԻՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Կը յիշեցնենք եւ կը շեշտենք թե

ԱՆԱՀԻՏԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Կ Ա Ն Ի Ի Կ Է

ԱՆԱՀԻՏԻ Առաջին տարեշրջանէն 70—80 հոգի կայ որ երկրորդ վեցամսեան զեռ չեն վճարած, եւ 150 հոգի որ, 12 թիւ ԱՆԱՀԻՏ կանոնաւորապէս ընդունելով եւ վար դնելով հանդերձ, տարեկանը չեն վճարած: Սյդ պարոններուն անունները հրատարակելու գոհեիկ միջոցին չպիտի դիմենք եւ կը սիրենք հաւատալ որ անոնք պիտի փութան վերջապէս իրենց բաժնեզինը վճարել կամ թերթերը ետ դարձնել:

Այս տասերկուերրորդ թիւը մեր կամքէն անկախ պատճառներով չափազանց ուշ լոյս տեսաւ: Անոնց որ ԱՆԱՀԻՏԻ հրատարակման մէջ պատահած մէկ քանի անկանոնութեանց մասին գանդատ յայտնած էին, կը պատասխանենք որ այդ անկանոնութիւնները արդիւնք եղան բաժանորդներու վճարման անկանոնութեանը: ԱՆԱՀԻՏը հիմնուեցաւ առանց ո եւ է զբաւազանի, եւ իր առաջին տարին կրցաւ լրացնել՝ ամենամեծ մասամբ շնորհիւ վճարուած բաժանորդագրութիւններուն: Սյժմ ունինք բաժանորդներու թիւ մը, որ լիովին կը բաւէ ԱՆԱՀԻՏԻ տարեկան ծախքը գոցելու: Կպարտ ենք հաստատելու որ ԱՆԱՀԻՏը այս արդիւնքը կը պարտի իրեն, եւ ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ: Բայց հրատարակման կանոնաւորութիւնը միշտ կախուած պիտի մնայ բաժանորդներու կանոնաւոր վճարումէն:

Ընդհանրապէս կը նախընտրենք որ բաժանորդները իրենց բաժանորդագրինը ուղղակի ԱՆԱՀԻՏԻ Տնօրէնին դրկին:

Մեր գործակալներէն կը խնդրենք որ դանձուցները շուտով կատարեն, եւ հաճին զանձուած գրամը անկեղծապէս մեզի հասցնելու բարի սովորութիւնը ստանալ:

Շատերը մեղի կը դիմեն գնելու համար մեր Ֆրանսերէն հրատարակութիւնները: Կը խնդրենք որ զանոնք եւ նե՛շտ փափաքողները հաճին ուղղակի դիմել Մեքսիկոն Տրուսէի գրավաճառանոցը:

Ահաւասիկ գրքերուն ցանկը եւ գրավաճառանոցին հասցէն.

- L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient, par A. TCHOBANIAN, avec une introduction par ANATOLE FRANCE 1 fr.
- Les Massacres d'Arménie, témoignages des victimes, (Traduction de A. TCOHBANIAN) avec préface de GEORGES CLEMENCEAU. 3 fr. 50
- Zeitoun, depuis les originaes jusqu'à la grande insurrection de 1895, par AGHASSI, traduction de A. TCHOBANIAN, avec préface de VICTOR BERARD. 3 fr. 50

Librairie du MERCURE DE FRANCE
15, RUE DE L'ÉCHAUDÉ-SAINTE-GERMAIN. — PARIS.

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անանիսը պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամերիկա) , 1 ֆր. 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 5 րուպլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2.50 րուպլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆՆԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր .

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ , յօդուած եւ բաժանորդագիրն զրկել՝

A. TCHOBANIAN

6 Place de l'Odéon

PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼ ՆԵՐԸ

ԹԻՖԼԻՍ

ՆՈՐ ՆԱՆԻՋԵՒԱՆ

ՌՈՒՍՃՈՒՔ

ՊՈՒՔՐԷՇ

ԴԱՒՐԷԺ

ԳԱՀԻՐԷ

ՆԻՒՆՈՐՔ .

ԲՐՈՒՏԷՆՍ (Ար . Այ . Ամերիկա)

ԷՍԹՈՒՅՆՆԵՐԸ (Մաս . , Ամերիկա)

ՌԻՍԹՆԸ (Մաս . , Ամերիկա)

Պ . Աղեքսանդր Թարխանեանց

Պ . Միհրան Թիւթչեան (Վարոնէժ)

Պ . Շահինկ Տէօքմէճեան

Պ . Արիս Լազար

Տր . Կ . Փաշեան

Պ . Աշոտ Սեդրաք

Պ . Պ . Կատարեան

Պ . Նազարէթ Թաթէոսեան

Պ . Մանուկ Պ . Գալստեան

Պ . Երուանդ Յակոբեան